

ՀԱՅԿԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԵՍ



2  
2023



*Հրատարակվում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*



*Հրատարակվում է Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ*

*Համարը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի աջակցությամբ*

**Խմբագրական խորհուրդ՝**

Տիգրան Թորոսյան	քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ (գլխավոր խմբագիր), t.tigran@yahoo.com
Գրիգոր Արշակյան Վահե Դավթյան	քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ, garshakyan@gmail.com քաղաքական գիտությունների դոկտոր, ԲՊՀ, vahe.davtyan@gmail.com
Լեւոն Զեքիեան	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Վասիլյանի արևելագիտության ինստիտուտ, Իտալիա zkybhs@unive.it
Արամ Թերզյան	քաղաքական գիտությունների թեկնածու, Եվրասիական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտ, ԱՄՆ, ԲՊՀ, aramterzyan@yahoo.com
Մալխազ Մացաբերիձե	քաղաքական գիտությունների դոկտոր, Թբիլիսիի պետական համալսարան, Վրաստան, Malkhaz.matsaberidze@tsu.ge
Անդրեյ Մեդուշևսկի	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարան, Ռուսաստան, amedushevsky@mail.ru
Եժի Յասկիերնիա	իրավաբանական գիտությունների դոկտոր, Յան Կոչանովսկի համալսարան, Լեհաստան, jerzyj@hotmail.pl
Պետրա Շտիկով	քաղաքական գիտությունների դոկտոր, Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարան, Գերմանիա, petra.stykow@lmu.de
Ռայներ Շուլց	պատմական գիտությունների դոկտոր, Էսսեքսի համալսարան, Մեծ Բրիտանիա, rainer@essex.ac.edu
Իրինա Սեմենենկո	քաղաքական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի ԳԱ, semenenko@imemo.ru
Ալբերտ Ստեփանյան Թալին Տեր-Մինասյան	պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ, bertstepanyan@gmail.com պատմական գիտությունների դոկտոր, ԻՆԱԼԿՕ, Ֆրանսիա, taline.terminassian@inalco.fr
Աննա Օհանյան	քաղաքական գիտությունների դոկտոր, Սթոունհիլ քոլեջ, ԱՄՆ aohanyan@stonehill.edu

ISSN 1829-4286

© Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ</b>	4
<b>ՀԵՏԵՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՏՈՐՄԱՑԻԱ</b>	
<b><i>Տիզրան Թորոսյան</i></b>	
Հայաստանի քաղաքական համակարգի ճգնաժամի հաղթահարման դժվարություններն ու հնարավորությունները	5
<b>ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ</b>	
<b><i>Շահեն Հարությունյան</i></b>	
Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը որպես Հայաստանի մասնատման «իրավական» հիմք և այլախոհության ձևավորման խթան	33
<b><i>Արփինե Եսայան</i></b>	
Ռուս-թուրքական մրցակցային/համագործակցային հարաբերությունների բնույթն ու հեռանկարները Հարավային Կովկասում	49
<b><i>Ֆլորա Միրզախանյան</i></b>	
Ռուս-թուրքական հարաբերությունները գազային հոսքերի ձևավորման համատեքստում	79
<b>ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ</b>	
<b><i>Մարիա Պետրոսյան</i></b>	
Ինքնորոշման հակամարտությունների ընթացքում պատերազմական գործողությունների վերսկսման հետևանքները կարգավորման գործընթացների վրա	97

## ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

«Հայկական քաղաքագիտական հանդեսը» քաղաքագիտական և քաղաքագիտությանն առնչվող միջգիտակարգային հետազոտությունների արդյունքներ ներկայացնող գրախոսվող գիտական հանդես է: Հանդեսում հրապարակվող հոդվածների հիմնական ուղղություններն են՝

- Հետխորհրդային տրանսֆորմացիա. քաղաքագիտական և միջգիտակարգային հիմնախնդիրներ,
- Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթաց և Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության հիմնախնդիրներ,
- Հակամարտությունների կարգավորում և լուծում,
- Պետական կառավարում. ժողովրդավարացման դժվարություններ և հեռանկարներ,
- Միջազգային հարաբերությունների հիմնախնդիրներ և հաշտեցման գործընթացներ,
- Ինքնության պահպանման և միջազգային ինտեգրման զարգացման դիլեման,
- Հայրենիք-սփյուռք. փոխշահավետ հարաբերությունների ձևավորման հնարավորություններ ու խոչընդոտներ:

Տպագրության են ընդունվում այլ հանդեսներում չտպագրված (օրիգինալ), գիտական նորույթ ունեցող հոդվածներ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Հանդեսում տպագրության ներկայացված բոլոր հոդվածներն անցնում են փորձագիտական գնահատման փուլով՝ խմբագրի սկզբնական գնահատման և առնվազն երկու փորձագետի եզրակացությունների հիման վրա:

**Խմբագրության հասցեն՝ Երևան, Թումանյան 42, ԲՊՀ, սենյակ 202**

**Հեռախոս՝ 530272-208, 091402731**

**Էլեկտրոնային փոստ՝ t.tigran@yahoo.com**

**Կայք՝ www.arjps.org**

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ

DOI: 10.19266/1829-4286-2023-02-05-32

**Հայաստանի քաղաքական համակարգի ճգնաժամի  
հաղթահարման դժվարություններն ու հնարավորությունները**

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հետխորհրդային տրանսֆորմացիայի ավելի քան երեք տասնամյակի ընթացքը վկայում է, որ այն շատ ավելի բարդ գործընթաց է, քան թվում էր սկզբում, և հետկոմունիստական երկրների ժողովրդավարացումը պահանջում է տևական, հետևողական ջանքեր ու առաջադրում բարդ մարտահրավերներ: Անգամ ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրում ընդգրկված հետխորհրդային պետությունները պարբերաբար բախվում են քաղաքական համակարգի ճգնաժամերի, որոնց պատճառը կուսակցությունների չկայացածությունն է: Դա պետությունների համար ունենում է խիստ վտանգավոր հետևանքներ հատկապես աշխարհաքաղաքական մրցակցության եզրափակիչ փուլում, երբ ազդեցիկ պետություններն իրենց նպատակներին հասնելու համար ցանկացած գնով փորձում են օգտագործել խոցելի պետությունների վրա իրենց ազդեցությունը: Հետազոտությունները վկայում են, որ թեև այդ ճգնաժամերն ունեն առանձնահատկություններ ու տարատեսակ պատճառներ, սակայն դրանց առավել կարևոր թերությունն ընդհանուր է՝ կուսակցությունները կարիք ունեն ինստիտուցիոնալացման: Հողվածում առաջարկվում է Հայաստանի առանձնահատկությունները հաշվի առնող կուսակցությունների ինստիտուցիոնալացման հարացույց, որի կիրառումը կմեծացնի երկրի անվտանգությունը: Դա հնարավորություն կտա հաղթահարել երկրի քաղաքական համակարգի ճգնաժամը, ինչպես նաև դիմակայել «գունավոր» հեղափոխությունների միջոցով Հայաստանը որպես տարբեր աշխարհաքաղաքական նպատակների իրականացման գործիք օգտագործելու տարատեսակ նկրտումներին:

**Բանալի բառեր**

Կուսակցություններ, «գունավոր» հեղափոխություններ, ինստիտուցիոնալացում, ժողովրդավարացում

## Նախաբան

2018թ. տեղի ունեցած իշխանափոխությունն ունեցավ աննախադեպ աղետալի հետևանքներ հետխորհրդային Հայաստանի ընթացքի վրա: Երկիրը հայտնվել է արատավոր շրջանում, որից տևական ժամանակ չի կարողանում դուրս գալ: Թեև 2020թ. Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կապիտուլյացիայի հասցրած իշխանության թե ներքին, թե արտաքին ասպարեզներում վարած ապաշնորհ քաղաքականությունը դրանից հետո էլ հանգեցրել է ահռելի մարդկային, տարածքային, բարոյական ու նյութական կորուստների, հասարակության շրջանում իշխանության վարկանիշի շարունակական կտրուկ անկում է արձանագրվել (2021թ. խորհրդարանական ընտրություններում ստացել են ընտրողների ձայների մոտ 26 տոկոսը), սակայն այդ իշխանության հեռացման փորձերը (առաջինը՝ 2020թ. նոյեմբերի 9-ից հետո ծավալված բողոքի գործողությունների ձևով, երկրորդը՝ 2021թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո) անհաջողության են մատնվել: Այդ ամենի պատճառների վերլուծությունը դեռևս 2021թ. վկայում էր<sup>1</sup>, որ պետական կառավարման ոլորտում առկա է համակարգային ճգնաժամ: Հաջողություն չունեցավ նաև իշխանափոխության հաջորդ փորձը, թեև ավելի լուրջ նախադրյալներ դժվար է մատնանշել. իշխանության ձախողումները «հետևողականորեն» շարունակվում էին բոլոր ոլորտներում, անգամ այնպիսի կենսական հարցերում, ինչպիսիք են 2023թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջական հայաթափումը, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի զգալի մասի զավթումը Ադրբեջանի կողմից և այլն: Իրադարձությունների հետագա զարգացումը վկայում է, որ

<sup>1</sup> Թորոսյան Տ., Յո՞ւ երթաս, Հայաստան-2021. Խորհրդարանական ընդդիմության երկակի առաքելությունը, 17 հուլիսի, 2021 թ., <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=237>

հասարակության ճնշող մեծամասնությունը բացահայտորեն դժգոհ է իշխանությունից և վերջինս դիրքերը պաշտպանվում են միայն ուժային կառույցների (ներքին զորքեր, դատարաններ և այլն) կիրառած կոպիտ, ապօրինի մեթոդներով: Այդուհանդերձ, ընդդիմությանը չի հաջողվում իշխանությունից հեռացնել իշխող քաղաքական ուժին, ինչը վկայում է, որ Հայաստանի քաղաքական համակարգը հայտնվել է ճգնաժամային իրավիճակում: Երբեմն, որպես խնդրի լուծման ճանապարհ, մատնացույց է արվում այն մեխանիզմների կիրառումը, որոնք օգտագործվեցին 2018թ. իշխանափոխության ժամանակ: Սակայն դա, լավագույն դեպքում, ծանր հետևանքներով հղի մոլորություն է, քանի որ, ինչպես ցանկացած «գունավոր» հեղափոխության ժամանակ, այն ժամանակ օգտագործված մեխանիզմները կառուցված են եղել ստի, կեղծիքի, աճաբարության, փաստերի նենգափոխման, հասարակությանը մոլորեցնելու, պառակտելու, պետական կառույցները կազմաքանդելու վրա: Հեղափոխական մտածելակերպից բխող նախկինի ժխտումը, այն ոչնչացնելու մոլուցքը ամբողջացնում է պատկերը:<sup>2</sup>

«Գունավոր» հեղափոխությունների<sup>3</sup> աղետալի հետևանքները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների (ՀՏԵ) համար չեն սահմանափակվում դրանց միջոցով ձևավորված իշխանությունների գործունեության արդյունքներով: «Գունավոր» հեղափոխության հաջող իրականացումն ինքնին վկայում է, որ քայքայվել են դեռևս լիարժեքորեն չկայացած պետական ինստիտուտները, վարկաբեկվել են պետության կառուցման ու կայացման հիմքում գտնվող սկզբունքներն ու արժեքները՝ իշխանության գալու այդ

<sup>2</sup> Նույն տեղում:

**Թորոսյան Տ.**, Կրկի՞ն՝ անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար: Տգիտությունը, կեղծիքն ու աճաբարությունը նոր աղետ են գուժում, 22 ապրիլի, 2022թ., <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=295>

<sup>3</sup>The Colour Revolutions in the Former Soviet Republics. Successes and Failures, Ed. Donnacha Ó Beacháin, Abel Polese, 2010, Abingdon and New York, Routledge, DOI <https://doi.org/10.4324/9780203848951>, **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.**, Ուր են տանում «գունավոր» հեղափոխությունների ճամփաները, *Հանրային կառավարում*, 2005, 3, 9-101:

Ճանապարհը ընտրած ուժերի տևական գործունեության և/կամ պետական կառավարման համակարգի բնականոն ընթացքի խաթարման հետևանքով: Այդ քայքայումը շարունակվում է նաև հեղափոխությամբ իշխանության եկած ուժերի կառավարման ընթացքում, քանի որ դրանց գործունեությունը հիմնված է այնպիսի տեխնոլոգիաների կիրառման վրա, որոնք ժխտում են սկզբունքների ու արժեքների դերը և հիմնականում ուղղված են հենց դրանց վարկաբեկմանմանը՝ ասպարեզն ազատելով «տեխնոլոգիական» մեխանիզմների համար: «Գունավոր» հեղափոխությունների առավել ադետայի հետևանքն այն է, որ իշխանության գալով դրանց ներկայացուցիչները ոչ միայն չեն առաջարկում պետության առջև ծառայած որևէ լուրջ խնդրի լուծում ու շարունակաբար բոլոր ոլորտներում ունենում են մեծ ձախողումներ, այլև իրենց բնորոշ «տեխնոլոգիական» մեխանիզմների կիրառմամբ շարունակաբար ջլատում են պետությունը՝ տկարացնելով ու կազմալուծելով պետական հաստատությունները՝ ավելի ու ավելի նսեմացնելով սկզբունքների ու արժեքների դերը: Արդյունքում էլ ավելի է թուլանում հասարակության ինքնապաշտպանական բնագործը՝ էապես նվազեցնելով սկզբունքների ու արժեքների հիման վրա գործունեությանը վերադառնալու կարողությունը: Հետևաբար «գունավոր» հեղափոխությունների ստեղծած կործանարար շրջապտույտը հաղթահարելու միակ հնարավորությունը սկզբունքների ու արժեքների վրա կառուցված գործընթացն է: Քանի որ խոսքն առաջին հերթին վերաբերում է քաղաքական գործընթացներին, ապա դա նախ պետք է տեղ գտնի դրանց շարժիչ ուժը կազմող կուսակցություններում՝ սկզբունքների ու արժեքների արմատավորման՝ ինստիտուցիոնալացման ճանապարհով<sup>4</sup>:

<sup>4</sup> **Huntington S.** (1965) Political Development and Political Decay. *World Politics*, 17, 3, 386–431. DOI: <https://doi.org/10.2307/2009286>

**Huntington S.** (1968) *Political Order in Changing Societies*. New Haven, CT: Yale University Press.



Պետք է արձանագրել, որ նման խնդրի լուծումը շատ բարդ է, քանի որ ինստիտուցիոնալացումն՝ առանց բավարար քաղաքական մշակույթի առկայության, այդ գործընթացի առաջնորդներից պահանջելու է քաղաքական կամքի դրսևորում, հրաժարում անգամ այնպիսի մեխանիզմների ու մոտեցումների կիրառումից, որոնք առնվազն անցյալի տևական ժամանակահատվածում ապահովել են առանձին հաջողություններ, սակայն համակարգային մարտահրավերների հաղթահարման ներուժ չեն ունեցել: Այդ իրավիճակների հաղթահարման համար պահանջվում է համապատասխան մասնագետների ներգրավում, ինչպես նաև քաղաքական համակարգի գործունեության այնպիսի մեխանիզմների ընկալում և կիրառում, որոնք նախկինում չեն կիրառվել ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ հետխորհրդային տարածքում:

Ստորև կներկայացվեն առաջարկվող լուծման հիմքերը, ապա կդիտարկվեն հայաստանյան պայմաններում դրա կիրառման հնարավորությունները:

### **Իրավիճակի նախադրյալները**

2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներն անակնկալ էին գրեթե բոլորի՝ թե ընտրողների, թե մասնակից քաղաքական ուժերի, թե մինչ ընտրությունները դրանց արդյունքների վերաբերյալ կանխատեսումներ անողների համար: Ակնհայտ էր, որ երեք տարվա ադետաբեր գործունեության, երկրի Մահմանադրության ու օրենքների բազմաթիվ ոտնահարումներով պետական կառավարման համակարգը, դատական համակարգը կաթվածահար վիճակի հասցնելու, ներքաղաքական կյանքում պառակտիչ քաղաքականության՝ ատելության քարոզի, յուրաքանչյուր հասարակության համար չափազանց վտանգավոր «նախկիններ»-«նորեր» քայքայիչ բաժանումների, արտաքին հարաբերությունները տգիտության, կեղծիքի ու աճպարարության վրա կառուցելու հետևանքով Արցախյան 44-օրյա պատերազմում արձանագրված կապիտուլյացիայի, սեռելի մարդկային, նյութական,

տարածքային կորուստներին, աննախադեպ բարոյա-հոգեբանական անկման արդյունքում ստեղծված համապարփակ, խոր ճգնաժամի<sup>5</sup>, ի հայտ եկած բազմաթիվ բարդ մարտահրավերների հաղթահարման հիմքերի ստեղծման նախապայմանը հայկական երկու պետությունները կործանման եզրին հասցրած քաղաքական ուժի հեռացումն էր իշխանությունից: Սակայն իշխանությանը հեռացնել ցանկացող քաղաքական ուժը նաև պետք է ունակ լինի լուծելու այն բազմաթիվ բարդ խնդիրները, որոնք ծառայած են աղետի ենթարկված պետության առաջ: Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի հայտարարությունը ստորագրելուց մի քանի օր անց արդեն ակնհայտ էր, որ շոկային իրավիճակը հաղթահարած իշխող ուժը որևէ միջոցի առաջ կանգ չի առնում՝ իշխանությունը պահելու համար: Ռազմական գործողությունների դադարեցումից հետո շատ արագ պարզ դարձավ, որ խորհրդարանական ընդդիմությունն անկարող է առաջնորդել ճգնաժամային իրավիճակի հանգուցալուծման գործընթացը: Չափազանց բարդ իրավիճակից դուրս գալու գործողությունները փորձեց կազմակերպել արտախորհրդարանական ընդդիմությունը: Թեև հաջողվեց այդ դրոշի ներքո հավաքել մի շարք քաղաքական ուժեր և շարժում ձևավորել՝ զանգվածային ճնշումների միջոցով իշխող քաղաքական ուժին իշխանությունից հեռացնելու նպատակով, սակայն այդ ընթացքում թույլ տրված մի շարք սխալներ (հատկապես այն պատճառով, որ հիմնական ընդդիմադիր ուժերը չունեին այդ կարգավիճակով գործելու փորձ, առկա էին կազմակերպական էական բացեր, և այլն) սասանեցին ընդդիմության նկատմամբ վստահությունը և պայքարն այդ փուլում վերջնական հաջողություն չունեցավ: Այդուհանդերձ, հաջողվեց ստիպել իշխանությանը՝ 2021թ. հունիսին հրավիրելու արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

<sup>5</sup> **Թորոսյան Տ.**, 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, 17 հուլիսի, 2020թ., <https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՉԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf>.

**2021թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները**

2021թ. ընտրությունները լիովին բացահայտեցին, որ, ինչպես հետխորհրդային մյուս երկրներում<sup>6</sup>, առկա է շատ լուրջ հիմնախնդիր՝ փլուզված է քաղաքական համակարգի առանցքը կազմող, անկախության վերականգնումից հետո այդպես էլ չկայացած բազմակուսակցական համակարգը:

2018թ. իշխանափոխությունն, ակնհայտորեն, մի շարք արտաքին ու ներքին հանգամանքների շարքում հատկապես բազմակուսակցական համակարգի չկայացածության հետևանք էր և, բնականաբար, չէր կարող նպաստել դրա առողջացմանը, հակառակը՝ ավելի խորացրեց այն: Այդ երևույթը ևս բնորոշ է գրեթե բոլոր հետկոմունիստական երկրներին: Արդեն 2014թ. մասնագետների համար նկատելի էր, որ, մասնավորապես, Ուկրաինայում ու Վրաստանում «գունավոր» հեղափոխությունները չլուծեցին այդ երկրներում առկա հիմնախնդիրներն ու չեն տանում դեպի այդ պետությունների կայացում ու ամրապնդում:<sup>7</sup> Ընդ որում, նման երևույթներ արդեն արձանագրվում են անգամ Արևելյան Եվրոպայի ԵՄ անդամ երկրներում, մասնավորապես, Լեհաստանում ու Հունգարիայում, որտեղ պոպուլիստական գաղափարներով իշխանության եկած քաղաքական ուժերը զարմանալի ճշգրտությամբ գործում են նույն տրամաբանությամբ՝ «գրոհում են դատարանները, ՋԼՄ-ները և վերահսկողական մարմինները, ժողովրդավարության ոչ ֆորմալ նորմերը՝ հանդուրժողականությունն ու բարեվարքությունը, հարձակվում են ընդդիմության վրա, պառակտում են հասարակությունը և խեղում են ազգային հիշողությունը՝ արդարացնելու համար իրենց քաղաքականությունը»<sup>8</sup>: Այդ փաստերն արձանագրող հոդվածի հեղինակը

<sup>6</sup> **Mierzejewski-Voznyak M. G.**, Party politics after the colour revolutions: party institutionalisation and democratisation in Ukraine and Georgia, *East European Politics*, 2014, **30**, 1, 86-104.

<sup>7</sup> Նույն տեղում

<sup>8</sup> **Grzymala-Busse A.**, How Populists Rule, *Polity*, 2019, **51**, 4 (October), 707-717

համարում է, որ նման դեպքերում պետության առողջացման համար «կուսակցությունների մրցակցությունը, և, մասնավորապես, կենսունակ և ուժեղ ընդդիմության առկայությունը, որն ընտրողներին առաջարկում է իրական այլընտրանք, ունի վճռական նշանակություն»:<sup>9</sup> Հետևաբար, այնպիսի իրավիճակներում, որում հայտնվել է ու շարունակում է գտնվել Հայաստանը, բացառիկ նշանակություն է ստանում ընդդիմությունը, որը պետք է ստանձնի երկու՝ «Հայաստանը խոր ու բազմազործոն ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու և առողջ քաղաքական համակարգի ողնաշարը համարվող կենսունակ բազմակուսակցական համակարգ ձևավորելու առաքելություն»<sup>10</sup>: Իհարկե, այդ առաքելության իրականացման լավագույն մեկնարկը կլինեք արտահերթ ընտրությունների արդյունքում իշխանափոխությունը, սակայն դա տեղի չունեցավ: Ավելին, իշխող քաղաքական ուժը ստացավ ընտրողների ձայների ամենամեծ բաժինը՝ 26 տոկոսը, ձևավորեց կառավարություն և շարունակեց կործանարար քաղաքականությունը: Հետևաբար ընդդիմության խնդիրն ու առաքելությունը մնում են նույնը: Մինչ դրանց մանրամասնումն ու իրականացման հնարավորությունների ներկայացումը, անհրաժեշտ է փորձել ձևակերպել ընտրությունների արդյունքների պատճառները: Դրանցից ամենակարևորը բազմակուսակցական համակարգի փլուզված վիճակն է կամ անգամ փաստացի բացակայությունը, քանի որ ընտրողները խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ ձայներ չտվեցին

1. երեք տարի գործած խորհրդարանական ընդդիմության երկու կուսակցություններին, թեև այդ երկու ուժերից մեկը մեծածավալ հասցեական օգնություն էր ցուցաբերել նրանց ու խոստանում էր հետագայում էլ դա անել,

2. մի շարք արտախորհրդարանական «քաղաքական ուժերի», որոնք իրենց վաղուց սպառել են կամ ստեղծվել են

<sup>9</sup> Նույն տեղում

<sup>10</sup> Թորոսյան Տ., ՅՈՒՆԵՍԿՕ, նշվ. աշխ.

ընտրությունների շեմին ու պարզունակ առևտրի նպատակներ են հետապնդում, ինչի բացահայտ ապացույցն է դրանց կլիենտելիստական<sup>11</sup> (հաճախորդային) արձագանքը իշխանության «համագործակցության» հրավերին:

Արձանագրված արդյունքների պատճառների շարքին կարելի է դասել նաև

3. հետխորհրդային տարածքի համար խորհրդարանական ընտրություններին ընտրողների ցածր (միջինից 10-15 տոկոսով պակաս) մասնակցությունը՝ իշխանության կողմից վարչական ռեսուրսի առավելագույն կիրառման պայմաններում,

4. ընտրությունների արտահերթությամբ պայմանավորված կարճ նախընտրական շրջանը,

5. մարզերում ընդդիմության խիստ սահմանափակ գործունեությունը,

6. ստի, կեղծիքի ու ատելության շարունակական քարոզչության երեք տարիների արդյունքում «նախկիններ» պառակտիչ գաղափարի խոր արմատավորումը, որի կիրառումը ակնհայտ արդյունքներ է տվել նաև եվրոպական որոշ երկրներում՝ որպես «լավ լոյալիստներ ու կոռումպացված և դավաճան օպոնենտներ»<sup>12</sup> բանաձև:

Կարող է թվալ, որ իրավիճակն անհուսալի է, քանի որ 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանությունը ստացել է խորհրդարանի տեղերի գրեթե 2/3-ը:

<sup>11</sup> **Cruz C. and P. Philip Keefer**, Political Parties, Clientelism, and Bureaucratic Reform, *Comparative Political Studies*, 2015, **48**, 14, 1942–1973. **Trantidis A.**, Clientelism and the classification of dominant party systems, *Democratization*, 2013. **Keefer Ph.**, Clientelism, Credibility, and the Policy Choices of Young Democracies, *American Journal of Political Science*, 2007, **51**, 4, 804-821. **Muno W.**, Clientelist corruption networks: conceptual and empirical approaches, *z Vgl Polit Wiss*, 2013, 7, 33–56. **Epstein Daniel . J.**, Clientelism Versus Ideology. Problems of Party Development in Brazil, *Party Politics*, **15**, 3, 335–355. **Kitschelt, & S. Wilkinson**, Patrons, clients, and policies. Cambridge, UK: Cambridge University Press. 2007. **Keefer Ph., & R. Vlaicu**, Democracy, credibility, and clientelism. *Journal of Law, Economics, & Organization*, 2008, 24, 371-406.

<sup>12</sup> **Grzymala-Busse A.**, How Populists Rule, *Polity*, 2019, **51**, 4 (October), 707–717

Սակայն մի շարք հանգամանքներ վկայում են, որ այդ տպավորությունը խաբուսիկ է:

### **Իրավիճակի և հեռանկարների գնահատականը**

2021թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները թեև հիասթափություն առաջացրեցին թե ընդիմադիր մասնակիցների («Պատիվ ունեմ» և «Հայաստան» դաշինքներ), թե նրանց աջակցողների համար, սակայն հետագա զարգացումների առումով կան նաև հուսադրող հանգամանքներ.

1. Չնայած իշխանության գործադրած հսկայական, հաճախ՝ ապօրինի, ջանքերին՝ նրա օգտին քվեարկել է ընտրողների ընդամենը 26 տոկոսը,

2. Ընտրությանը չեն մասնակցել զգալի թվով ընտրողներ, որոնք ոչ մի դեպքում չէին քվեարկի իշխանության օգտին, սակայն տարբեր պատճառներով չեն համոզվել, որ պետք է քվեարկեն խորհրդարան անցած ընդդիմության օգտին,

3. հաջողվել է զգալիորեն թուլացնել «նախկիններ» գաղափարի քայքայիչ ազդեցությունը՝ ավելի քան 320000 ընտրող (2018-ի ընտրություններին՝ միայն 59000) քվեարկել է հենց նախորդ իշխանությունների ձևավորած դաշինքների օգտին և նրանք են դարձել խորհրդարանական ընդդիմություն,

4. ընդդիմությունը ձեռք է բերել խորհրդարանական պայքարի զգալի լծակներ, որոնց արդյունավետ համադրումը արտախորհրդարանական պայքարի միջոցների հետ նոր հնարավորություններ կստեղծի իշխանությանը հեռացնելու համար:

5. Ազգային ժողով անցած ընդդիմադիր քաղաքական ուժերի մարդկային պոտենցիալը, փորձն ու գիտելիքները էականորեն գերազանցում են ոչ միայն նախորդ խորհրդարանական ընդդիմության համապատասխան հատկանիշներն, այլև իշխանության հնարավորությունները:

Այս գործոնները լուրջ նախադրյալներ էին 2021թ. խորհրդարանական ընտրություններից հետո խորհրդարանական

ընդդիմության՝ իշխանության գալու քաղաքական պայքարի հեռանկարները լավատեսորեն գնահատելու համար: Մակայն նաև ակնհայտ էր, որ պահանջվում էր լրջորեն գնահատել իրավիճակը և մշակել համարժեք ռազմավարություն, որի արդյունավետ կիրառման դեպքում այդ պայքարը պետք է պսակվեր հաջողությամբ: Ընդ որում, այն պետք է ոչ միայն հաշվի առներ այդ պայքարի նոր հնարավորությունները, այլև բացահայտել դրանում ներգրավված քաղաքական ուժերի սխալներն ու չօգտագործված հնարավորությունները: Տևական նախապատրաստական շրջանից հետո վերսկսված քաղաքական ակցիաները, թեև հավաքում էին աննախադեպ թվով աջակիցների, սակայն բազմաթիվ սխալների ու թերությունների պատճառով հաջողություն չունեցան: Մակայն տևական դադարից հետո 2022-ի գարնանը վերսկսված պայքարի երրորդ փորձը ևս անհաջողության մատնվեց, թեև առկա էին իշխանափոխության բոլոր նախադրյալները՝ գործող իշխանության շարունակական կոպիտ սխալներ ներքին բոլոր ոլորտներում, իսպառ բացակայություն միջազգային հարաբերություններում անգամ Հայաստանին անմիջականորեն վերաբերող խնդիրների հետ կապված, հասարակության օրեցօր խորացող դժգոհություն ու աննախադեպ աջակցություն բողոքի ակցիաներին, և այլն: Մակայն ընդդիմության գործողություններում նկատելի չէր մոտեցումների վերանայում, նոր գաղափարների ու մեխանիզմների կիրառում, գործընթացի բովանդակային զարգացում և այլն: Մինչդեռ ակնհայտ էր, որ ձախողվել է հասարակության և այն կազմող տարբեր խմբերի հետ աշխատանքը, կիրառվում են 2018թ. իշխանափոխության ժամանակ օգտագործված և բոլորովին այլ նպատակներ հետապնդած որոշ մոտեցումներ, հեղեղուկ է գործընթացի քաղաքական ատաղձը՝ դրանում մասնակցող կուսակցությունների գործունեությունը, չկա հստակ դերաբաշխում, և այլն: Ընդ որում, կուսակցությունների տկարությունը ակնհայտ է թե Ազգային ժողովում, թե խորհրդարանից դուրս պայքարի ընթացքում: Խորհրդարանական մեծամասնությանը հաջողվել է ցինիկ ու ասպրիչ պահվածքով, ստի ու կեղծիքի վրա կառուցված ելույթներով

Ազգային ժողովի գործունեությունը վերածել պարզունակ ծեծկրտուքի, լեզվակնովի ու փոխադարձ վիրավորանքներով ուղեկցվող մեղադրանքների փոխանակման՝ չեզոքացնելով իր համար ոչ շահեկան առարկայական քննարկումների հնարավորությունը: Խորհրդարանական ընդդիմությանը ոչ միայն չի հաջողվում փոխել այդ ընթացքը, այլև ապահովել երկու խմբակցությունների համագործակցված գործունեությունը: Ավելին, մեկ տարին չըրացած քայքայվել է ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցությունը, որի մաս կազմող կուսակցություններից մեկն ապացուցեց իր անկարողությունը՝ որպես քաղաքական կազմակերպություն: Ավելի լավ վիճակում չէ մյուս խմբակցությունը, թեև հաջողվում է խուսափել նման ցցուն դրսևորումներից: Մակայն արդեն իսկ այն հանգամանքը, որ դաշինքի մասնակից նորաստեղծ կուսակցությունը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ խմբակցության պատգամավորների զգալի մասը քաղաքական կազմակերպական կառույցներ ձևավորելուց խուսափում է՝ ամբողջ բեռը թողնելով դաշինքի մաս կազմող կուսակցություններից մեկի վրա, ձախողման է դատապարտում գործող իշխանությունների հեռացման պայքարը: Ընդդիմության պայքարը չի կարող հաջողության հիմքեր ստանալ, քանի դեռ չի ընկալվել, որ անհաջողության հիմնական պատճառները երկուսն են.

1. Թե ներքաղաքական, թե աշխարհաքաղաքական զարգացումները թևակոխել են նոր փուլ, որտեղ կարևոր դերակատարները պետք է ունենան նոր որակներ,
2. Ներքաղաքական կյանքում հաջողության կարող են հասնել լիարժեք ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող քաղաքական կազմակերպությունները,
3. Վերջինների բացակայության պայմաններում իշխանությունը երկրում անցնում է պոպուլիստներին, որոնք ստանում են ազդեցիկ պետությունների աջակցությունն ու դառնում են դրանց շահերին ծառայող գործիք:

Քանի որ, ինչպես վերը նշվեց, ինստիտուցիոնալացմանն առնչվող խնդիրները բնորոշ են բոլոր հետխորհրդային երկրներին,



ապա այդ հնարավորությունների բացահայտման համար կարող են օգտագործվել հետխորհրդային երկրներում կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգերի ուսումնասիրությանը նվիրված մեծ թվով հետազոտությունների արդյունքներ: Ընդ որում, դրանց ճնշող մեծամասնության հեղինակները համարում են, որ պետության կայացման համար առանցքային նշանակություն ունի կուսակցությունների ինստիտուցիոնալացվածությունը՝ պատշաճ կազմակերպական ուժի ապահովումը<sup>13</sup>: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ ձևավորվեն մի քանի կամ առնվազն մեկ կայացած/ինստիտուցիոնալացված կուսակցություն: Առկա են լուրջ տեսական հիմնավորումներ և հետկոմունիստական Եվրոպայի երկրների վերաբերյալ էմպիրիկ տվյալներ, որոնք հաստատում են, որ գոյություն ունի շատ ուժեղ դրական վիճակագրական և էականորեն զգալի կապ կուսակցությունների կազմակերպական ներուժի և ընտրությունների ժամանակ ընտրողների տված ձայների թվի միջև:<sup>14</sup> Ակնհայտ է, որ կուսակցության կազմակերպական ներուժը կախված է երեք բնորոշիչ բաղադրիչներից՝ կուսակցության կառուցվածք, անձնակազմ և գործունեություն: Հետևաբար կուսակցության արդիականացումը ենթադրում է այդ երեք բաղադրիչները միաժամանակ ընդգրկող վերափոխումներ՝ ինստիտուցիոնալացում:

<sup>13</sup> Օրինակ, **Mierzejewski-Voznyak M. G.**, Party politics after the colour revolutions: party institutionalisation and democratisation in Ukraine and Georgia, *East European Politics*, 2014, **30**, 1, 86-104. **McAllister I. and White S.**, Political Parties and Democratic Consolidation in Post-Communist Societies, *Party Politics*, 2007, **13**, 2, 197–216. **Randall V. and Svåsand L.**, Party Institutionalization in New Democracies, *Party Politics*, 2002, **8**, 1, 5-29. **Bielasiak J.**, The Institutionalization of Electoral and Party Systems in Postcommunist States. *Comparative Politics* 2002, **34**, 2, 189–210. **Innes A.**, Party Competition in Postcommunist Europe: The Great Electoral Lottery. *Comparative Politics* 2002, **35**, 1, 85–104. **Mainwaring S.**, Party Systems in the Third Wave. *Journal of Democracy* 1998, **9**, 3, 67–81. **Meleshevich A. A.**, Party Systems in Post-Soviet Countries: A Comparative Study of Political Institutionalization in the Baltic States, Russia, and Ukraine. New York: Palgrave Macmillan. 2007. **Kostelecky T.**, Political Parties after Communism. Baltimore: Johns Hopkins University Press. 2002

<sup>14</sup> **Tavits M.**, Post-Communist Democracies and Party Organization, Cambridge University Press, 2013.

## Կուսակցության ինստիտուցիոնալացման/արդիականացման տեսական հիմքերը

Կուսակցությունների գործունեության տեսական հետազոտությունները մեկնարկել են 6-7 տասնամյակ առաջ և վերջին տասնամյակների ընթացքում լայնորեն օգտագործվում են քաղաքական գործընթացների ուսումնասիրման ու ճշգրտումների նպատակով: Դրանք ընդգրկում են հետազոտության տարբեր ուղղություններ՝ կուսակցությունների տեսակներ, կուսակցությունների գործունեության կապը պետության կայացման հետ, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի գնահատման մոդելներ և չափանիշներ, կուսակցությունների ինստիտուցիոնալացում, կուսակցական համակարգ և քաղաքական բաժանումներ, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ձևավորումն ու կայացումը հետխորհրդային երկրներում և այլն: Ընդ որում, հետխորհրդային երկրների կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգերի հետազոտությունը կազմում է առանձին դաս, քանի որ այդ երկրներում տեղի ունեցող գործընթացներն ունեն ընդգծված առանձնահատկություններ<sup>15</sup>: Ավելին, այդ երկրները, ըստ իրենց հետագծի ու հնարավոր զարգացումների, բաժանվում են մի քանի խմբերի<sup>16</sup>: Մասնա-

<sup>15</sup> **Meleshevich A.**, Party Systems in Post-Soviet Countries: A Comparative Study of Political Institutionalization in the Baltic States, Russia, and Ukraine. New York: Palgrave Macmillan. 2007. **Mainwaring S.**, Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil. Stanford: Stanford University Press. 1999. **Spirova M.**, 2007. Political Parties in Post-Communist Societies: Formation, Persistence, and Change. London: Palgrave Macmillan. **Mierzejewski-Voznyak M. G.**, Party politics after the colour revolutions: party institutionalisation and democratisation in Ukraine and Georgia, *East European Politics*, 2014, **30**, 1, 86-104. **McAllister I. and White S.**, Political Parties and Democratic Consolidation in Post-Communist Societies, *Party Politics*, 2007, **13**, 2, 197-216. **Randall V. and Svåsand L.**, Party Institutionalization in New Democracies, *Party Politics*, 2002, **8**, 1, 5-29.

<sup>16</sup> **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.**, Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը փուլերը փուլերը փուլերը, խմբերը և երեք հարացույցները, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(1), 2014, 19-32.

վորապես, Վրաստանն, Ուկրաինան, Մոլդովան և Հայաստանը հաճախ դիտարկվում են նույն խմբի մեջ ու երբեմն էլ՝ որոշ խնդիրներ դիտարկելիս, Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Այս երկրների կայացածության խնդիրը կապվում է բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացվածության խնդրի հետ և այդ պատճառով հետազոտությունների զգալի մասը նվիրված է այդ համակարգերի ուսումնասիրությանը:<sup>17</sup> Ավելի քիչ են առանձին կուսակցությունների վերաբերյալ հետազոտությունները՝ ինչպես հավաստի տեղեկություններ ձեռք բերելու տեխնիկական դժվարությունների, այնպես էլ խնդրի հետաքրքրության շրջանակների զգալի տարբերության հետ կապված: Մակայն նաև ակնհայտ է, որ կուսակցությունների համար հատկապես հետաքրքիր են այն մոդելներն ու հետազոտությունները, որոնց կիրառումը հնարավորություն կտա զգալիորեն բարելավել իրենց արդյունքները ընտրական գործընթացներում, իսկ այլ խմբերի ավելի հետաքրքրում են կուսակցական համակարգերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Այս աշխատանքի նպատակների տեսակետից կարևոր են այն հետազոտությունները, որոնք թույլ են տալիս բացահայտել կուսակցությունների կազմակերպական ներուժի մեծացման հնարավորությունները, որոնց օգտագործումը թույլ կտա կուսակցություններին շատ ավելի արդյունավետ աշխատել ընտրողների հետ և զգալիորեն բարելավել ընտրություններում արձանագրվող արդյունքները:

Քանի որ նման հետազոտությունների ժամանակ անհրաժեշտ է վերլուծել տվյալների մեծ բազաներ, ինչը պահանջում է տևական ժամանակահատված, այդ աշխատանքներում, որպես

<sup>17</sup> **Bielasiak J.**, The Institutionalization of Electoral and Party Systems in Postcommunist States. *Comparative Politics*, 2002, **34**, 2, 189–210. **Turovsky R.**, Party Systems in Post-Soviet States: The Shaping of Political Competition, *Perspectives on European Politics and Society*, 2011, **12**, 2, 197-213. **Meleshevich, A.**, Party Systems in Post-Soviet Countries: A Comparative Study of Political Institutionalization in the Baltic States, Russia, and Ukraine. New York: Palgrave Macmillan. 2007. **Casal Bertoa F.**, Party systems and cleavage structures revisited: A sociological explanation of party system institutionalization in East Central Europe, *Party Politics* 2014, **20**, 1, 16–36.

կանոն, դիտարկվում են կուսակցությունների մեկ կամ մի քանի հատկանիշներ:<sup>18</sup> Ակնհայտ է, որ կոնկրետ կուսակցության ընտրական հաջողության ապահովման առումով կիրառական արդյունք կարելի է ունենալ զգալի թվով նման հետազոտությունների արդյունքների վերլուծության ու համադրման դեպքում: Սակայն առկա է նաև խնդրի համապարփակ հետազոտություն, որի արդյունքում նախկին կոմունիստական պետությունների կուսակցությունների համար առաջարկվում է<sup>19</sup> կիրառել արդիականացման/ինստիտուցիոնալացման ստորև բերվող հարացույցը, որը ներառում է կուսակցության ամբողջական կազմակերպական ներուժի՝ կառուցվածքի, անձնակազմի ու գործունեության միաժամանակյա արդիականացում, ընդգծելով, որ դրանց առանձին-առանձին դիտարկումը և արդիականացումը կտրուկ նվազեցնում է ակնկալվող արդյունքը: 4 տարուց ավել տևած հետազոտության արդյունքում դիտարկվել է Չեխիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Հունգարիայի կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգերի գործունեությունը 20 տարվա ընթացքում:

Կուսակցության գործունեության արդյունքների՝ խորհրդարանում ստացած տեղերի մեծ տատանողականությունը մատնանշում է ինստիտուցիոնալացման անհրաժեշտություն, որն իրականացվում է հետևյալ վեց հիմնական ուղղություններով՝

<sup>18</sup> Օրինակ, **Le Bas A.**, *From Protest to Parties: Party-Building and Democratization in Africa*. Oxford: Oxford University Press. 2011. **Mudde C.**, *Populist Radical Right Parties in Europe*. Cambridge: Cambridge University Press. 2007. **Katz R. S. and Mair P.**, *Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party*. *Party Politics* 1995, **1**, 1, 5–28. **Van Biezen I.**, *Political Parties in New Democracies: Party Organization in Southern and East-Central Europe*. New York: Palgrave. 2003. **Bakke E. and Sitter N.**, *Patterns of Stability: Party Competition and Strategy in Central Europe since 1989*. *Party Politics* 2005, **11**, 2, 243–263. **Boix C.**, *The Emergence of Parties and Party Systems*. *The Oxford Handbook of Comparative Politics*, eds. *Carles Boix and Susan Stokes*. Oxford: Oxford University Press. 2007, pp. 499–521. **Basedau M. and Stroh A.**, *Measuring Party Institutionalization in Developed Countries: A New Research Instrument Applied to 28 African Political Parties*. GIGA Working Paper No. 69. 2008.

<sup>19</sup> **Tavits M.**, *Post-Communist Democracies and Party Organization*, Cambridge University Press, 2013.

- 1) կուսակցության կենտրոնական մարմնի պրոֆեսիոնալիզմ,
- 2) կազմակերպական ընդլայնվողականություն,
- 3) անդամների թիվ և ակտիվություն,
- 4) Կուսակցության արտաքին գործունեություն,
- 5) Արժեքային ուղղվածություն,
- 6) Անձնակենտրոնության բացակայություն:<sup>20</sup>

Իհարկե, այս ուղղությունները մշակվել են որպես ընդհանրական առաջարկություններ հետկոմունիստական երկրների կուսակցությունների համար և յուրաքանչյուր կոնկրետ կիրառման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ դեպքի առանձնահատկությունները: Մտորել այդ ուղղություններից յուրաքանչյուրի համար կբերվեն հիմնական անելիքները, որոնք հաշվի են առնում հայաստանյան առանձնահատկություններից բխող մոտեցումները:

### **Հայաստանյան պայմաններում կուսակցության ինստիտուցիոնալացման հարացույց**

Հայաստանում կուսակցությունների ինստիտուցիոնալացման նպատակով անհրաժեշտ է վերը բերված ընդհանրական/տեսական 6 ուղղությունները վերաձևակերպել և ապամանրամասնել՝ ըստ հայաստանյան իրավիճակի ու նպատակների.

- 1) կուսակցության կենտրոնական մարմնի պրոֆեսիոնալիզմի ապահովում,
- 2) տարածքային կազմակերպությունների օպտիմալացում և արդյունավետության մեծացում,
- 3) անդամների թվի և ակտիվության փոխկապակցվածության ապահովում,
- 4) կուսակցության արտաքին գործունեության արդյունավետության մեծացում,

<sup>20</sup> Նույն տեղում

5) կուսակցության արժեքային ուղղվածության և պրակտիկ գործունեության համապատասխանեցում,

6) ներկուսակցական ժողովրդավարության ապահովում:

Այս 6 ուղղություններն անհրաժեշտ է մանրամասնել հարացույցի մակարդակով՝

### **1. Կուսակցության կենտրոնական մարմնի պրոֆեսիոնալիզմի ապահովում**

1.1. Կուսակցության կենտրոնական մարմնում գործառույթների հստակ սահմանում և ենթակառուցվածքների ձևավորում, ինչպես նաև դրանց հաշվետվողականության ապահովում (ցանկալի է կառույցների կառուցվածքի, նպատակների, փոխադարձ կապերի ու ընթացակարգերի ֆորմալացում):<sup>21</sup>

1.2. Կուսակցության ծրագրային գործունեության ապահովման կառույցների (օրինակ, ՀՀԿ-ի դեպքում՝ Լույս հիմնադրամ, Ա. Մարգարյանի անվան քաղաքական դպրոց) գործունեության ֆորմալացում, նպատակայնության և արդյունավետության ապահովում:<sup>22</sup>

1.3. Ընտրազանգվածի հետ կապի միջոցների ենթակառուցվածքների (լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր և այլն) և դրանց ծրագրային գործունեության արդյունավետության ապահովում:<sup>23</sup>

1.4. Ենթակառուցվածքների աշխատանքների իրականացման մշտական մասնագիտական անձնակազմերի առկայություն (դրանցում կարող են ընդգրկված լինեն ինչպես կուսակցության

<sup>21</sup> **Mudde C.**, *Populist Radical Right Parties in Europe*. Cambridge: Cambridge University Press. 2007.

**Ishiyama, J. T.**, Party Organization and the Political Success of the Communist Parties. *Social Science Quarterly*, 2001, **82**, 4, 844–864. **Van Biezen I.**, *Political Parties in New Democracies: Party Organization in Southern and East-Central Europe*. New York: Palgrave. 2003

<sup>22</sup> **Mudde C.**, *Populist Radical Right Parties in Europe*. Cambridge: Cambridge University Press. 2007. **Katz R. S. and Mair P.**, Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party. *Party Politics* 1995, **1**, 1, 5–28.

<sup>23</sup> **Katz R. S. and Mair P.**, Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party.” *Party Politics*, 1995, **1**, 1, 5–28

անդամներ, այնպես էլ ոչ անդամ մասնագետներ, որոնց աշխարհայացքային պատկերացումները չեն հակասում կուսակցության արժեքներին ու սկզբունքներին):<sup>24</sup>

1.5. Կուսակցության տարբեր մակարդակների ու կառույցների միջև կապի ու համագործակցության ապահովման մեխանիզմների առկայություն:<sup>25</sup>

1.6. Կուսակցության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովում:<sup>26</sup>

## **2. Տարածքային կազմակերպությունների օպտիմալացում և արդյունավետության մեծացում**

2.1. Տարածքային կազմակերպությունների օպտիմալ և արդյունավետ ցանցի ձևավորում: Այդ ցանցի օպտիմալացումը պետք է ունենա երկու չափանիշ՝ գործունեության արդյունավետության կտրուկ մեծացում և ավելորդ ծախսերի բացառում:<sup>27</sup>

<sup>24</sup> **Katz R. S. and Mair P.**, Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party.” *Party Politics* 1995, **1**, 1, 5– 28. **Kostelecky T.**, Political Parties after Communism. Baltimore: Johns Hopkins University Press. 2002. **Mudde C.**, Populist Radical Right Parties in Europe. Cambridge: Cambridge University Press. 2007. **Mainwaring S.**, Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil. Stanford: Stanford University Press. 1999.

<sup>25</sup> **Chhibber P. K.**, Democracy without Associations: Transformation of the Party System and Social Cleavages in India. Ann Arbor: University of Michigan Press. 1999.

<sup>26</sup> **Szczerbiak A.**, Party Structure and Organizational Development in PostCommunist Poland. *Journal of Communist Studies and Transition Politics* 2001, **17**, 2, 94–130. **Mainwaring S.**, Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil. Stanford: Stanford University Press. 1999. **Katz R. S. and Mair P.**, Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party. *Party Politics* 1995, **1**, 1, 5– 28.

<sup>27</sup> **Goloso G. V.**, Political Parties in the Regions of Russia: Democracy Unclaimed. Boulder: Lynne Rienner. 2004.

**Van Biezen I.**, Political Parties in New Democracies: Party Organization in Southern and East-Central Europe. New York: Palgrave. 2003. **Szczerbiak A.**, Party Structure and Organizational Development in PostCommunist Poland. *Journal of Communist Studies and Transition Politics* 2001, **17**, 2, 94–130. **Mudde C.**, Populist Radical Right Parties in Europe. Cambridge: Cambridge University Press. 2007.

2.2. Կուսակցության տարբեր մակարդակների կազմակերպությունների գործունեության արդյունավետության մեծացման համար անհրաժեշտ է ապահովել դրանց միջև ինֆորմացիայի փոխանցման ֆորմալ մեխանիզմների առկայություն:<sup>28</sup>

2.3. Կուսակցության տարբեր մակարդակների կառույցների գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտ պայման է կուսակցական վերահսկողության ու հաշվետվողականության հստակ մեխանիզմների ու ընթացակարգերի առկայություն և շարունակական կիրառում:<sup>29</sup>

### **3. Անդամների թվի և ակտիվության փոխկապակցվածության ապահովում**

3.1. Անդամների ֆունկցիաներ, անդամության պահանջներ, խթաններ: Կուսակցության անդամակցությունը չպետք է լինի ձևական, թղթի վրա: Կուսակցականները պետք է ունենան իրենց անելիքը, աջակցություն ստանան դրա իրականացման համար, վերահսկողություն իրականացվի այդ գործընթացի վրա:

3.2. Ներքին հաղորդակցության արդյունավետ միջոցներ, հանդիպումների հաճախականություն: Պետք է հստակորեն սահմանվեն այդ միջոցները, յուրաքանչյուր կառույցի ներսում և ավելի խոշոր կառույցի հետ հանդիպումների հաճախականությունն ու այդ ամենի հետ կապված պետք է ապահովվի հաշվետվողականությունը:

3.3. Ինստիտուցիոնալ աջակցության գործունեություն: Ընտրողների մոբիլիզացիայի ծրագրեր, հասարակական կարծիքի հարցումներ, նախընտրական ծրագրեր և այլն:

<sup>28</sup> **Kosteletzky, Tomas.** 2002. *Political Parties after Communism.* Baltimore: Johns Hopkins University Press.

**Le Bas, Adrienne.** 2011. *From Protest to Parties: Party-Building and Democratization in Africa.* Oxford: Oxford University Press.

<sup>29</sup> **Mainwaring S.,** *Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil.* Stanford: Stanford University Press. 1999. **Golosov G. V.,** *Political Parties in the Regions of Russia: Democracy Unclaimed.* Boulder: Lynne Rienner. 2004.



3.4. Տարբեր մակարդակի ընտրություններում թեկնածուների հետ աշխատանք: Աջակցություն թեկնածուների ընտրական գործընթացին, կուսակցության դիրքորոշումների հետ համադրելի մոտեցումների ապահովում:

3.5. Ընտրական և խորհրդարանական կարողություններ: Ընտրական և խորհրդարանական գործընթացներում պետք է հստակորեն սահմանված լինեն դերակատարների անելիքները և պետք է հսկողություն լինի դրանց կատարման նկատմամբ:

#### **4. Կուսակցության արտաքին գործունեություն**

4.1. Համախմբվածություն խորհրդարանում: Տարակարծությունների ու բաժանումների բացակայություն խմբակցությունում, տեսակետների համադրելիություն կուսակցության մոտեցումների հետ:

4.2. Կայունություն ընտրություններում: Սկզբունքների, արժեքների, ու հիմնախնդիրների լուծումների վերաբերյալ դիրքորոշումների շարունակականություն:

4.3. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա կուսակցությունների հետ: Դա պետք է լինի նպատակաուղղված, արդյունավետ, արդյունքները՝ չափելի:

4.4. Ընտրողների շրջանում հակակուսակցական տրամադրությունների չեզոքացում: Կապակցված խմբերի դժգոհությունների բացահայտում և կանխում: Շարունակական մոնիտորինգ և արձագանք բացասական միտումներին:

#### **5. Կուսակցության արժեքային ուղղվածության և պրակտիկ գործունեության համապատասխանեցում**

Կուսակցականների գաղափարական համախմբվածություն:

Լայն գաղափարական գրավչություն ընտրողների և պոտենցիալ անդամակցողների համար:

«Աջ-ձախ» սանդղակում կայուն դիրքեր:

### **6. Ներկուսակցական ժողովրդավարություն և հավատարմություն**

Կուսակցության հեղինակություն, լոյալություն կուսակցության նկատմամբ ընտրողների շրջանում:

Ծրագրային, այլ ոչ թե հաճախորդային կամ խարիզմատիկ կապեր:

Կուսակցության կազմակերպական ուժի մեծացման տեսակետից հատկապես առաջնահերթ նշանակություն ունեն առաջին երեք ուղղությունները: Առաջարկվում է<sup>30</sup> կուսակցության ինստիտուցիոնալացումը/արդիականացումը իրականացնել վեց ուղղություններով՝ դրանցից յուրաքանչյուրի համար մշակելով ու իրականացնելով մանրամասն ծրագիր:

#### **Ինստիտուցիոնալացում հայաստանյան պայմաններում Ընդհանուր դրույթներ**

Ինստիտուցիոնալացման ֆորմալացման նպատակով անհրաժեշտ է կառուցել կուսակցության կառուցվածքային բլոկ-սխեման, որտեղ բլոկների տեսքով պետք է ներկայացված լինեն կուսակցության բոլոր կառույցներն ու մարմինները, ինչպես նաև դրանց միջև կապերը: Կապերն, ըստ իրենց բնույթի, կարող են լինել ֆունկցիոնալ կամ վերահսկողական:

Ինստիտուցիոնալացումը պետք է իրականացվի կառուցվածքային և բովանդակային չափումներով: Առաջինը իրականացվում է կառուցվածքի օպտիմալացման միջոցով, իսկ բովանդակայինը՝ համապատասխան ընթացակարգերի մշակման և կիրառման:

Կուսակցության ինստիտուցիոնալացման նպատակով ստեղծվում է հատուկ, ժամանակավոր հանձնաժողով:

<sup>30</sup> **Tavits M.**, *Post-Communist Democracies and Party Organization*, Cambridge University Press, 2013.

**Ինստիտուցիոնալացման գործընթացի սկզբունքները**

Ինստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է այն իրականացնել հետևյալ սկզբունքների հիման վրա.

1. Կուսակցության կառույցներից/մարմիններից յուրաքանչյուրը պետք է ունենա առնվազն մեկ կամ ավելի կապ մյուս կառույցների/մարմինների հետ: Այդ կապերը պետք է ապահովեն յուրաքանչյուր կառույցի/մարմնի համար սահմանված գործառնությունների բովանդակային լիարժեք իրականացում:

2. Բոլոր կապերը պետք է ունենան հստակ սահմանված, չկրկնվող բովանդակություն,

3. Չպետք է լինեն ֆունկցիոնալ առումով կրկնվող կառույցներ, մարմիններ կամ կապեր,

4. Կապերը կարող են լինել երեք տեսակի՝ ֆունկցիոնալ, հաշվետվողական և վերահսկողական: Յուրաքանչյուր ֆունկցիոնալ կապ պետք է ունենա համապատասխան վերահսկողական կապ, որը թույլ կտա հաշվետվողական կապից անկախ ճանապարհով հավաստիանալ ֆունկցիոնալ կապի արդյունավետության մասին,

5. Յուրաքանչյուր կառույց կամ մարմին պետք է ունենա իր ֆունկցիոնալ և վերահսկողական գործառնությունների իրականացման ընթացակարգը:

6. Ընթացակարգերը մշակում են համապատասխան կառույցները/մարմինները կամ ինստիտուցիոնալացման հանձնաժողովը, դրանք քննարկվում են ինստիտուցիոնալացման հանձնաժողովի նիստում: Հավանության արժանանալու դեպքում ընթացակարգերը հաստատվում են կուսակցության գործադիր մարմնի նիստում:

### ***Ինստիտուցիոնալացման նախադրյալները***

Կուսակցությունների ինստիտուցիոնալացումն ինքնին բարդ, բազմաբաղադրիչ գործընթաց է, որի հաջողությունը պայմանավորված է մի շարք հանգամանքների միաժամանակյա առկայությամբ.

- Տարածքային կազմակերպություններ,
- Անհրաժեշտ նվազագույն ֆինանսական միջոցներ,
- Կուսակցությունում արմատական փոփոխությունների իրականացման վճռականություն,
- Ճիշտ մշակված ինստիտուցիոնալացման ծրագիր, ռազմավարություն և մարտավարություն,
- Կուսակցության կառույցների լիարժեք ներգրավում գործընթացում,
- Անհրաժեշտ թվով անդամներ:

Որևէ կուսակցության ինստիտուցիոնալացում ենթադրում է երկու տեսակի խնդիրների լուծում՝ ներկուսակցական և արտակուսակցական: Հեշտ է նկատել, որ վերը նշված 6 ուղղություններից 4-րդը վերաբերում է կուսակցության արտաքին հարաբերություններին, իսկ մյուսները՝ ներկուսակցական խնդիրներին: Վերջինս իր հերթին նույնպես կարելի է բաժանել երկու խմբի՝ կուսակցության կենտրոնական մարմինն և շրջանային խորհուրդներին ու սկզբնական կազմակերպություններին վերաբերող, քանի որ, ինչպես ցույց կտրվի ստորև, կենտրոնական մարմինը ոչ միայն պետք է իրականացնի իր տրանսֆորմացիան, այլև առանցքային դերակատարություն ունենա շրջանային խորհուրդների և սկզբնական կազմակերպությունների տրանսֆորմացիայի գործընթացում:

Արտակուսակցական խնդիրների խումբը պետք է ներառի միջկուսակցական հարաբերությունները, հասարակության հետ աշխատանքը, խորհրդարանական գործունեությունը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա կառույցների հետ հարաբերությունները:

Առաջարկվող հարացույցը կոնկրետ կուսակցության համար կիրառելիս անհրաժեշտ է դիտարկել այդ կուսակցության համապատասխանությունը վերոհիշյալ նախադրյալներին, ինչը թույլ կտա գնահատել անհրաժեշտ ջանքերի ու միջոցների ծավալները: Կարևոր է նաև ինստիտուցիոնալացման ռազմավարությունը՝ իրականացվող փոփոխությունների արդյունավետությունն ապահովելու տեսակետից:

Ակնհայտ է, որ «գունավոր» հեղափոխության ճիրաններում հայտնված պետության առողջացման համար միակ հնարավորությունը երկրում իրականացվող քաղաքականության կառուցումն է սկզբունքների ու արժեքների վրա, որին անցնելու ըճանապարհը ինստիտուցիոնալացումն է:

### Եզրակացություն

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների 30-ամյա հետազոծի, ինչպես նաև դրանց կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման գործընթացների ուսումնասիրությունը վկայում է, որ

1. Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրները, խորհրդային ամբողջատիրական վարչակարգից անցնելով ավտորիտար կամ թերի ժողովրդավարական վարչակարգի, պետք է հաշվի առնեն, որ այն ժամանակավոր է, անցումային՝ մինչ կայուն վարչակարգի հաստատումը: Հասարակությունը ստացել էր ոգևորության որոշ պաշար, որը թույլ էր տալիս հաղթահարել այդ բարդ անցումային շրջանը՝ ձևավորելու համար կայուն, զարգացող **պետականություն: Այդ երկրների մեծ մասը ճիշտ չընկալեց այդ մարտահրավերի վտանգները և գերակա դարձան տարատեսակ հատվածական շահեր՝ ըստ արժանվույն չգնահատելով երկրի քաղաքական համակարգի կայացման** հրատապ անհրաժեշտությունը: Արդյունքում, ֆորմալ սահմանադրական ինստիտուտների միջև քաղաքական մրցակցությունը փոխարինվեց ոչ ֆորմալ (հաճախ՝ օլիգարխական) խմբերի պայքարով՝ հանգեցնելով

հասարակության բարոյահոգեբանական կտրուկ անկման ու ինքնապաշտպանական մեխանիզմների տկարացման:

2. Նման փոխարինման արդյունքում կուսակցությունները վերածվում են ձևական, բովանդակություն չունեցող կառույցների, իսկ ոչ ֆորմալ օլիգարխիական խմբերի պայքարը արժեքներից ու սկզբունքներից զրկում է իշխանության համար մրցակցությունը, որն էլ հանգեցնում է գործընթացների ու կառույցների իմաստազրկման՝ պարարտ հող ստեղծելով «գունավոր» հեղափոխությունների համար: Հետևաբար, դրանց իրականացման առանցքային նախադրյալը բազմակուսակցական համակարգի չկայացածությունն է: Պատահական չէ, որ այդ հեղափոխությունների շարժիչ ուժը դառնում են ոչ թե կայացած կուսակցություններ, այլ տարբեր խմբեր, որոնք ֆինանսավորվում և ուղղորդվում են ոչ օրինական աղբյուրներից: Ակնհայտ է, որ այդ խմբերի նպատակը կայուն, զարգացող պետության կայացումը չէ, այլ իշխանության զավթումը՝ վերպետական նպատակներով օգտագործելու համար: Որպես կանոն, այդ նպատակները հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ՝ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցության ուժգնացման փուլում բխում են նոր աշխարհակարգի ձևավորման տրամաբանությունից:

3. Այդ փուլում առաջացող նոր որակի մարտահրավերները՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին, հաղթահարելու համար անհրաժեշտ են նոր որակ ունեցող, կայացած կուսակցություններ, քանի որ աշխարհաքաղաքական պայքարի այդ փուլում արտաքին ուժերի ազդեցությունն իրադարձությունների զարգացման վրա դառնում է շատ ավելի կոշտ ու գռեհիկ: Հետևաբար, չինստիտուցիոնալացված, օլիգարխիական խմբերի քայքայիչ ազդեցությունից տկարացած կուսակցությունների արձագանքն այդ մարտահրավերներին լինում է անբավարար՝ դրանք հաղթահարելու համար, իսկ «գունավոր» հեղափոխությունների իրականացմամբ՝ սկսվում է պետական ինստիտուտների կազմաքանդումը:

4. ՀՏԵ-ում տեղի ունեցող «գունավոր» հեղափոխությունների կանխարգելման կամ, դրանց տեղի ունենալու դեպքում

հետևանքների վերացման ուղին քաղաքական համակարգի առողջացումն է՝ կառույցների ու գործընթացների հիմքում դնելով սկզբունքներն ու արժեքները: Դրա հաջողության նախապայմանն է կուսակցությունների ինստիտուցիոնալացումը, քանի որ սահմանադրական վարչակարգ ունեցող երկրներում կուսակցություններին վերապահված է համակարգաստեղծ դերակատարություն: Դա թույլ կտա էականորեն մեծացնել կուսակցության գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև, դրա հիման վրա իշխանության գալով՝ ինստիտուցիոնալացնել պետական կառույցները՝ արդյունավետորեն լուծելով պետության առջև ծառայած խնդիրները:

5. Մի շարք ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ՀՏԵ կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգերի չկայացածության պատճառներն ու խոչընդոտները, ինչի շնորհիվ ձևակերպվել են այդ երկրներում կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման հայեցակարգն ու օրինաչափությունները: Որևէ կոնկրետ երկրում այդ գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքի (կուսակցության) համար այդ հայեցակարգի ու օրինաչափությունների հիման վրա մշակել ինստիտուցիոնալացման կոնկրետ ծրագիր՝ հաշվի առնելով այդ կուսակցության անցած ճանապարհը, ինստիտուցիոնալացման նախադրյալների առկայությունը, առկա դժվարություններն ու խոչընդոտները և այլն:

## **Difficulties and possibilities of overcoming the crisis of the Armenian political system**

TIGRAN TOROSYAN

*Brusov State University*

More than three decades of post-Soviet transformation indicate that this is a much more complex process than it seemed at first, and the democratization of post-communist countries requires long, consistent efforts and poses difficult tasks. Even the post-Soviet states included in the EU's Eastern Partnership program periodically face crises of the political system, the cause of which is the failure of the parties. This has very dangerous consequences for states, especially at the final stage of geopolitical competition, when powerful states try to use their influence on vulnerable states at any cost to achieve their goals. Research shows that although these crises have their own characteristics and different causes, their most important drawback is common: parties need to be institutionalized. The article proposes a paradigm of institutionalization of parties, taking into account the peculiarities of Armenia, the application of which will increase the security of the country. This will make it possible to overcome the crisis of the country's political system, and also to resist various aspirations to use Armenia as a tool to achieve various geopolitical goals through "color" revolutions.



**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԱՇԽԱՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

**DOI: 10.19266/1829-4286-2023-02-33-48**

**Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը որպես  
Հայաստանում այլախոհության ձևավորման խթան և երկրի  
մասնատման «իրավական» հիմք**

**ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
*Երևանի պետական համալսարան*

*Թեև 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական ու հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի կնքումից անցել է ավելի քան հարյուր տարի, սակայն դրանց հետազոտությունը մնում է արդիական ոչ միայն այն պատճառով, որ դրանք տասնամյակներ շարունակ լուրջ ազդեցություն են ունեցել Հայաստանում այլախոհական հոսանքների ձևավորման տեսակետից, այլև, որ դրանց նախապատրաստման ու ստորագրման գործընթացները մեծապես հիշեցնում են ներկայիս հարաբերությունները: Ակնհայտ է, որ մինչ այժմ դրանց լիարժեք գիտական հետազոտության բացակայությունը այսօր հանգեցնում է նոր սխալների ու կորուստների: Հողվածում բացահայտվում են այդ պայմանագրերի մշակման ու կնքման ընթացքում թույլ տրված սխալները, դրանց հակասությունները միջազգային իրավունքին, բարդ աշխարհաքաղաքական պայքարի գործընթացներում հատվածական ու վերացական շահերին ազգային շահերի գոհաբերման ադետալի հետևանքները:*

**Բանալի բառեր**

Մոսկվայի պայմանագիր, հայկական այլախոհություն, Կարսի պայմանագիր, «Բաթում-Մուրմալու» գործարք

**Նախաբան**

20-րդ դարի 60-ական թվականներից խորհրդային «հետստալինյան» քաղաքականության ժամանակաշրջանում զգալիորեն թուլացան ուժային կառույցների բռնաճնշումները և «խրուշչովյան հալոցքի»

պայմաններում<sup>1</sup> հնարավորություններ առաջացան այլախոհական շարժումների ձևավորման համար: Այլախոհության դրսևորումները տարատեսակ էին՝ թե՛ ընդհանրական հարցադրումներով, և թե՛ տեղային առանձնահատկություններով: Միաժամանակ, այդ դրսևորումները տարաբնույթ էին՝ սոցիալական, տնտեսական, կրոնական, մշակութային, ինչպես նաև քաղաքական (վարչակարգի փոփոխության, անկախության և այլ) պահանջներով: Մասնավորապես, անկախության պահանջները պայմանավորված էին այն հանգամանքով, որ ԽՍՀՄ կազմ մի խումբ հանրապետություններ ընդգրկվել էին անկախ պետությունների նկատմամբ ռազմական ուժի կիրառմամբ (մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը 1920թ. խորհրդայնացվել է ռուսական/բոլշևիկյան 11-րդ բանակի ներխուժման արդյունքում): Ռուսաստանը (ապա՝ Խորհրդային միությունը) փորձում էր այդ գործընթացներն օրինականացնել համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Ընդ որում, առանձնապես խտրականություն չէր դրվում այդ նպատակով կիրառվող միջոցների միջև՝ հաճախ դիմելով նաև ապօրինի քայլերի, օրինակ, կնքելով ապօրինի համաձայնագրեր: Մասնավորապես, Բալթյան երկրների խորհրդայնացումը տեղի է ունեցել 1939 թվականի օգոստոսի 23-ին խորհրդա-գերմանական՝ «Միմյանց վրա չհարձակվելու մասին» գաղտնի պայմանագրի արդյունքում<sup>2</sup> և հաստատագրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքներով: Հայաստանի դեպքում «ձևակերպումներն» իրականացվեցին 1921թ. մարտի 16-ին կնքված Մոսկվայի<sup>3</sup> և նույն թվականի հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի<sup>4</sup>

<sup>1</sup> **Hornsby R.**, *Political Protest and Dissent in the Khrushchev Era*, Centre for Russian and East European Studies European Research Institute, 2008, p.3.

<sup>2</sup> **Alexiev A.**, *Dissent and Nationalism in the Soviet Baltic*, The Rand corporation, Santa Monica, 1983.

<sup>3</sup> Документы внешней политики СССР. Т. III. 1 июля 1920 г.-18 марта 1921 г., Москва, с. 597.

<sup>4</sup> **Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ.**, *Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության*

պայմանագրերով: Քանի որ գործընթացներն իրականացվում էին ռազմական ուժի կիրառմամբ, իսկ պայմանագրերի ապօրինի նպատակներն անհնարին էր ձևակերպել առանց էական թերությունների, ակնհայտ է որ այդ ամենը հասարակական գիտակցության վրա ունենում էր լուրջ ազդեցություն և պատեհ պայմանների առկայությամբ 60-ական թվականներից հանգեցրեց այլախոհության տարբեր դրսևորումների:

Խորհրդային Հայաստանում ծավալված այլախոհության հիմքում մի շարք խնդիրներ են եղել, սակայն առանձնահատուկ կարևորություն է ունեցել Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը: Դրա լավագույն վկայությունն է դեռևս 1966 թվականի հոկտեմբերին հանուն Հայաստանի անկախության պայքարի հիմնված «Ազգային Միացյալ Կուսակցությունը»<sup>5</sup> (այսուհետ՝ ԱՄԿ), որի հիմնադիրներ Հայկազ Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը և Ստեփան Չատիկյանը ԱՄԿ-ի ստեղծման և գաղափարախոսության հիմքում դրել էին Հայաստանի անկախության վերականգնումը: Ինչպես նշում է այլախոհ Լ. Ալեքսեևան՝ Հայաստանը միակ հանրապետությունն էր ամբողջ ԽՍՀՄ միակուսակցական տարածքում, որտեղ հիմնադրվել և գործում էր անկախության վերականգնման նպատակ հետապնդող կուսակցություն՝ ԱՄԿ-ն<sup>6</sup>: Այն ձևակերպեց ու գաղափարախոսական հիմքերի վրա դրեց մինչ այդ տարատեսակ դրսևորումներ ունեցած Հայաստանի անկախության վերականգնմանն ուղղված ձգտումներն ու քայլերը՝ ինստիտուցիոնալ հիմքեր ստեղծելով նման գործունեության համար, ինչը գրեթե անհնարին էր խորհրդային ամբողջատիրական վարչակարգի պայմաններում: Չնայած խորհրդային ուժային կառույցների հետապնդումներին, կուսակցության տասնյակ անդամների նկատմամբ կիրառվող ձեռքարկալու-

*փաստաթղթերում (1828-1923)*, Հայաստան հրատ., Երևան, 1972 թ., էջ 499-506:

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1191, գ. 5, թթ. 2-9:

<sup>6</sup> **Алексеева Л.**, *История инакомыслия в СССР: новейший период*, Моск. Хельсинк. Группа, Москва, 2012, с. 85

թյուններին, կալանավայրերում ու արքայազններում ստեղծված ծանր պայմաններին ու դաժան բռնաճնշումներին, ԱՄԿ-ի պայքարը եղավ շարունակական՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզում:

Խորհրդային Հայաստանում այլախոհական խմբերի, կազմակերպությունների, շարժումների մասին կարող է ընդհանրական պատկերացում տալ 70-ական թվականներին Խորհրդային Հայաստանի Պետական անվտանգության կոմիտեի պետ Մարիուս Յուզբաշյանի՝ 1979 թվականին Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված տեղեկանք-գրությունը, որտեղ նա, ներկայացնելով Խորհրդային Հայաստանում տիրող իրավիճակը, նշում է, որ «վերջին 12 տարում Հայաստանի ՊՄԿ-ը բացահայտել և լիկվիդացրել է 20-ից ավել անլեգալ հակասովետական ազգայնական խմբեր: Հակասովետական շարժումների մեջ ներգրավված է եղել մոտ 1400 մարդ»<sup>7</sup>: Այս տեղեկանք-գրության մեջ ներկայացվում են մինչև 1979 թվականը տեղի ունեցած իրադարձությունները, բացահայտված խմբերը, կազմակերպությունները և այլախոհական շարժման մասնակիցների թվաքանակը: Եթե բացահայտված խմբերի և կազմակերպությունների մասին հիշատակումը, գուցե և, ամբողջական է, քանի որ Խորհրդային Հայաստանում վերջին այլախոհական կազմակերպությունը ձևավորվել է 1978 թվականին<sup>8</sup>, ապա դրանցում ընդգրկվածների կազմերը շարունակաբար փոխվում էին, քանի որ բռնաճնշումների ենթարկվածների փոխարեն շարքերը հասանալրում էին նորերը, ինչի շնորհիվ այդ գործունեությունը՝ տարբեր դրսևորումներով, շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այդ փաստաթուղթը վկայում է, որ Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարն իսկապես առանցքային տեղ է ունեցել այլախոհական դրսևորումներում:<sup>9</sup> Այդ պայքարի ձևավորման ու ծավալման լուրջ խթան են եղել 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 18:

<sup>8</sup> **Հարությունյան Վ.**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Վան Արյան հրատ., Երևան, 2014, էջ 78-81:

<sup>9</sup> Նույն տեղում:

թուրքական պայմանագիրը<sup>10</sup> և նույն թվականի հոկտեմբերի 13-ին կնքված Գարսի պայմանագիրը<sup>11</sup>, որոնց հիման վրա արձանագրվում էին ոչ միայն խոհրդային Հայաստանի սահմանները Թուրքիայի հետ, այլև Նախիջևանի պատկանելությունը:

Թվում է, թե անկախության վերականգնումից հետո գիտական համապարփակ հետազոտությունների առարկա պետք է դառնային այդ, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման հանգամանքները, իրավաքաղաքական հիմքերն ու հետևանքները Հայաստանի Հանրապետության համար: Առավել ևս, որ ոչ միայն այդ պայմանագրերը շարունակում են գործել<sup>12</sup>, այլև ձևավորվել է աշխարհաքաղաքական այնպիսի իրավիճակ՝ այս անգամ Հայաստանի արևլյան սահմանների կապակցությամբ, որը հղի է նույնպիսի աղետալի հետևանքներով, ինչպիսիք ունեցավ 100 տարի առաջ ձևավորված իրավիճակը արևմտյան սահմանների հետ կապված:

Բնարկե, խնդիրը բարդ է և ունի միջգիտակարգային բնույթ, ինչը պահանջում է մի շարք գիտակարգերում (միջազգային իրավունք, քաղաքագիտություն, պատմագիտություն) կիրառվող անհրաժեշտ գիտելիքների ու մեթոդների իմացություն: Մինչդեռ, առկա են միայն առանձին հրապարակումներ, որոնք նվիրված են հիմնախնդրի այս կամ այն հարցի պատշաճ անդրադարձին: Միաժամանակ, հաճախ հանրությանը մատուցվում են մասնագիտական մոտեցումներից զուրկ, հասարակական-քաղաքական շրջանակների զգացմունքային, անպտուղ, իրականությանը չհամապատասխանող ու հատվածական, քարոզչական նպատակներ հետապնդող տարաբնույթ թեզեր, անգամ, որոշ դեպքերում, 2021թ.

<sup>10</sup> Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 499-506:

<sup>11</sup> Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 517-524:

<sup>12</sup> **Министерство иностранных дел Российской Федерации**, Комментарий официального представителя МИД России М.В.Захаровой в связи со столетней годовщиной подписания Договора о дружбе и братстве между Правительством Российской Социалистической Федеративной Советской Республики и Правительством Великого Национального Собрания Турции, 16.03.2021. [https://mid.ru/ru/foreign\\_policy/news/1417626/](https://mid.ru/ru/foreign_policy/news/1417626/)

մարտի 16-ի պայմանագիրը ներկայացնելով որպես Հայաստանի և հայ ժողովրդի համար շահեկան փաստաթուղթ<sup>13</sup>:

Հողվածում քննարկվում են 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական<sup>14</sup> և նույն թվականի հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի<sup>15</sup> պայմանագրերի օրինականությանն ու դրանց հետևանքներին առնչվող հարցեր, որոնք արդիական հնչեղություն ունեն նաև այսօր՝ թե որպես գործող պայմանագիր, թե որպես ԽՍՀՄ փլուզման հետևանքով գոյացած նոր սահմանների գծման նախադեպեր:

### **Մոսկվայի պայմանագրի հակաօրինականություններն ու հակասությունները**

Պայմանագիրը կնքվել է ՌՄՖՍՀ կառավարության և Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության միջև: Պայմանագրի կողմերն են բացառապես Ռուսաստանն ու Թուրքիան, որոնց ներկայացուցիչներն էլ ստորագրել են պայմանագիրը, ռուսական կողմից՝ Գեորգի Չիչերինը և Ջելալ Կորիսմազովը, իսկ թուրքական կողմից՝ Յուսուֆ Քեմալ բեյը, Ռզա Նուրի բեյը և Ալի Ֆուատ փաշան<sup>16</sup>: Սակայն ռուս-թուրքական պայմանագրի որոշ դրույթներ վերաբերում են ոչ միայն Ռուսաստանին և Թուրքիային, այլ նաև երրորդ երկրների, որոնք պայմանագրի կողմ չեն: Ըստ խնդրո առարկա պայմանագրի 2-րդ հոդվածի՝ «Թուրքիան համաձայնվում է Վրաստանին զիջել Բաթում նավահանգստի ու քաղաքի և սույն պայմանագրի առաջին հոդվածում նշված սահմանագծից դեպի

<sup>13</sup> Պետրոսյան Վ., Մոսկվայի 1921թ. Մարտի 16-ի ռուս թուրքական պայմանագիրը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2021:

<sup>14</sup> Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 499-506:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 517-524

<sup>16</sup> Մինասյան Է., 1921 թ. Մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հետևանքները, *Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ, հեռանկարներ*, «Լուսակն» հրատ., Երևան, 2022, էջ 258:

հյուսիս ընկած և Բաթումի մարզի բաղադրիչ մասը կազմող տարածքի սյուզերենությունը, պայմանով, որ

1. սույն հոդվածում նշված վայրերի բնակչությունը վարչական առումով կօգտվի տեղական լայն ինքնավարությամբ, որը յուրաքանչյուր համայնքին կապահովի կուլտուրական և կրոնական իրավունքներով, և բնակչությունը հնարավորություն կունենա սահմանելու իր ցանկություններին համապատասխանող հողային օրենք,

2. Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստի վրայով Թուրքիա կամ այնտեղից ուղարկվող ամեն տեսակ ապրանքների անմաքս, ազատ տրանզիտի իրավունք, տեղի չեն ունենա խափանումներ, ապրանքների վրա չի դրվի ոչ մի տեսակի տուրք: Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստից օգտվելու իրավունք և դրա համար նրանից չեն գանձվի հատուկ տուրքեր»:

Նույն պայմանագրի 3-րդ հոդվածում նշվում է, որ «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն պայմանագրի 1-ին (C) հավելվածում նշված սահմաններում, կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի երրորդ պետության»<sup>17</sup>:

Երկրորդ և երրորդ հոդվածներն արդեն իսկ վկայում են, որ վերոհիշյալ պայմանագրով արձանագրված ռուս-թուրքական համաձայնությունները չեն սահմանափակվել միայն Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերություններով, այլ նաև ընդգրկել են այլ պետություններ՝ ի դեմս Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, տարածքներին ու շահերին առնչվող դրույթներ: Ընդ որում, այդ հոդվածների կիրառումը հանգեցնելու էր Հայաստանի տարածքային կորուստների, մինչդեռ Վրաստանն ու Ադրբեջանը՝ ունենալու էին ձեռքբերումներ: Մակայն առանց այդ էլ պայմանագիրն արդեն երկու կողմիս խախտում է արձանագրել: Նախ, թուրքական կողմը չի ներկայացրել որևէ պաշտոնական մարմին, որն ուներ

<sup>17</sup> Կիրակոսյան Ջ. Ս., Մահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 500-501:

միջպետական պայմանագրեր կնքելու լիազորություն: Ավելին, 2-րդ և 3-րդ հոդվածները հակասում են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկին, համաձայն որի միջազգային պայմանագիրը կարող է կարգավորել բացառապես այն ստորագող կողմերի վերաբերող հարաբերություններ: Մոսկվայի պայմանագրի հակաօրինականության համատեքստում պետք է ընդգծել, որ անկախ այն հանգամանքից, թե որ պետությունն ինչ շահեց, իսկ մյուսն ինչ կորցրեց, այնուամենայնիվ, կնքված պայմանագիրը, որը մինչև օրս գործում է, հակասում է միջազգային հարաբերություններում ընդունված իրավական կարգավորումներին, որոնք ամրագրված են «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում<sup>18</sup>: Այն արձանագրում է, որ «պայմանագիրը չի ստեղծում պարտավորություններ կամ իրավունքներ երրորդ պետության համար՝ առանց վերջինիս համաձայնության»: Հաջորդ՝ 35-րդ հոդվածը մանրամասնում է. «Երրորդ պետության պարտավորությունն առաջանում է պայմանագրի դրույթից, եթե ... երրորդ երկիրը իր համար ընդունում է այդ պարտավորությունը՝ գրավոր ձևով»: Իհարկե, պայմանագիրը կնքելիս այդ Կոնվենցիան դեռևս չկար, սակայն կային սովորության իրավունքի մի շարք առանցքային սկզբունքներ, որոնք հետագայում ներառվեցին Կոնվենցիայում:<sup>19</sup>

Այսպիսով, ակնհայտ, որ Մոսկվայի պայմանագիրը իրավական ուժ չունի Հայաստանի դեպքում, քանի որ պաշտոնական Երևանը այդ պայմանագրի կողմ չէ և պայմանագրի ստորագրումից հետո գրավոր համաձայնություն չի տվել դրանով սահմանված պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ: Վստահաբար կարելի է արձանագրել, որ Ադրբեջանի դեպքում նման պնդում անել չի կարելի, քանի որ Թուրքիայի ներկայացուցիչները մինչ պայմանագրի ստորագրումը տեղի ունեցած բանակցություններում ներկայացնում էին նաև Բաքվի շահերը: Վրաստանի դեպքում

<sup>18</sup> Vienna Convention on the Law of Treaties (23.05.1969), Article 34.

<sup>19</sup> Boas G., Public International Law: Contemporary Principles and Perspectives, Edward Elgar Publishing, 2013, p. 53.



նույնպես խնդիրներ չկային, քանի որ նրա (հետագայում իր՝ որպես ԽՍՀՄ) տարածքային ձեռքբերումներով հետաքրքրված էր Մոսկվան՝ որպես այդ պայմանագրի ստորագրման հիմնական նպատակներից մեկը: Դա է վկայում Բ. Հարությունյանի ուսումնասիրությունը, ըստ որի, Մոսկվայի պայմանագրի միջոցով Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ, զավթեց Հայաստանի Հանրապետությունից Սուրմալուի գավառը որի դիմաց Վրաստանի ՄԽՀ-ին տրվեց Բաթումի մարզի 3000 կմ<sup>2</sup> տարածք: Եվ քանի որ Սուրմալուի գավառն ուներ 3750 կմ<sup>2</sup>, ապա տարածքային տարբերությունը վերացվեց՝ Հայաստանի Հանրապետությանը զիջելով 750 կմ<sup>2</sup> տարածքով Աղբաբայի շրջանն ու Տիգնիս, Մեծ Ղմլու և Ղըզըլ-դաշ գյուղերը՝ իրենց շրջակա տարածքով<sup>20</sup>: Ակնհայտ է, որ Ռուսաստանը խիստ հետևողական էր յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածքի հետ կապված, սակայն գործարքը դիտարկում էր միայն իր ապագա կայսրության նպատակահարմարության տեսակետից:

Իհարկե, ռուսական դիվանագիտական շրջանակները քաջատեղյակ էին սովորության իրավունքի սկզբունքներին և չէին կարող չիմանալ, որ անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու և բարենպաստ իրավիճակ ստեղծվելու դեպքում Հայաստանը կարող է բարձրաձայնել ռուս-թուրքական զավթողական քաղաքականության իրավական վավերագրի ապօրինությունների մասին: Այդ առումով հետաքրքիր է այդ ժամանակահատվածում միջազգային հարաբերություններում արձանագրված մի իրավաքաղաքական փաստ, որն ուղղակիորեն բացահայտում է Մոսկվայի պայմանագրի կողմ չհանդիսացող երկրի (Հայաստանի) նկատմամբ այն ստորագրած պետությունների զավթողական գործողությունների գիտակցված բնույթը: Պայմանագրի ստորագրումից ընդամենը երեք ամիս անց 1921թ. հուլիսի 19-ին ՌԽՖՍՀ կառավարությունը նոտա է հղել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի և Ճապոնիայի կառավարություններին, որում ռուսա-

<sup>20</sup> Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 58:

կան կողմը նշել է, որ Վաշինգտոնում նախապատրաստվող խաղաղօվկիանոսյան պետությունների կոնֆերանսի ընթացքում ընդունված որոշումները համարվելու են անվավեր, քանի որ այդ որոշումների ընդունման քննարկումներին մասնակցություն չի ունեցել ՌԽՖՍՀ-ն, որը, որպես խախաղօվկիանոսյան տարածաշրջանի պետություն, չի կարողացել պաշտպանել իր շահերը<sup>21</sup>:

Բնականաբար, Թուրքիան ևս քաջատեղյակ էր մշակվող պայմանագրի թերությունների մասին՝ կապված դրա կողմ չհանդիսացող պետությունների նկատմամբ ապօրինի պարտավորություններ սահմանող դրույթների հետ: Ակնհայտորեն, ինչ որ կերպ այդ խնդիրը լուծելու համար ի հայտ է եկել այդ պայմանագրի 8-րդ հոդվածը: Ըստ այդ հոդվածի «Պայմանավորվող երկու կողմերը, պարտավորվում են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տարածքի մի մասի կառավարության դերը ստանձնելու հավակնություն, ինչպես նաև կողմերը պարտավորվում են իրենց տարածքներում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերյալ»<sup>22</sup>:

Չնայած ձևակերպումն ընդհանրական է, սակայն դժվար չէ նկատել, որ Թուրքիայի նման պարտավորությունը խիստ ձևական ու արհեստական է և բխում է զուտ պայմանագրերում փոխադարձ կամ փոխհավասարակշռող պարտավորությունների ամրագրման հանրաճանաչ մոտեցումից: Իրականում այս հոդվածը պայմանագրով էական տարածքային կորուստներ ունեցող Հայաստանի հնարավոր ընդվզումները Ռուսաստանի կողմից զսպման երաշխիքների վերաբերյալ է: Ակնհայտ է, որ սա ոչ միայն ևս մեկ խախտում է միջազգային հարաբերություններում կիրառվող, տվյալ

<sup>21</sup> Документы внешней политики СССР. Т. IV. 19 марта 1921 г.-31 декабря 1921 г., Москва, с. 225.

<sup>22</sup> Կիրակոսյան Ջ. Ս., Սահակյան Ռ.Գ. նշվ. աշխ., էջ 502:

դեպքում՝ այլ երկրի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի, այլև ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, քանի որ ձևակերպումը որևէ սահմանափակում չի դնում հիշատակվող կազմակերպությունների և խմբերի արգելման ձևերի համար՝ չբացատրելով անգամ հարկադրանքը կամ ուժի և ուժի սպառնալիքի կիրառումը:

Սակայն, Մոսկվայի պայմանագրի խնդիրներն այդքանով էլ չեն ավարտվում: 15-րդ հոդվածը վկայում է, որ դեռևս այն նախագծելու ընթացքում նախատեսված էր վերոհիշյալ թերությունները սրբագրող մեկ այլ պայմանագրի կնքում՝ երեք պետությունների հետ: Ըստ այդ հոդվածի, «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց»<sup>23</sup>: Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է 1921թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված պայմանագրին: 15-րդ հոդվածը վկայում է, որ պայմանագրի կողմերը՝ Ռուսաստանն ու Թուրքիան գիտակցում էին, որ նախորդ հոդվածներում թույլ են տվել աղաղակող ապօրինություններ պայմանագրի կողմ չհանդիսացող պետությունների նկատմամբ (հակառակ դեպքում անհրաժեշտ չէին համարի նոր պայմանագրով վավերացնել այդ ոտնձգությունները): Գիտակցում էին, որ զավթողական բնագոյներին հագուրդ տալու խրախճանքում Մոսկվայի պայմանագրում արձանագրել են ցանկալի արդյունքներին հասնելու ցինիկ, հակաօրինական դրսևորումներ: Թվում է, թե կարելի էր կամ մարտի 16-ի պայմանագրի կողմեր դարձնել անդրկովկասյան երեք պետություններին կամ մի քանի ամիս սպասել ու Կարսի պայմանագրով բոլոր հարցերը լուծել՝ առանց մարտի 16-ի պայմանագրի: Սակայն, առաջին դեպքում թերևս դժվար կլիներ դա պարտադրել նոր խորհրդայնացված երկրներին, իսկ երկրորդ դեպքն էլ վտանգավոր կլիներ՝ 7 ամիս ցանկալի գործարքները հետաձգելու համար: Ակնհայտ է, որ

<sup>23</sup> Կիրակոսյան Ջ. Ս., Սահակյան Ռ.Գ. նշվ. աշխ., էջ 504:

վերապահումներ չընդունող 15-րդ հոդվածի առկայությունը վկայում է, որ Ռուսաստանը պատրաստ է եղել դիմել ցանկացած, այդ թվում և ծայրահեղ քայլի (միգուցե նաև դիմել է) և չի խորշել դա պայմանագրում արձանագրելուց: Այսպիսով, Մոսկվայի պայմանագիրը ոչ միայն փորձել է իրավական վավերացում տալ ռուս-թուրքական գործարքին, այլև արձանագրել է դրա ապօրինի և զավթողական բնույթը բացահայտող փաստեր: Դրա արդյունքում Հայաստանը կորցրել է իր տարածքի զգալի մասը՝ Մուրմալուի մարզն ու Նախիջևանը, հանուն այն բանի, որ Թուրքիան Վրաստանին փոխանցի Բաթումի մարզը: Քանի որ Մոսկվայի պայմանագրում Մուրմալուի մարզը և Նախիջևանն ուղղակիորեն չեն հիշատակվում որպես Հայաստանի տարածքներ, կարող է տպավորություն ստեղծվել, որ Հայաստանին դրանց պատկանելը կարող է լինել վիճահարույց: Սակայն կան մի քանի փաստեր, որոնք նման կասկածները փարատում են: Նախ, տեսականորեն այդ տարածքներին կարող էին հավակնել Թուրքիան կամ Հայաստանը՝ հաշվի առնելով դրանց տեղադրումը: Սակայն Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ 1920թ. հունվարի 28-ին ընդունած ազգային ուխտի մեջ այդ տարածքները ներառված չեն, հետևաբար Թուրքիան դրան անգամ չէր հավակնում, հետևաբար ակնհայտորեն դրանք հայկական տարածքներ էին: Կարևոր է նաև, որ եթե դա այդպես չլիներ, Հայաստանը ընդհանրապես՝ ոչ ուղղակիորեն, ոչ անուղղակիորեն, այդ պայմանագրում չէր հիշատակվի:

### **Մոսկվայի պայմանագրի արդի նշանակությունը**

Զարմանալի է, որ անգամ վերը բերված ակնհայտ փաստերի առկայության դեպքում Մոսկվայի պայմանագրի վերաբերյալ հայ իրականության մեջ ներկայացվում են կարծիքներ, որ իբր այն բարենպաստ էր Հայաստանի համար: Մասնավորապես, ըստ Վ. Պետրոսյանի, «այս պայմանագիրն օգտավետ էր Հայաստանի համար, քանի որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանը ձեռք էր բերում շուրջ 30 հազար կմ<sup>2</sup> և չէր պահպանվում Ալեքսանդրապոլի

պայմանագրով սահմանված 9 հազար կմ<sup>2</sup>-ը»<sup>24</sup>: Իհարկե, կարևոր կլինի այդ շրջանի բոլոր պայմանագրերի համեմատական վերլուծությունը, սակայն ժամանակին քարոզչական նպատակներով շրջանառության մեջ դրված «Ալեքսանդրապոլի պայմանագրով սահմանված 9 հազար կմ<sup>2</sup>» թեզի օգտագործումը ոչ միայն սխալ է, այլև վտանգավոր:

Ըստ Է. Մինասյանի, «1921թ մարտի 16-ին ՌԽՖՍՀ-ն և Թուրքիան, առանց Հայաստանի գիտության և մասնակցության, Մոսկվայում կնքեցին մի պայմանագիր, որը տարածքային-սահմանային առումով, ըստ էության, կրկնում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը»<sup>25</sup>: Ա. Ներսիսյանն էլ ընդգծում է, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տարածքների ճշգրտումը ունի կարևորություն այն առումով, որ ոչ օրինական այս պայմանագրով նախատեսված հայ-թուրքական սահմանագիծը հիմնականում հիմք հանդիսացավ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մատնանշած սահմանների համար»<sup>26</sup>: Ավելին, ըստ Բ. Հարությունյանի, Մոսկվայի պայմանագրով Հայաստանին բաժին հասած տարածքները 150 կմ<sup>2</sup> ավելի քիչ էին, քան Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսվածը<sup>27</sup>: Հետևաբար, հրատապ անհրաժեշտություն է թե Մոսկվայի պայմանագրի, թե այդ շրջանի մյուս պայմանագրերի համապարփակ և սպառիչ համեմատական գիտական վերլուծությունը, որը վերջ կդնի այս հարցի տարատեսակ չարչրկումներին: Առավել ևս, որ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերն այսօր էլ գործում են ու դրանք ստեղծողներն այսօր էլ կարևորում են այդ պայմանագրերը: Մասնավորապես, 2011 թվականին Մոսկվայի պայմանագրի 90-ամյակի կապակցությամբ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Ռուսաստանի

<sup>24</sup> Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 134:

<sup>25</sup> Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 282:

<sup>26</sup> Ներսիսյան Ա., Ալեքսանդրապոլի պայմանագրի քննական վերլուծություն, *Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես*, թիվ 5(10), 2020, էջ 5:

<sup>27</sup> Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 51:

նախագահ Դմիտրի Մեդվեդևին է նվիրել պայմանագրի կրկնօրինակը, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից փաստաթղթի ստորագրման 90-ամյակին նվիրված հոբելյանական նամականիշը: 2021թ. մարտի 16-ին, պայմանագրի ստորագրումից 100 տարի անց, Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարարության մամլո խոսնակ Մարիա Զախարովան՝ խոսելով Մոսկվայի պայմանագրի մասին նշել է, որ Մոսկվայի պայմանագրի ոգուն և սկզբունքներին հետևելը, որը վերջին հարյուր տարվա ընթացքում չի կորցրել իր քաղաքական և պատմական արդիականությունը, ծառայում է որպես Ռուսաստանի Դաշնության եւ Թուրքիայի հանրապետության միջև հարաբերությունների հետագա զարգացման երաշխիք: Ավելի ուշ, 2016թ-ին, երբ սրվել էին ռուս-թուրքական հարաբերությունները, ՌԴ պետդումայի՝ Կոմունիստական և «Արդար Ռուսաստան» կուսակցությունների պատգամավորները, դիմել էին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին և Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին, որպեսզի Ռուսաստանը չեղյալ հայտարարի 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը, որով հնարավոր կլինի սաստել Թուրքիային՝ զերծ պահելով նոր սադրանքներից: Սակայն ՌԴ Արտաքին գործերի նախարարությունը պաշտոնապես հայտարարեց, որ Մոսկվայի պայմանագիրը չի կարող չեղարկվել, քանի որ «միջազգային պրակտիկայում խաղաղ պայմանագրերը, որոնք կարգավորում են պետությունների սահմանները, չեն կարող չեղարկվել»: Ակնհայտ է, որ եթե սեփական պարտավորությունների և իրավունքների կապակցությամբ Ռուսաստանը կարող է չհիմնավորված կարծիք ներկայացնել, ապա պայմանագրի կողմ չհանդիսացող պետություններին նման ձևակերպումներով պարտաորություններ թելադրելը նույնքան ապօրինի է, որքան նման պարտավորությունների արձանագրումը պայմանագրում: Իհարկե, Ռուսաստանի վերաբերմունքը միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների նկատմամբ հանրահայտ է և, մասնավորապես, այս հոդվածում էլ դրա ցայտուն օրինակներ կան: Սակայն ակնհայտ է, որ յուրաքանչյուր երևույթ, առավել ևս

պետության սահմանների ձևավորման գործընթացը պետք է ստանա համարժեք մասնագիտական գնահատական: Հատկանշական է, որ թեև հողվածում բացահայտված է Մոսկվայի պայմանագրով իրականացված ռուս-թուրքական գործարքի զավթողական ու ապօրինի բնույթը, սակայն կարևոր է նաև արձանագրել, որ դրանում ներգրավված հինգ կողմերից միայն Հայաստանը կորցրեց տարածքներ: Հետևաբար կարևոր է բացահայտել, թե ինչու է Հայաստանը միջազգային հարաբերություններում պարբերաբար հայտնվում անօգնական վիճակներում: Մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի մանրակրկիտ վերլուծության արդիականությունը պայմանավորված է ոչ միայն պայմանագրի կարգավիճակով՝ այն այսօր էլ գործում է, այլև այն հանգամանքով, որ նույնաբնույթ գործընթացներ տեղի են ունենում նաև արդի միջազգային հարաբերություններում:

### Եզրակացություն

Խնդրո առարկա պայմանագրերի միջգիտակարգային վերլուծությունը վկայում է, որ

1. դրանք ոչ միայն ունեն կոպիտ հակասություններ միջազգային սովորության իրավունքի սկզբունքների հետ՝ դրույթներ պարունակելով պայմանագրի կողմ չհանդիսացող պետությունների տարածքների նկատմամբ մանիպուլյացիաների վերաբերյալ, այլև արձանագրում են անկախ պպետություններին ստիպողաբար դրդելու երրորդ երկրի շահերից բխող մոտեցումների համաձայնելու փաստեր:
2. Դիտարկվող Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի դրույթների հիման վրա տեղի ունեցած տարածքային փոփոխությունների արդյունքում Հայաստանն ունեցել է զգալի կորուստներ՝ Նախիջևան և Մուրմալուի գավառ, իսկ Վրաստանն ու Ադրբեջանը՝ ձեռքբերումներ Հայաստանի կորուստների հաշվին:
3. Թեև Կարսի պայմանագիրը նպատակ ուներ վավերական տեսք տալու Մոսկվայի պայմանագրի ապօրինի դրույթներին, որոնք

վերաբերում էին կողմ չհանդիսացող երկրների տարածքներին ու իրավունքներին, սակայն այն, իր հերթին, նոր ապօրինություններ է արձանագրել:

4. Մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի մանրակրկիտ վերլուծության արդիականությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ պայմանագիրն այսօր էլ գործում է, այլև այն հանգամանքով, որ Հայաստանին առնչվող նույնաբնույթ գործընթացներ տեղի են ունենում նաև արդի միջազգային հարաբերություններում:

### **The Moscow Treaty of March 16, 1921 as an incentive to the formation of dissent in Armenia and the "legal" basis for the dismemberment of the country**

SHAHEN HARUTYUNYAN

*Yerevan State University*

Although more than a hundred years have passed since the signing of the Russian-Turkish Treaty of March 16, 1921 and the Treaty of Kars of October 13, 1921 their study remains relevant not only because for decades they have had a serious impact in terms of the formation of dissident movements in Armenia, but also because the processes of their preparation and signing in many ways, they resemble the current relationship. Obviously, that the absence of their full-fledged scientific research so far today leads to new mistakes and losses. The article reveals the mistakes made in the development and conclusion of these treaties, their contradictions to international law, the catastrophic consequences of sacrificing national interests to fragmentary and abstract interests in complex geopolitical processes of struggle.



DOI: 10.19266/1829-4286-2023-02-49-78

**Ռուս-թուրքական մրցակցային/համագործակցային  
հարաբերությունների բնույթն ու հեռանկարները Հարավային  
Կովկասում**

ԱՐՓԻՆԵ ԵՍԱՅԱՆ

*Բյուրուսլի անվան պետական համալսարան*

Հոդվածում ուսումնասիրվել է ռուս-թուրքական համագործակցության բնույթն ու ազդեցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում: Բացահայտվել են դրանց երկակի բնույթի պատճառները, նաև, թե որ դեպքերում են դրանք մրցակցային, որ դեպքերում՝ համագործակցային: Դիտարկվել են Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների առանձնահատկությունները ընդհանրապես և Հարավային Կովկասում՝ մասնավորապես, նրանց վարած քաղաքականության հիմքերն ու նպատակները, գործիքակազմը: Ներկայացվել են Հարավային Կովկասում այդ պետությունների մրցակցության և շահերի բախման հիմնական կիզակետերը, առաջացած լարվածության դեպքում դա մեղմելու համար երկու պետությունների վարած քաղաքականությունը: Որպես առանցքային իրադարձություններ քննարկվել են ռուս-վրացական և հայ-ադրբեջանական պատերազմները, առանձնացվել են դրանց հետևանքներն ու ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ աշխարհաքաղաքական դինամիկ զարգացումների և սուր մրցապայքարի համատեքստում Հարավային Կովկասում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերը սկսվել են ռուս-վրացական 5-օրյա պատերազմով և շարունակվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող զարգացումներով: Դրանց վերջնական հանգուցալուծումը պայմանավորված կլինի հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ընթացքով և ելքով:

**Բանալի բառեր**

Ռուսաստան, Թուրքիա, համագործակցություն, մրցակցություն, Հարավային Կովկաս

## Նախաբան

Ավանդաբար հակասական՝ միաժամանակ և՛ համագործակցային, և՛ մրցակցային բնորոշվող ռուս-թուրքական հարաբերությունների<sup>1</sup> մրցակցային բաղադրիչի կիզակետերից մեկը Հարավային Կովկասն է, որը դարձել է նոր աշխարհակարգի հաստատման համար մրցակցության թատերաբեմ: Որպես Եվրասիական կենտրոնի մի մաս<sup>2</sup>, որի համար ընթանում է սուր աշխարհաքաղաքական պայքար, Հարավային Կովկասի նշանակությունը գնալով ավելի է մեծանում և այդտեղ ընթացող իրադարձություններն էլ ավելի դինամիկ բնույթ են ստանում: Մի կողմից տարածաշրջանում իրենց դիրքերն են փորձում բարելավել Արևմուտքն ու Թուրքիան, իսկ մյուս կողմից թուլանում են Ռուսաստանի դիրքերը, որոնց վերականգնման համար Մոսկվան ելքեր է որոնում:

Այս ամենը տարածաշրջանում երկու ազդեցիկ պետությունների՝ Ռուսաստանի ու Թուրքիայի մրցապայքարի ուսումնասիրության անհարժեշտությունն էլ ավելի է մեծացնում՝ հասկանալու համար տարածաշրջանում այդ պետությունների շահերի բախման կետերը, պատճառները և հետևանքները, մրցակցության/համագործակցության հնարավորություններն ու հետևանքները: Քանի որ աշխարհաքաղաքական մրցապայքարը դառնում է ավելի ու ավելի կոշտ ու անհանդուրժող, մեծանում են ռուս-թուրքական հարաբերություններում «համագործակցություն/մրցակցություն» հավասարակշռության մարտահրավերները: Հոդվածի նպատակն է պարզել, թե որոնք են մրցակցության ու հավասարակշռության առավել զգայուն տարրերը և ինչպիսին են դրանց պաշարները հավասարակշռության խախտմանը դիմակայելու համար:

<sup>1</sup> **Թորոսյան Տ., Արշակյան Գ.**, Ռուս-թուրքական մրցակցություն, թե՞ համագործակցություն, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(5), 2016, էջ 5-34

<sup>2</sup> **Mackinder H.**, The Geographical Pivot of History, *The Geographical Journal*, 1904, 23(4), 421-437.

Հարավային Կովկասում Ռուսաստանի և Թուրքիայի վարած քաղաքականության մրցակցային բաղադրիչն ուղղված է տարածաշրջանում սեփական ազդեցության հաստատման ու մյուսի ազդեցության չեզոքացմանը, իսկ համագործակցային բաղադրիչը՝ «գործընկերոջը» մյուս մրցակիցների դեմ օգտագործմանը:

Հարավային Կովկասը, զբաղեցնելով կենտրոնական դիրք արևմուտքի և արևելքի, հյուսիս և հարավի միջև, ունենալով տրանսպորտային հանգույց դառնալու հեռանկարներ և լինելով էներգետիկ պաշարների տարանցիկ գոտի, կարևոր նշանակություն ունի տարբեր արտատարածաշրջանային տերությունների համար՝ այդ թվում և՛ հարևան, և՛ ոչ հարևան: Նոր աշխարհակարգի հաստատման համար գերտերությունների միջև լարված մրցակցությամբ պայմանավորված աշխարհի ներկայիս անկայուն իրավիճակում Հարավային Կովկասի նշանակությունն էլ ավելի է մեծացել և ռուս-թուրքական մրցակցության տիրույթից տեղափոխվել ավելի լայն՝ Արևելք-Արևմուտք մրցակցության տիրույթ: Առանց ուղղակի մասնակցության զարգացումների վրա փորձում է ազդել Իրանը, դրանց նկատմամբ տեսանելի հետաքրքրություն են դրսևորում Հնդկաստանն ու Չինաստանը:

Տարածաշրջանը բնորոշվում է էթնոքաղաքական հակամարտությունների առկայությամբ, դրանց պարբերաբար սրմամբ, այդ հակամարտություններում տարածաշրջանի բոլոր պետությունների ներգրավմամբ և արտաքին ուժերի մասնակցությամբ ու դրանցով իսկ պայմանավորված՝ տարբեր պետությունների շահերի բախմամբ: Տարածաշրջանում հատկապես ակտիվ են երեք հարևան ազդեցիկ տերությունները՝ Ռուսաստան, Իրան և Թուրքիա, որոնք մրցակցում են տարածաշրջանում իրենց շահերը առաջ տանելու և ազդեցությունը տարածելու համար: Այդ մրցակցությունը հատկապես սուր է արտահայտված Թուրքիայի և Ռուսաստանի միջև:

Արցախի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններն ուղղակիորեն ազդում են տարածաշրջանի երեք երկրների և հարևան երկրների միջև հարաբերությունների վրա: Աշխարհաքաղաքական առումով տարածաշրջանի էթնոքաղաքա-

կան հակամարտությունները թիրախ են դառնում առավել հզոր պետությունների քաղաքական, երբեմն էլ ռազմական միջամտության համար՝ այդպիսով դառնալով այդ պետությունների ազդեցության տարածման գործոններ<sup>3</sup>: Արդյունքում բուն հակամարտությունից բացի ևս մեկ «ճակատ» է բացվում տարածաշրջանային և աշխարհաքաղաքական գործընթացներում ազդեցիկ պետությունների մրցակցության համատեքստում: Այդպիսի տերություններից առավել շահգրգռված են տարածաշրջանի հարևան պետություններ Ռուսաստանն ու Թուրքիան, որոնք մրցակցում են տարածաշրջանի երկրներին իրենց ազդեցության գոտի ընդգրկելու և կասայան էներգակիրներն իրենց նախընտրելի ուղիներով տեղափոխելու համար:

Ռուսաստանը ներգրավված է տարածաշրջանի բոլոր հակամարտություններում՝ պահպանելով իր ծանրակշիռ դերը տարածաշրջանի գործընթացներում: Դա պայմանավորված է Ռուսաստանի համար Հարավային Կովկասի կարևորագույն նշանակությամբ՝ որպես իր համար կենսական շահերի գոտի<sup>4</sup>: Իսկ Թուրքիայի համար Հարավային Կովկասը կարևոր է տարածաշրջանային գերտերություն դառնալու և ավելի հեռուն գնացող պանթյուրքիստական ծրագրերն իրականացնելու համար:

### **Ռուս-թուրքական հարաբերությունները. մրցակցությունից՝ համագործակցություն**

Հարավային Կովկասում ռուս-թուրքական հարաբերությունների խորքային պատճառները, նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները գնահատելու համար հարկ է անդրադառնալ դրանց երկակի բնույթը պայմանավորող հանգա-

<sup>3</sup> Davtyan E., South Caucasus and the Global Geopolitics, *Proceedings of INTCESS14-International Conference on Education and Social Sciences*, Istanbul, 3-5 February, 2014.

<sup>4</sup> Нейшн Р. К., Россия и Кавказ, *Connections. The Quarterly Journal*, 2015, 14(2), 1-13.

մանքներին, որոնք ձևավորվել են դեռևս նախորդ դարի երկրորդ տասնամյակից, երբ փլուզվել էին Օսմանյան և Ռուսական կայսրությունները և այդ լայնարձակ տարածքներում փորձ էր արվում ստեղծել միանգամայն նոր, ինչպես ռուսական, այնպես էլ թուրքական պետություններ:<sup>5</sup> Թեև այդ շրջանին նախորդել էր մի շարք արյունալի պատերազմներով հագեցած տևական ժամանակահատված, որի ընթացքում կողմերը նպատակ ունեին ճշտելու Հարավային Կովկասում, Բալկաններում ու սևծովյան ավազանում իրենց տարածքներն ու ազդեցության գոտիները, սակայն 20-րդ դարաշրջանի առաջին քառորդում բախվեցին նույնաբնույթ խնդրի: Երկու պետություններն էլ այդ շրջանում հայտնվել էին Արևմուտքի քաղաքական շրջափակման մեջ: Ու այլ ելք չէր մնում, քան փորձել միասին դուրս գալ ստեղծված իրավիճակից: Առավել ևս, որ այդ շրջանում երկուսի համար էլ առավել գրավչ հեռանկարը Հարավային Կովկասում ազդեցության հաստատումն էր: Սակայն, քանի որ հնարավոր չէ նման ոչ մեծ տարածքը բաժանել իրար մեջ, թուրքերը համաձայնեցին, որ տարածաշրջանն ամբողջությամբ լինի նորաստեղծ կոմունիստական պետության կազմում՝ դրա փոխարեն Թուրքիային տրամադրվի զենք, զինամթերք, ոսկի՝ պետության պաշտպանության ու կայացման համար, իսկ թուրքական միավորման տեսակետից ռազմավարական նշանակություն ունեցող հայկական տարածքները՝ Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը, հայտնվեն Ադրբեջանի կազմում: Քանի որ վերջին հարյուրամյակներում պարբերաբար, յուրաքանչյուր դարը մեկ տեղի են ունենում աշխարհաքաղաքական փլուզումներ ու ազդեցության գոտիների վերաբաժանումներ, թուրքական միավորման խնդիրները մնում էին հաջորդ նման շրջանի համար: Նման հնարավորություն առաջացավ ԽՍՀՄ

---

<sup>5</sup> **Թորոսյան Տ., Արշակյան Գ.**, Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 2(2), 2014, 141-162.

փլուզումով:<sup>6</sup> Ուժային վակուումը Հարավային Կովկասում և նախկին ԽՍՀՄ թյուրքալեզու պետություններում Թուրքիային հնարավորություն էր տալիս այդ տարածաշրջաններում փորձել տարածել իր ազդեցությունը: 90-ականներին այդ փորձը չհաջողվեց, թեև Ռուսաստանը 90-ական թվականներին կենտրոնացած էր հիմնականում ներքին խնդիրների վրա:<sup>7</sup>

Ռազմական, տնտեսական, գաղափարական և այլ գործոնները հաճախ օգտագործվում են բնութագրելու համար ռուս-թուրքական կոնֆլիկտային և համագործակցային հարաբերությունները: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել թուրք-ռուսական համագործակցության զարգացման երեք գործոն՝ տնտեսական հարցերում շահերի համընկում, Արմուտքի հետ խնդիրներ և քաղաքական լիդերների նմանություն: Երկու պետությունները հատկապես կենտրոնանում են տնտեսական համագործակցության հեռանկարների վրա: 1990-ականների սկզբին Ռուսաստանի և Թուրքիայի միջև աշխարհաքաղաքական սուր մրցակցության կարգավորման համար մեծ նշանակություն ունեին տնտեսական շահերը: Թուրք-ռուսական հարաբերությունների աննախադեպ զարգացումը առևտրատնտեսական ոլորտում արձանագրվել է դեռևս 1990-ական թվականների երկրորդ կեսից և վերածվել աշխարհառազմավարական գործոնի, կատարել այդ հարթությունում կայունացնող դեր<sup>8</sup>: Մյուս կողմից, չնայած տարածաշրջանային բախվող շահերին, Ռուսաստանի ազդեցության տիրույթ համարվող տարածքներից Թուրքիայի նահանջը<sup>9</sup>, երկու պետությունների անհամաձայնությունն արևմտյան գերիշ-

<sup>6</sup> **Torosyan T.** The Return of Turkey. *Russia in Global Affairs*, July-September. 2009, 3, 120-129.

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> **Արշակյան Գ.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը Հարավային Կովկասում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության շրջանում, 2019, Երևան, Արտագերս, էջ 62-64:

<sup>9</sup> **Öniş Z., Yılmaz Ş.**, Turkey and Russia in a Shifting Global Order: Cooperation, Conflict and Asymmetric Interdependence in a Turbulent Region, *Third World Quarterly*, 2015, 37(1), 77.

խանությամբ միջազգային համակարգի ձևավորմանը աշխարհաքաղաքական համագործակցության նրանց հիմնական խթաններից է:

Այնուամենայնիվ, չնայած Թուրքիան և Ռուսաստանը շարունակում են համագործակցությունն ընդլայնել և մեղմել հակասություններն ու թույլ չտալ, որ դրանք հասնեն անդառնալի կետի (որի ակնառու օրինակ է 2015թ. SU-24-ի կործանումից մեկ տարի չանցած ռուս-թուրքական հարաբերությունների վերականգնումն ու զարգացումը<sup>10</sup>), սակայն շատ հարցերում էլ մնում են հակամարտող կողմեր, ինչպես օրինակ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում:

Ուկրաինական ճգնաժամի համատեքստում Թուրքիան փորձում է պահպանել հավասարակշռություն՝ մի կողմից խորացնելով հարաբերությունները Ուկրաինայի հետ և վաճառելով զենք ու զինամթերք, մյուս կողմից՝ չմիանալով Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներին, ավելին՝ ամրապնդելով Ռուսաստանի հետ տնտեսական կապերը և փորձելով հանդես գալ որպես միջնորդ հակամարտության լուծման համար: Թուրքիայի այսպիսի մոտեցումը քիչ թե շատ նման է ռուս-վրացական պատերազմի ժամանակ ցուցաբերած մոտեցմանը: Մի դեպքում Թուրքիան հայտարարում էր, որ պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, մյուս դեպքում՝ Ուկրաինայի, սակայն միևնույն ժամանակ շարունակում է համագործակցությունը Ռուսաստանի հետ: Թուրքիայի այսպիսի զգուշավոր դիրքորոշումները Ռուսաստանն ընկալում է որպես Անկարայի ինքնուրույնության դրսևորում<sup>11</sup>:

Ռազմական-ստրատեգիական սպառնալիքների հավասարակշռության փոփոխությունը սահմանում է ռուս-թուրքական

<sup>10</sup> **Erşen E.**, Evaluating the Fighter Jet Crisis in Turkish-Russian Relations, *Insight Turkey*, 2017, 19(4), 85-103.

<sup>11</sup> **Isachenko D.**, Turkey and Russia: The Logic of Conflictual Cooperation, SWP Research Paper 7, 2021, German Institute for International and Security Affairs, DOI: 10.18449/2021RP07

հարաբերությունների բնույթը: Հատկապես այսօր, երբ աշխարհը միաբնեռության փոխարեն գնում է այլ՝ բազմաբնեռ աշխարհակարգի ձևավորման ճանապարհով, տարբեր տերություններ, որոնք ձգտում են ազդեցության տարածման, ունեն նաև նկրտումներ գերտերություն դառնալու համար՝ առնվազն տարածաշրջանային մակարդակով: Այս համատեքստում Թուրքիան ձգտում է առավել անկախ քաղաքականության՝ այդ ճանապարհին համագործակցելով նաև Ռուսաստանի հետ և երբեմն հակադրվելով ԱՄՆ-ին: Դրան նպաստում են վերոնշյալ տնտեսական շահերը, որոնք ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմք են դարձել, ինչպես օրինակ՝ սիրիական և ուկրաինական ճգնաժամերի դեպքում: Երբ քաղաքական շահերը տարբերվում են, սակայն չեն խզվում տնտեսական կապերը, վերջինները պատճառ են դառնում քաղաքական շահերի փոխզիջումային համադրման համար: Ընդ որում, աշխատելով համատեղ ռազամավարական նախագծերի իրականացման ուղղությամբ, նրանք միմյանց քաղաքականությանն ավելի մեծ կշիռ են հաղորդում այլ կողմերի հետ հարաբերություններում:

### **Ռուս-թուրքական հարաբերությունները ռուս-վարցական 5-օրյա պատերազմի համատեքստում**

Տարածաշրջանում ուժերի հավասարակշռության փոփոխման մեկնարկը տվել է Վրաստանը: Ինչպես և բոլոր հետխորհրդային երկրներում, Վրաստանում ևս կառուցվածքային վերափոխումները սկիզբ են առել անկախացումից անմիջապես հետո, սակայն, որպես կանոն, այդ գործընթացը ժամանակագրորեն կարելի է բաժանել երկու մասի՝ մինչև 2003թ. և 2003 թվականից կամ «վարդերի» հեղափոխությունից հետո: Անկախությունից հետո Վրաստանում ծայր առած խնդիրները հանգեցրին հասարակական դժգոհությունների, որոնք էլ ավելի մեծացան, և 2003 թ. նոյեմբերի 2-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ի վերջո դարձան հեղափոխության առիթ, քանի որ ընտրությունները



դիտարկած ոչ կառավարական կազմակերպությունները հայտնել էին բազմաթիվ խախտումների մասին: Ստեղծված իրավիճակը հարմար առիթ էր Միացյալ Նահանգների համար՝ «գունավոր» հեղափոխության միջոցով ամրապնդելու իր ազդեցությունը Վրաստանում՝ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հիմնավորումով<sup>12</sup>: Հարկ է նաև նշել, որ հեղափոխությանը հաջորդեց 2008թ. ռուս-վրացական 5-օրյա պատերազմը, որը ավարտվեց Վրաստանի պարտությամբ<sup>13</sup>:

Ընդհանուր առմամբ, «վարդերի» հեղափոխությունը նպաստեց, որպեսզի Վրաստանը մերձենա արևմտյան ինստիտուտների հետ: Դա լիովին փոխեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը, իսկ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը սկսեց մեծանալ: Այն խորհրդանշում է Վրաստանում ամբողջությամբ և տարածաշրջանում մասամբ Ռուսաստանի հեգեմոնիայի ավարտը, և միաժամանակ Միացյալ Նահանգների դիրքերի ամրապնդումը: Վրաստանի համար նոր տարածաշրջանային քաղաքականության կարևոր ուղղություններից դարձավ Թուրքիայի և Ադրբեյջանի հետ ռազմավարական, խոր և բազմաշերտ համագործակցությունը: Ընդհանուր առմամբ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը ենթադրում էր Վրաստանի արևմտականացում գրեթե բոլոր ուղղություններով: Դրան հատկապես նպաստեցին ռուս-վրացական հնգօրյա պատերազմը: Վրաստանը քաղաքական, տնտեսական և ռազմական կապերը էլ ավելի խորացրեց ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ ընդհանրապես<sup>14</sup>:

<sup>12</sup> **Չախոյան Է.**, Վրաստանում «վարդերի հեղափոխության» ԱՄՆ-ի աջակցության հիմնական պատճառները, դերն ու նշանակությունը, *Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ*, 2022, 3, 46-62:

<sup>13</sup> **Պետրոսյան Մ.**, Հարավային Կովկասի հակամարտությունների համեմատական վերլուծություն, Երևան, Հեղ. հրատ., 2020, 67-93:

<sup>14</sup> **Davtyan E.**, South Caucasus and the Global Geopolitics, *Proceedings of INTCESS14-International Conference on Education and Social Sciences*, Istanbul, 3-5 February, 2014.

Վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունները կարևոր տեղ են զբաղեցնում Հարավային Կովկասում ռուս-թուրքական աշխարհաքաղաքական մրցակցության շրջանակներում: Ռուսաստանի ներգրավվածությունը վրաց-աբխազական պատերազմում պայմանավորված է ռազմավարական, աշխարհաքաղաքական և տնտեսական մի շարք գործոններով: Գտնվելով Սևծովյան ավազանում՝ Աբխազիան մշտապես աշխարհաքաղաքական մեծ կարևորություն է ներկայացրել Ռուսաստանի համար<sup>15</sup>: Ի տարբերություն Արցախի, այն անմիջապես սահմանակից է Ռուսաստանին:

Թուրքիայի դիրքորոշումը այս հակամարտությունում միանշանակ չէր, և Անկարան կանգնել էր լուրջ երկընտրանքի առջև: Թե՛ Վրաստանը, թե՛ Աբխազիան մեծ կարևորություն էին ներկայացնում Անկարայի համար: Թուրքիայի համար կարևոր էր Վրաստանի աշխարհագրական դիրքը, որը կապող օղակ էր Ադրբեջանի և Թուրքիայի միջև: Վրաստանը ևս կարևորում էր Թուրքիայի հետ հարաբերությունները, քանի որ ձգտում էր դրանք զարգացնելով նվազեցնել Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, ուստի Վրաստանը Թուրքիայի հետ հարաբերությունները դիտարկում էր Արևմուտքի հետ հարաբերությունների համատեքստում, իսկ թուրքական սահմանն ընկալում էր որպես ՆԱՏՕ-ի սահման: Այդպիսով՝ ենթադրվում էր, որ Թուրքիայի հետ մերձեցումը կօգներ Վրաստանին սերտ հարաբերություններ հաստատել Հյուսիսատլանտյան դաշինքի և առհասարակ Արևմուտքի հետ<sup>16</sup>:

<sup>15</sup> Մարտիրոսյան Ս., Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը Հարավային Կովկասում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2020, 2(14), 133-157:

<sup>16</sup>Александрян Л., Эволюция турецко-грузинских отношений: новые тенденции (экономический и военно-политический аспекты), *Проблемы постсоветского пространства*, 2017, 4(2), 148-158; Մարտիրոսյան Ս., նշվ. աշխ.:

Թուրքիան մի կողմից պատուհան է ԱՄՆ-ի և Արևմուտքի համար դեպի Հարավային Կովկաս, մյուս կողմից, Վրաստանի համար՝ դեպի ԱՄՆ և Արևմուտք: ԵՄ անդամակցության նպատակով Թուրքիայի բանակցությունները մեծ կարևորություն ունեն Վրաստանի համար, քանի որ նա ցանկանում է դուրս գալ Կովկասյան պարփակված տարածաշրջանից: Բացի այդ, տարածաշրջանի մյուս մեծ տերության՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կոնֆլիկտայնությունը ստիպում է Վրաստանին գտնել դրա բալանսավորումը, հատկապես տնտեսական մարտահրավերները հաղթահարելու համար, և այդ բալանսավորող տերությունը Թուրքիան է<sup>17</sup>:

Թուրքիան արխագական հակամարտության ժամանակ հայտարարեց, որ հարգում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Թուրքիան մի շարք հաղորդակցային և էներգետիկ ծրագրեր ուներ Վրաստանի հետ: Անկարան գիտակցում էր, որ Մոսկվայի ազդեցության ուժեղացման դեպքում վտանգի տակ կարող են հայտնվել իր ծրագրերը, ուստի քայլեր ձեռնարկեց Վրաստանի հետ հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ<sup>18</sup>:

Արխագիայի և Հարավային Օսիայի անկախությունը ճանաչելով՝ Մոսկվան ամրապնդեց իր ազդեցությունը Հարավային Կովկասի այդ տարածքներում, սակայն վերջնականապես զրկվեց Վրաստանից, քանի որ վերջինս հրաժարվեց Ռուսաստանից՝ «ընտրելով» Արևմուտքը: 2007-2008թթ.-ից սկսած վերադառնալով համաշխարհային քաղաքականություն՝ Ռուսաստանը կարողացավ ամրապնդել իր դիրքերը և վերածվել ուժային ազդեցիկ կենտրոնի: Իսկ այդ համատեքստում Ռուսաստանի համար կարևոր էր Անկարայի հետ հարաբերությունների կայունացումը, երբ ստեղծվել էին դրա բոլոր նախադրյալները<sup>19</sup>: Վրաստանն էլ իր հերթին

<sup>17</sup> **Balci B.**, Strengths and Constraints of Turkish Policy in the South Caucasus, *Insight Turkey*, 2014, 16(2), 43-52.

<sup>18</sup> **Մարտիրոսյան Ս.**, նշվ. աշխ.:

<sup>19</sup> Նույն տեղում:

կարողացավ դուրս գալ ռուսական ազդեցության գոտուց, որը իհարկե անհետևանք չմնաց. Վրաստանը ունեցավ տարածքային կորուստներ և չնայած զարգացման արևմտյան ուղին բռնեց, սակայն մինչ օրս էլ դեռ չի հաջողվել հասնել ԵՄ և առավել ևս ՆԱՏՕ անդամակցության, որը, սակայն, ստեղծված հակամարտությունների բռնկմամբ պայմանավորված աշխարհաքաղաքական այս բարդ և բեկումնային իրավիճակում անվտանգության ապահովման համար ավելի է կարևորվում, քան ԵՄ անդամակցությունը:

Չնայած պատերազմի ելքը ստիպեց Վրաստանին առավել սերտ հարաբերություններ կառուցել Թուրքիայի հետ, սակայն այստեղ էլ ի հայտ եկավ որոշ լարվածություն: Թուրքիան չդատապարտեց Ռուսաստանին՝ «անհամաչափ» ուժի կիրառման, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչման համար: Վրաց-ռուսական պատերազմում Թուրքիան պաշտպանել էր Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը, սակայն, միաժամանակ, ընդունել էր Ռուսաստանի «բարոյական իրավունք»-ը՝ առանցքային դերակատարություն ունենալու հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Ռուս-վրացական պատերազմական գործողությունների ավարտից անմիջապես հետո պաշտոնական Անկարան, հղում անելով Մոնտրոյոյի կոնվենցիային, թույլ չտվեց Վրաստանին օգնություն տանող ԱՄՆ ռազմանավերին թուրքական նեղուցներով մուտք գործել սևծովյան տարածաշրջան: Այդ քայլը խիստ քննադատության արժանացավ Արևմուտքում: Այս քայլով Թուրքիան ցանկանում էր ոչ միայն պահպանել իր դիրքերը տարածաշրջանում, այլև ԱՄՆ-ին ցույց տալ իր նշանակալի դերակատարությունն ու անհրաժեշտության պահին ինքնուրույն գործելու վճռականությունը (այս նույն տրամաբանության մեջ է տեղավորվում նաև ռուս-ուկրաինական պատերազմում Ռուսաստանի դեմ պատժամիջոցներին Թուրքիայի չմիանալը): Միաժամանակ, դա կարևոր ուղերձ էր Ռուսաստանին՝ որպես աջակցություն:

Այսպիսով՝ ուրվագծվում են 2008թ. ռուս-վրացական պատերազմի մի քանի լուրջ աշխարհաքաղաքական հետևանքներ: Վրաստան-Ռուսաստան դիվանագիտական հարաբերությունների խզման արդյունքում տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը նվազեց, իսկ այդ բացը լրացնել են շտապում ԵՄ-ն և Թուրքիան: Պատերազմը ապացուցում է, թե որքան անկայուն է այս տարածաշրջանը և ուր կարող են հասնել հակամարտությունների սրացումները<sup>20</sup>: Վիճելի տարածքների կորուստը խթան դարձավ հակառուսական հիմքերով ԱՄՆ-Վրաստան սերտ համագործակցության համար: Վրաստանը զրկվեց Աբխազիան և Հարավային Օսիան վերադարձնելու որևէ հնարավորությունից: Բացի այդ, ԱՄՆ-ի և Եվրոպայի տնտեսական և ֆինանսական ներթափանցումը Վրաստան մեծապես խախտեց տարածաշրջանի ուժային հավասարակշռությունը՝ Ռուսաստանին զրկելով Վրաստանի վրա ճնշում գործադրելու լծակներից: Աշխարհաքաղաքական նոր իրավիճակը ենթադրում էր Վրաստան-Թուրքիա, Վրաստան-Ադրբեջան հարաբերությունների ակտիվացում քաղաքական, տնտեսական, ֆինանսական և նույնիսկ ռազմական ոլորտում<sup>21</sup>: Եռակողմ հարաբերությունները կազմակերպվեցին նոր ձևաչափով՝ 2012թ. Տրապիզոնի համաձայնագրով, որտեղ հատկապես ընդգծվում է ինքնիշխանության և տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքը, միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտությունը<sup>22</sup>:

Ռուսաստան-Վրաստան սահմանի փակումը Վրաստանին տնտեսապես կախվածության մեջ դրեց Ադրբեջանից և Թուրքիայից:

<sup>20</sup> **Kakachia K. K.**, Challenges to the South Caucasus regional security aftermath of Russian–Georgian conflict: Hegemonic stability or new partnership? *Journal of Eurasian Studies*, 2011, 2, 15-20.

<sup>21</sup> **Davtyan E.**, նշվ. աշխ.:

<sup>22</sup> Trabzon Declaration Of The Ministers Of Foreign Affairs Of The Republic Of Azerbaijan, Georgia And The Republic Of Turkey, 08 June 2012, Trabzon, [https://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan\\_-georgia-and-the-republic-of-turkey\\_-08-june-2012\\_-trabzon.en.mfa](https://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan_-georgia-and-the-republic-of-turkey_-08-june-2012_-trabzon.en.mfa) (10.02.2023).

Արդյունքում Հայաստանը ազգային անվտանգությունը ապահովելու համար ավելի խորացրեց հայ-ռուսական համագործակցությունը, ինչն ավելի մեծացրեց Ռուսաստանի նշանակությունը Հայաստանի համար: Ռուս-վրացական պատերազմից հետո նոր ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակում Ռուսաստանն ազդեցությունը Հարավային Կովկասում պահպանեց երեք կետով՝ 102-րդ ռազմաբազան Հայաստանում, Արցախյան հակամարտությունը, սպառազինության մրցավազքը Հայաստանի և Ադրբեջանի միջև<sup>23</sup>: Հետևաբար Հայաստանը Ռուսաստանի համար դարձավ տարածաշրջանում իր ազդեցությունը պահպանելու կարևորագույն հենակետ:

Ռուսաստանի հետ ակտիվ համագործակցությունը մեծացրեց Թուրքիայի դերակատարությունը տարածաշրջանում: Այդ առումով այն դարձել է տարածաշրջանի առանցքային երկիր, որը կարող է նկատելի ազդեցություն ունենալ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև պայքարի վրա՝ կախված իր էներգետիկ պլաններից և Մոսկվայի հետ հարաբերությունների զարգացումից: Իսկ եթե Թուրքիան համագործակցի ԱՄՆ-ի հետ և այդ համատեքստում հասնի Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման, Ռուսաստանի դիրքերը կթուլանան<sup>24</sup>: Այս հնարավորություններից որևէ մեկից հրաժարումը կորստաբեր կլիներ Անկարայի համար, այդ պատճառով Թուրքիան փորձում է պահպանել երկու ուղղությունն էլ. մի կողմից պահպանում է Վրաստանի հետ կայուն հարաբերությունները և իրականացնում տնտեսական (էներգետիկ) ծրագրերը, մյուս կողմից Ռուսաստանի հետ հարաբերությունները չեն տուժում: Սա Թուրքիային բնորոշ արդյունավետ իրավիճակային քաղաքականության դրսևորում է:

Անհրաժեշտ է նշել, որ Հարավային Կովկասի նշանակությունը Թուրքիայի համար իրականում շատ ավելի մեծ է, քանի որ

<sup>23</sup> Davtyan E., նշվ. աշխ.:

<sup>24</sup> Kakachia K. K., Challenges to the South Caucasus regional security aftermath of Russian–Georgian conflict: Hegemonic stability or new partnership? *Journal of Eurasian Studies*, 2, 2011, 15-20.

պլանները ավելի հեռու են գնում: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայում վերածնվում է «Մեծ Թուրանի» գաղափարը, որի առանցքային նպատակն է Թուրքիայի գլխավորությամբ 120 մլն թյուրքալեզու բնակչությամբ և Արևմտյան Չինաստանից մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը ձգվող նոր թյուրքական աշխարհի ձևավորումը<sup>25</sup>: Այդ առումով ուշագրավ է նաև, որ թուրք բնակչության թիվը ավելի է աճում Սամցխե-Ջավախեթի մարզում, որը մեծ մասամբ զգալիորեն համընկնում է հայերով բնակեցված Ջավախքի մեջ: Հատկանշական է նաև Ջավախքում թուրքական կողմի տնտեսական ակտիվությունը: Դա ունի հեռահար նպատակներ. այն մասնավորապես ուղղված է նշված տարածաշրջանի հայաթափմանը, ռազմավարական նշանակության օբյեկտների նկատմամբ վերահսկողության սահմանմանը, իսկ հետագայում նշված տարածաշրջանը թյուրքական տարրերով վերաբնակեցնելուն<sup>26</sup>:

Ահսպիսով, ռուս-վրացական 5-օրյա պատերազմից հետո Թուրքիան այլընտրանք դարձավ Վրաստանի համար և կարողացավ իր ազդեցությունը տարածել Վրաստանում, երբ Վրաստանը Ռուսաստանի ազդեցության գոտուց դուրս եկավ: Թեև Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից և Արևմուտքի հետ որոշ հարցերում լուրջ առճակատումների հետո զարմանալի չի լինի, որ 2024թ. նախատեսված խորհրդարանական ընտրություններից հետո արձանագրվի Վրաստանի արտաքին քաղաքականության շեշտադրումների նոր «վերաբեռնավորում»:

Հարց է առաջանում, արդյո՞ք նույն սցենարը կարող է կրկնվել նաև Հայաստանի դեպքում: Արդյո՞ք Արցախյան հակամարտության կարգավորման այս կամ այն ելքը միանման հնարավորություն կտա Թուրքիային Հայաստանում և ապա Հարավային Կովկասում առհասարակ հասնել լիարժեք ազդեցության:

<sup>25</sup> **Հովսեփյան Ա.**, Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության արդի դրսևորումները, *Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*, 2014, 5, 1(13), 55-63:

<sup>26</sup> Նույն տեղում

Իհարկե, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Թուրքիան արդեն իսկ այստեղ ունի իր քաղաքական նախագիծը՝ Ադրբեջանը, և դրանով պայմանավորված լրացուցիչ գործիքներ առավելության հասնելու համար: Իսկ մյուս կողմից կա հայ-թուրքական էթնիկ հակամարտությունը և Հայաստանի ու Թուրքիայի միջև դեռևս չկարգավորված բազում խնդիրներ:

### **Լեռնային Ղարաբաղի հակամարտության ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա**

Հարավային Կովկասում ռուս-թուրքական մրցակցությունը ավելի ցայտուն է դրսևորվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում, որի հետ կապված այս երկու մրցակցող պետությունները տարբեր դիրքորոշումներ և խնդրի լուծման տարբեր մոտեցումներ ունեն: Արցախյան առաջին պատերազմի տարիներին Ռուսաստանը ձգտում էր կանխել Ադրբեջանի միջոցով տարածաշրջան ներթափանցելու Թուրքիայի հնարավոր փորձերը: Իսկ ըստ Թուրքիայի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Ադրբեջանի տարածքային ամբողջականության և կայունության սպառնալիք է: Իրականում այն պանթյուրքիստական գաղափարախոսության և դրա վրա հիմնված ծրագրերի իրագործմանը խոչընդոտող գործոն է Թուրքիայի համար, ուստի Թուրքիան չէր կարող շահագրգռված չլինել հակամարտությամբ<sup>27</sup>:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ Թուրքիան աջակցում էր/է Ադրբեջանին և՛ գաղափարապես, և՛ ֆինանսապես, և՛ ռազմական աջակցությամբ, իսկ Ռուսաստանն աջակցում էր Հայաստանին՝ նպատակ ունենալով թույլ չտալ Թուրքիայի դիրքերի ամրապնդում: Սակայն, մյուս կողմից, Ադրբեջանն ունի մի կարևոր գործիք, որից Վրաստանը և Հայաստանը զրկված են, այն է՝ ածխաջրածնային ռեսուրսները: Եվ եթե Վրաստանը, լինելով տարանցիկ գոտի, ինչ-որ ձևով կարող է «օգուտ քաղել» այդ

<sup>27</sup>Մարտիրոսյան Ս., նշվ. աշխ.:



գործիքից, ապա Հայաստանը ընդգրկված չէ էներգակիրների տեղափոխման ոչ մի ծրագրում: Հետևաբար Հայաստանի համար թուրք-ադրբեջանական տանդեմի դեմ պայքարելու գլխավոր հնարավորությունը դառնում էր Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը և այլ պետությունների հետ դաշնակցային հարաբերությունների հաստատումը, որոնց հետ առկա էր շահերի ընդհանրություն: Այդուհանդերձ, ամեն ինչ այդքան պարզ չէր, ինչքան կարող է թվալ:

Թեև ակնհայտ է, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը տեսականորեն գտնվում էր ժամանակին Թուրքիայի հռչակած «գրո խնդիրներ հարևանների հետ»<sup>28</sup> քաղաքականության շրջանակներում, սակայն իրականում ամերիկացի միջնորդների կազմակերպած երկու երկրների ոչ պաշտոնական շրջանակների մի քանի հանդիպումից այն կողմ այդ գործընթացը չանցավ: Խնդիրը միայն այն չէր, որ նման սկզբունքի հռչակումը պարզապես ցուցադրական ժեստ էր ու մյուս բոլոր հարևանների հետ նույնպես այդ «քաղաքականությունը» հաջողություն չգրանցեց: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար Թուրքիան սահմանել էր նախապայմաններ, որոնցից մեկը Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումն է, մյուսը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից հրաժարումը: Այս խնդիրների առկայությունն անուղղակիորեն անդրադառնում է նաև ռուս-թուրքական հարաբերությունների վրա, քանի որ Հայաստանի հետ սահմանը փակելով՝ Թուրքիան արդյունքում խթանեց Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը: Հայաստանի շրջափակված վիճակը նշանակում էր, որ Երևանը Մոսկվայի աջակցությունից ավելի կախյալ վիճակում էր հայտնվում անվտանգային և տնտեսական, հետևաբար և մյուս առումներով:

Սա, իհարկե, մյուս կողմից տեղավորվում է Հայաստանը մեկուսացնելու և շրջափակելու Ադրբեջանի ռազմավարության մեջ:

---

<sup>28</sup> Davutoglu A., Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, *Insight Turkey*, 2008, 10(1), 77-96.

Իսկ հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանի կարգավորման անգամ արժարժումները խիստ քննադատության էին արժանանում Ադրբեջանի կողմից<sup>29</sup>: Իսկ 2020թ. 44-օրյա պատերազմից և 2023թ. սեպտեմբերյան էթնիկ զտումներից հետո, երբ Ադրբեջանը և Թուրքիան խիստ շահեկան դիրքում են գտնվում, առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը պարզապես կորցնում է իմաստը Թուրքիայի համար: Ավելին, Թուրքիան առաջ է քաշում մի շարք նոր նախապայմաններ՝ սկսած Մեծամորի ատոմակայանի շահագործման դադարեցումից մինչև Ադրբեջանի տարածքային պահանջների կատարում:

1994 թ. կնքված զինադադարից հետո Արցախի և Ադրբեջանի շփման գծում մերթնդներթ մեծացող ու թուլացող լարվածությունը ի վերջո հանգեցրեց 2016թ. ապրիլյան 4-օրյա պատերազմին, որը կրկին կանգնեցվեց Ռուսաստանի միջնորդությամբ<sup>30</sup>: Դա ևս մեկ անգամ հավաստեց Ռուսաստանի ծանրակշիռ դերակատարությունը Հարավային Կովկասում գործընթացների վրա:

Պատկերը փոխեցին 2020թ. 44-օրյա պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները (Արցախի 9-ամսյա շրջափակումը, 2023թ. սեպտեմբերյան ռազմական ագրեսիան և, ի վերջո, Արցախի հայաթափումը):

2020թ. ադրբեջանաթուրքական ռազմական ագրեսիան նոր շրջափուլ սկսեց Հարավային Կովկասում ռուս-թուրքական մրցակցության համար: Չնայած Թուրքիան «ներխուժեց» Ռուսաստանի ազդեցության գոտի՝ ուղղակիորեն աջակցելով Ադրբեջանին, սակայն Ռուսաստանին հաջողվեց հասնել հրադադարի այնպիսի պայմաններով, որը հաստատեց Ռուսաստանի՝ որպես Հայաստանի

<sup>29</sup> **Balci B.**, Strengths and Constraints of Turkish Policy in the South Caucasus, *Insight Turkey*, 2014, 16(2), 43-52; **Արշակյան Գ.**, Օգոստոսյան ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը թուրք-վրացական հարաբերությունների վրա, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 2014, 1(1), 137-155:

ու Ադրբեջանի միջև գլխավոր միջնորդի դերակատարությունը<sup>31</sup>: Իսկ Թուրքիան պատերազմի միջոցով փորձեց ակտիվանալ և իր ազդեցությունը ամրացնել Հարավային Կովկասում: Նախ բարձրաստիճան սպայակազմի միջոցով Ադրբեջանի զինված ուժերին նախապատրաստել և մարզել էր ՆԱՏՕ-ի ստանդարտներով, մատակարարել ժամանակակից ռազմական տեխնիկա, ռազմական ինքնաթիռների միջոցով ազրեսիայի ընթացքում կառավարել օդուժի, այդ թվում և «Բայրաքթարների» գործողությունները և ներգրավել ավելի քան 2000 սիրիացի վարձկաններ: Այդպիսով՝ Թուրքիան խախտեց Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա ուժային հավասարակշռությունը<sup>32</sup>, որը փորձում էր պահպանել Ռուսաստանը:

Այնուամենայնիվ՝ պատերազմի ելքը մեծապես կախված էր Հարավային Կովկասում Ռուսաստանի քաղաքականությունից: Այստեղ և՛ Ադրբեջանի, և՛ Հայաստանի հետ հարաբերությունները Ռուսաստանը հավասարապես կարևորում է, չնայած որ Հայաստանի հետ գտնվում է նաև ռազմական դաշնակցային հարաբերության մեջ, և Հայաստանը Ռուսաստանի գլխավորած երկու կարևոր կառույցների անդամ է՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ)<sup>33</sup>: Այս համատեքստում Հայաստանը և Արցախը միանշանակ կարևոր են ռուսական կողմի համար ոչ միայն տնտեսական, այլև ակնհայտորեն ռազմավարական տեսանկյունից: Առանց Հայաստանի այսօր, թերևս, Ռուսաստանի համար առավել դժվար կլինեք պահպանել իր ներկայությունը և ազդեցությունը Հարավային Կովկասում: Այդուհանդերձ, դժվար է չնկատել Հայաստանի իշխանությունների ակնհայտ հակառուսական և դեպի Արևմուտք ուղղված հակումները, որոնց

<sup>31</sup> **Mankoff J.**, Regional Competition and the Future of Russia-Turkey Relations, A World Safe for Empire? A Report of the CSIS Europe, Russia, and Eurasia Program, January 2022.

<sup>32</sup> **De Waal T.**, The Nagorny Karabakh Conflict in its Fourth Decade, CEPS Working Document, 2021-02, September 2021.

<sup>33</sup> Նույն տեղում:

ազդեցությունը իրադարձությունների զարգացման վրա դժվար է չնկատել:

Այսպիսով՝ Ռուսաստանը դժվար երկրնտրանքի մեջ է հայտնվում. Հայաստանին չաջակցելը կնշանակի տարածաշրջանում անվտանգությունը երաշխավորողի իր կերպարի խեղաթյուրում և ՀԱՊԿ-ի վստահելիության նվազեցում: Իսկ աջակցել Հայաստանին կնշանակի Ադրբեջանին օտարեցնել՝ արդյունքում չշահելով ոչինչ<sup>34</sup>: Ռուսաստանը հավանաբար չէր ցանկանա այնպիսի լուծման հասնել, որը շատ ավելի շահեկան է մի կողմի համար, քանի որ նրա համար կարևոր է հակամարտության առկայությունը, որի դեպքում կարող է մշտական ներկայություն ապահովել տարածաշրջանում:

Այնուամենայնիվ 2020թ. նոյեմբերի զինադադարի հայտարարությամբ Ռուսաստանը կարողացավ հասնել նրան, որ հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի տեղակայումով ապահովվի իր ներկայությունը<sup>35</sup>: Չնայած նախկին ստատուս քվոյի փոփոխությունը արդեն իսկ հաջողություն էր Թուրքիայի և Ադրբեջանի համար, սակայն Ադրբեջանը՝ Թուրքիայի համաձայնությամբ և աջակցությամբ նոր ազդեցիկ քայլերով ձգտում է ավելիին՝ օրակարգ մտցնելով այսպես կոչված «անկլավների» և «Զանգեզուրի միջանցքի» հարցը, երբեմն, ավելի հեռուն գնալով, «Արևմտյան Ադրբեջանի»՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքի մեծ մասը:

Ռուսաստանի համար 44-օրյա պատերազմի արդյունքում մարտահրավեր է նաև այն, որ «Հայաստան-Ադրբեջան» պայամանագրի միջնորդի դեր է փորձում ստանձնել ԵՄ-ն և Արևմուտքը՝ ընդհանրապես: Թուրքիան էլ, անմիջականորեն և աննախդեպ մասշտաբով միջամտելով հակամարտությանը, բարձրացնում է

<sup>34</sup> **Dumoulin M.**, Russia's indecision: Armenia and Azerbaijan return to violence <https://ecfr.eu/article/russias-indecision-armenia-and-azerbaijan-return-to-violence/> <https://ecfr.eu/article/russias-indecision-armenia-and-azerbaijan-return-to-violence/> (05.02.2023)

<sup>35</sup> **De Waal T.**, The Nagorny Karabakh Conflict in its Fourth Decade, CEPS Working Document, 2021-02, September 2021.

տարածաշրջանում իր դերը: Սակայն Թուրքիայի ազդեցության տարածումը պետք է տեղի ունենա Ռուսաստանի ազդեցության հաշվին, որի պատճառով էլ Ռուսաստանը հրաժարվեց հակամարտությունը լուծելու համար Թուրքիայի հետ երկկողմ գործընթաց սկսելուց<sup>36</sup>:

Այնուամենայնիվ Ռուսաստանը այս հակամարտության համատեքստում դեռևս խոցելի վիճակում է: Ռուսասկան խաղաղապահ ուժերի տեղակայման ժամկետները նախատեսվում էր մինչև 2025թ.-ը, իսկ առաքելությունը կարող էր դադարեցվել, եթե նշված ժամկետից վեց ամիս առաջ կողմերից որևէ մեկը նման մտադրություն հայտներ<sup>37</sup>: Չնայած կարելի էր կանխատեսել, որ Ադրբեջանը իր համաձայնությունը չէր տա խաղաղապահ առաքելությունը երկարացնելուն և հետագայում սանձազերծեր նոր պատերազմ, սակայն դեպքերը ավելի արագ ընթացան: 2022թ. դեկտեմբերին, զբաղեցնելով շահեկան դիրքեր, Ադրբեջանը շրջափակեց Արցախը և փակեց Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանը արցախյան հակամարտության լուծման համար իր պատրաստակամությունը հայտնեց հարցը քննարկել այդտեղ ապրող հայերի իրավունքների և երաշխիքների համատեքստում, ինչը Հայաստանի ավանդական դիրքի սկզբունքային փոփոխություն էր, քանի որ հակամարտության լուծման համար մշտապես ընդգծվել է կարգավիճակի հարցը: Այս փոփոխությունը նշանակում է, որ Ն. Փաշինյանը պատրաստ է Արցախը ճանաչել Ադրբեջանի մաս՝ «հայ բնակչության որոշակի երաշխիքներով»<sup>38</sup>:

<sup>36</sup> **Dalay G.**, Turkish-Russian Relations in the Light of Recent Conflicts, Syria, Libya, and Nagorno-Karabakh, SWP Research Paper 5, 2021, German Institute for International and Security Affairs, doi:10.18449/2021RP05

<sup>37</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/> (05.02.2023)

<sup>38</sup> **Dumoulin M.**, Russia's indecision: Armenia and Azerbaijan return to violence, commentary, European Council on Foreign Affairs, September 2022.

Հետագայում էլ հայտարարությամբ Ն. Փաշինյանը կրկին պատրաստակամություն հայտնեց խաղաղության պայմանագրի կնքման համար՝ նշելով, որ դրա արդյունքում կերաշխավորվի 29,800 կմ<sup>2</sup> տարածքում երկարատև խաղաղությունը<sup>39</sup>: Վերոնշյալ պայմանով պայմանագրի կնքումը վերջ կդնի Հարավային Կովկասում Ռուսաստանի վերջին հանգրվանին, Հայաստանն էլ ոչ միայն կկորցնի Արցախը վերջնականապես, այլև հետագայում կունենա լրջագույն անվտանգային խնդիրներ կապված արդեն Սյունիքի և Տավուշի հետ:

Իրադարձությունների զարգացումը հանգեցրին հենց այս վերջին իրողությանը: Արցախը 9 ամիս շրջափակումից հետո՝ 2023թ. սեպտեմբերին, ռազմական ուժի դիմելով, Ադրբեջանը ամբողջական վերահսկողություն հաստատեց Արցախում: Արդյունքում Արցախը հայաթափվեց, Հայաստանի մոտ 200 կմ<sup>2</sup> հայտնվեց ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո և հնչում են նոր տարածքային պահանջներ:

Այս իրադարձություններից հետո Թուրքիայի համար բացվում են նոր հնարավորություններ: Թուրքիան հետևում է Նախիջևանից Հայաստանի հարավային հատվածով դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիա նոր տրանսպորտային ուղիների բացման իր նկրտումներին, որն էլ տեղավորվում է «Մեծ Թուրանի» ծրագրի մեջ: Իսկ զարգացումների տրամաբանությունը կտրուկ նվազեցնում է Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասում: Սակայն դա դեռևս չի նշանակում մրցակցության մեջ Ռուսաստանի պարտություն: Այլ հարց է, թե արդյոք Ռուսաստանի ազդեցության նվազումը ժամանակավոր է, երկարաժամկետ, կարճաժամկետ, թե հիմնական<sup>40</sup>: Ռուսաստանը դեռևս ունի տնտեսական և անվտանգային գործիքներ: Վրաստանը, օրինակ,

<sup>39</sup> Pashinyan issues contradictory statements on new agreement with Azerbaijan <https://armenianweekly.com/2022/09/14/pashinyan-issues-contradictory-statements-on-new-agreement-with-azerbaijan/> (06.02.2023)

<sup>40</sup> Russia in the South Caucasus: Losing Adapting, Overcoming, Guest Report, ed. Hugo von Essen, Stockholm Center for Eastern European Studies, 2, 2024.

ուկրաինական պատերազմով պայմանավորված Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցներին խուսափում է միանալ՝ հասկանալով, որ կարող է կրել տնտեսական լուրջ վնասներ<sup>41</sup>: Հայաստանը ևս տնտեսական և էներգետիկ կախվածության մեջ է Ռուսաստանից:

Ռուսաստանը կփորձի օգտագործել տնտեսական լծակը՝ տարածաշրջանում մնալու համար: Իսկ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված, կնախընտրի բանակցությունների տարածաշրջանային ձևաչափը՝ հակադրվելով Արևմուտքի միջնորդական առաքելություն ստանձնելու ցանկացած փորձի: Այդպիսով դառնալով խաղաղության հասնելու միջնորդ՝ Ռուսաստանը կարող է վերականգնել իր դիրքերը<sup>42</sup>: Եվ վերջապես, բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը և իրադարձությունների արագ զարգացումն ու հաճախ կտրուկ շրջադարձերը կարող են բոլորովին այլ իրավիճակ ստեղծել նաև Հարավային Կովկասում: Ռուսաստանի ազդեցության նվազմամբ Հարավային Կովկասում առաջացել է ուժային վակուում, որը լրացնելու են շտապում Արևմուտքն ու Թուրքիան: Իսկ Ռուսաստանը Արևմուտքի ներկայությունը և ազդեցությունը հնարավորինս նվազեցնելու համար ստիպված է համակերպվել Թուրքիայի հետ ձևավորված համագործակցություն/մրցակցություն ռեժիմին, որը տեղավորվում է ռուս-թուրքական հարաբերություններում ճգնաժամերի հաղթահարման ընդհանուր տրամաբանության մեջ:

### **Ռուս-թուրքական մրցակցության էներգետիկ բաղադրիչը**

Հարավային Կովկասում ռուս-թուրքական հարաբերությունների բնույթը երկակի է նաև էներգակիրների տեղափոխման

<sup>41</sup> **Avdaliani E.**, Playing with Fire: Georgia's Cautious Rapprochement with Russia, Carnegie Endowment for International Peace, 2023, <https://carnegieendowment.org/politika/90246> (23.03.2024).

<sup>42</sup> **Melkonian S.**, Outlining Russias Future in the South Caucasus – An Armenian Perspective, Stockholm Center for Eastern European Studies, 2, 2024, 3-6.

ուրրտում: Այստեղ նրանք և՛ մրցակցում են կասպիական գազը Հարավային Կովկասով տեղափոխման ուղիների վերահսկման հարցում, և՛ համագործակցում ռուսական գազը Եվրոպա արտահանման հարցում<sup>43</sup>: Դա պայմանավորված է մի կողմից տարածաշրջանում վերահսկողություն սահմանելու յուրաքանչյուր կողմի ձգտումներով, մյուս կողմից Ռուսաստանից Թուրքիայի էներգետիկ կախվածությամբ՝ ինչպես ներքին կարիքները բավարարելու, այնպես էլ էներգետիկ հար դառնալու համար:

Հարավային Կովկասը կարևորվում է որպես և՛ ռեսուրսակիր, և՛ տարանցիկ շրջան: Ընդ որում, որպես ռեսուրսակիր տարածաշրջանի ճանաչված պետություններից կարող է դիտարկվել Ադրբեջանը, որն, ըստ որոշ աղբյուրների, ունի նշանակալի քանակությամբ ածխաջրածնային ռեսուրսներ՝ 7 մլրդ. բարել նավթ և 1.3 տրլն. խորանարդ մետր գազ<sup>44</sup>, իսկ երկրորդ կարգավիճակն ունեն կամ կարող են ունենալ բոլոր երեք ճանաչված պետությունները: Այդուհանդերձ, պաշարների տեսակետից Ադրբեջանի խոստումները Եվրամիությանն ու անդամ երկրներին, շատ ավելի համեստ են, քան գնահատումների արդյունքները:

Էներգետիկ երթուղիների շուրջ ռուս-թուրքական մրցակցությունը հիմնականում կապված է Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի գործուն աջակցությամբ Ռուսաստանը շրջանցող ուղիներով կասպիական էներգակիրները միջազգային շուկա հասցնելու հետ: Այդպիսի երթուղի է ԲԹՁ-ն՝ գործարկված 2005թ., որը Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի այլընտրանքն է, և ԲԹԷ-ն՝ գործարկված 2007թ., որը Ռուսաստանը շրջանցող և Եվրոպա հասնող առաջին գազամուղն է<sup>45</sup>: Թեև դրանք ավելի շուտ խորհրդանշական

<sup>43</sup> **Yesayan A.**, Russian-Turkish Relations in the Context of Energy Cooperation, *The Politnomos: Journal of Political and Legal Studies*, 2023, 1(1), 7-20.

<sup>44</sup> International Energy Agency, Energy Security, Azerbaijan energy profile, <https://www.iea.org/reports/azerbaijan-energy-profile/energy-security> (22.03.2023)

<sup>45</sup> **Արշակյան Գ.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը Հարավային Կովկասում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության շրջանում, 2019, Երևան, «Արտագերս», էջ 90-91:



նշանակություն ունեն, քան գործնական, քանի որ ապահովում են եվրոպական կարիքների միայն մի քանի տոկոսը:<sup>46</sup>

Թուրքիայի դերը հատկապես մեծանում է Եվրոպայի համար՝ պայմանավորված ԵՄ գազային ճգնաժամով՝ ընդ որում երկկողմանիորեն. Եվրոպան ցանկանում է բազմազանեցնել էներգետիկ ռեսուրսների աղբյուրներն ու տեղափոխման ուղիները, իսկ Ռուսաստանը՝ այդ ռեսուրսները սպառողներին:

Իր էներգետիկ պահանջները բավարարելու համար ԵՄ-ն ձգտում է կյանքի կոչել «Հարավային գազային միջանցքը», որի համար նախատեսում էր/է մի քանի նախագծեր: Այդ նախագծերը ուղղակիորեն կապվում են Հարավային Կովկասի հետ, և դրանց մեջ ներգրավումը թույլ է տալիս Թուրքիային ծանրակշիռ ներկայություն ապահովել Հարավային Կովկասում: Սակայն այս միջանցքի մաս կազմող նախագծերը իրականում չեն լուծում ԵՄ-ի էներգետիկ ճգնաժամի խնդիրը, և արդյունքում ԵՄ-ին ու Թուրքիային չի հաջողվում ազատվել ռուսական գազի կախվածությունից:

2022թ. կրկին ակտիվացած ուկրաինական ճգնաժամով պայմանավորված, ԵՄ-ն ևս մեկ անգամ կանգնած է լուրջ էներգետիկ անվտանգային խնդիրների առջև. Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածության և Ռուսաստանի դեմ պատժամիջոցների պատճառով ԵՄ-ն ստիպված է հրաժարվել իր պահանջների մեծ մասը ապահովող ռուսական գազից՝ միննույն ժամանակ չունենալով իրատեսական այլընտրանքներ:

Փնտրելով այլընտրանքներ՝ ԵՄ-ն կրկին հայացքը ուղղում է դեպի Կասպյան ավազան: 2022թ. հուլիսին Բրյուսելն ու Բաքուն համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի 2022թ. Ադրբեյջանը Եվրոպա կարտահանի 12 միլիարդ խորանարդ մետր գազ՝ նախապես պայմանավորված 10 միլիարդի փոխարեն, իսկ մինչև 2027

---

<sup>46</sup> **Թորոսյան Տ.**, Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. Ինքնորոշում, թե՞ ցեղասպանություն, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 2022, 1(17), 5-52:

թվականը այդ թիվը կհասցնի 20 միլիարդի<sup>47</sup>: Մակայն այս գործարքը ևս էական նշանակություն չի կարող ունենալ Եվրոպայում ստեղծված բարդ իրավիճակի հանգուցալուծման տեսակետից<sup>48</sup>: Անգամ 12 միլիարդ խորանարդ մետր գազ մատակարարելու համար լրացուցիչ 1 միլիարդ խորանարդ մետրը Ադրբեջանը պատրաստվում է գնել Ռուսաստանից<sup>49</sup>: Կասպյան ավազանից Եվրոպա էներգակիրների տեղափոխման այս նախագծերը ինչ-որ չափով կնպաստեին ԵՄ-ի էներգետիկ ճգնաժամի հաղթահարմանն ու Ռուսաստանից կախվածության թուլացմանը, եթե դրանց միացած լինեք նաև Թուրքմենստանը, սակայն տեսանելի ապագայում դրա հնարավորությունները դեռևս չկան:

Վերջին շրջանում դիտարկվում են որոշ նախագծեր, որոնք նախատեսում են, որ Ադրբեջանը 10 մլրդ մ<sup>3</sup> գազ կգնի Ռուսաստանից՝ իբր սեփական կարիքների համար, իսկ իր պաշարներից ազատված նույնքան գազը կուղարկի Եվրոպա՝ պայմանագրային պարտավորությունը կատարելու համար: Ակնհայտ է, որ այդ սխեման ևս որևէ էական հարց չի լուծելու Եվրոպայի համար, սակայն վերջնականորեն կիմաստագրկի ռուսական գազից հրաժարվելու ԵՄ ծրագիրը, որի արդյունքում տուժում է միայն Եվրոպան՝ ավելի թանկ գին վճարելով թուրքական, ադրբեջանական բնական, ինչպես նաև չինական հեղուկ գազի (իրականում՝ Ռուսաստանից գնված և ԵՄ-ին վերավաճառված գազի) համար:

Այսպիսով՝ Կասպյան ավազանի էներգապաշարները տեղափոխելու և տարածաշրջանում էական ազդեցություն պահպանելու համատեքստում Ռուսաստանի և Թուրքիայի միջև մրցակցություն/համագործակցությունը տեսանելի ապագայում էական փոփոխություններ չի կրի մատչելի էներգակիրների այլ

<sup>47</sup> The memorandum is a win for Baku while committing it to do little, <https://eurasianet.org/azerbaijan-and-eu-agree-to-strategic-energy-partnership>

<sup>48</sup> **Թորոսյան Տ.**, Նոր աշխարհակարգի . . . , նշվ. աշխ.

<sup>49</sup> «Газпром» поставит в Азербайджан до 1 млрд кубометров газа — компания, 18 Ноя 2022, ТАСС, <https://tass.com/economy/1538815> (25.03.2023)

աղբյուրների բացակայության պատճառով՝ իմաստագրելով՝ ռուսական գազից ԵՄ անդամ երկրների հրաժարման գաղափարը: Չուզահեռաբար, Ռուսաստանի էներգետիկ ծրագրերի առաջարկները, ինչպիսին է «Թուրքական հոսքը», ավելի իրական են դառնում Թուրքիայի համար նույն էներգետիկ միջանցքի հեռանկարի տեսանկյունից, սակայն ավելի մեծ կախվածության մեջ է դնում Ռուսաստանի էներգետիկ ռեսուրսներից: Բացի այդ ստացվում է, որ Արևմուտքը, գազը գնելով Թուրքիայից՝ փորձելով շրջանցել Ռուսաստանը, ի վերջո կրկին գնում է ռուսական գազ ավելի թանկ գնով:

### Եզրակացություն

Այսպիսով՝ վերլուծելով Հարավային Կովկասում ռուս-թուրքական շահերի բախման կիզակետերը, բացահայտելով դրա պատճառները, արդյունքում առաջացած խնդիրների լուծման հնարավորությունները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- Ռուս-թուրքական հարաբերությունները մրցակցային են իրենց հարևան տարածաշրջաններում, այդ թվում Հարավային Կովկասում ազդեցության հասնելու համատեքստում, և համագործակցային են հիմնականում պայմանավորված Արևմուտքի վարած քաղաքականությունից դժգոհությամբ և առաջացած ճգնաժամերը միասին լուծելու պատրաստակամությամբ:
- Ռուս-թուրքական հարաբերություններում մրցակցությունն ու համագործակցությունը ոչ թե հաջորդում են միմյանց, այլ ընթանում են զուգահեռ: Դա հաճախ պայմանավորված է լինում Թուրքիայի իրավիճակային քաղաքականությամբ և անկանխատեսելիությամբ և դրան ի հակադրություն Ռուսաստանի քաղաքականության կանխատեսելիությամբ:
- Մրցակցությունն արտահայտվում է երկարաժամկետ պլաններում, օրինակ՝ տարբեր տարածաշրջաններում (Սև ծով, Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելք, Կենտրոնական Ասիա) ազդեցության մեծացման և գերտերություն դառնալու ձգտում-

ներով, իսկ համագործակցություննը արտահայտվում է տվյալ պահին շահերի համընկմամբ և դրա շուրջ այլ հարցերում տարբերությունների ժամանակավոր չեզոքացմամբ:

- Թուրքիայի ազդեցությունը Հարավային Կովկասում տեսանելի է նախ և առաջ Ադրբեջանում, ապա Վրաստանում, որտեղ հեշտությամբ տնտեսական ամուր կապեր հաստատվեցին 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո, իսկ Ռուսաստանն իր հերթին, Աբխազիայի և Հարավային Օսիայի խնդիրներով պայմանավորված, կորցրեց Վրաստանի վրա նշանակալի ազդեցությունը:
- Հարավային Կովկասում Մոսկվայի ու Անկարայի մրցակցությունը հիմնականում պայմանավորված է Արցախյան հիմնահարցով: Եթե Վրաստանի դեպքում 5-օրյա պատերազմի ելքը որոշեց նաև Վրաստանի արտաքին քաղաքականության վեկտորը և այն ամբողջությամբ հայտնվեց ոչ միայն Արևմուտքի, այլև Թուրքիայի ազդեցության տակ, ապա Հայաստանի դեպքում դեռևս վաղ է ասել, թե որ պետությունը կլինի գերիշխող դիրքում:
- 2020թ. Արցախյան պատերազմի համատեքստում Թուրքիան ակտիվացավ Հարավային Կովկասում, ու թեև սկզբնական շրջանում Ռուսաստանին հաջողվեց ռազմական ներկայություն ապահովել տարածաշրջանում, սակայն մրցակցության հետագա ընթացքը ավելի շատ կախված կլինի մի կողմից հայադրբեջանական հարաբերությունների հետագա զարգացումների վերաբերյալ կողմերի դիրքորոշումից, մյուս կողմից Հայաստանի որդեգրած ուղով: Չնայած 2023թ. Արցախից հայերի բռնի տեղահանումից հետո Ռուսաստանի դիրքերը էականորեն թուլացան, սակայն, դեռևս ունենալով շատ այլ լծակներ, Ռուսաստանը պահպանում է իր ներկայությունը և ամեն գնով կփորձի մնալ տարածաշրջանում՝ չկորցնելով ազդեցությունը Հայաստանում:
- Թեև Թուրքիան աննախադեպ ակտիվությամբ ներգրավվեց Արցախյան հակամարտությանը, սակայն ազդեցությունը

տարածել չի հաջողվում՝ բախվելով Ռուսաստանի շահերի հետ: Արդյունքում ոչ թե այս կամ այն կողմն է ազդեցության հասնում, այլ ստեղծվում է ուժային վակուում: Իսկ վերջնական ազդեցություն հաստատել կհաջողվի այն կողմին, որը կդառնա միջնորդ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության լուծման գործընթացում՝ ուղղակիորեն, թե միջնորդավորված: Ամենայն հավանականությամբ վճռորոշ ազդեցություն կունենան նաև Հայաստանում 2026թ. (կամ՝ մինչ այդ արտահերթ) խորհրդարանական ընտրությունների արդյունքները, քանի որ գործող իշխանությունը կորցնում է հասարակական վստահությունը, իսկ հաջորդը, մեծ հավանականությամբ, կտրուկ կփոխի արտաքին քաղաքական դիրքորոշումները:

- Հարավային Կովկասում ռուս-թուրքական մրցակցության ևս մեկ հարթություն է դեպի Եվրոպա էներգետիկ պաշարների տեղափոխման երթուղիների վերահսկողությունը, սակայն միևնույն ժամանակ համագործակցում են էներգետիկ այլ նախագծերում: Դա հեշտությամբ տեղավորվում է ն՝ Թուրքիայի էներգետիկ հաբ դառնալու ծրագրերի մեջ (որի համար Թուրքիան պատրաստ է համագործակցել ն՝ Արևմուտքի, ն՝ Ռուսաստանի հետ), ն՝ Ռուսաստանի՝ գազի արտահանման երթուղիների բազմազանեցման պլաններում:

## **The nature and prospects of Russian-Turkish competition/cooperation relations in the South Caucasus**

ARPINE ESAYAN

*Brusov State University*

The article examines the nature and impact of Russian-Turkish relations in the South Caucasus region. The reasons for their dual nature were identified, as well as in which cases they are competitive and in which cases they are joint. The peculiarities of relations between Russia and Turkey in general and in the South Caucasus in particular. The Russian-Georgian and Armenian-Azerbaijani wars were discussed as key events, their consequences and impact on Russian-Turkish relations were highlighted: the foundations and goals of their policy, and tools were considered. The main hotbeds of competition and conflict of interests of these states in the South Caucasus were presented, as well as the policies pursued by the two states to mitigate this in case of tension. The study allows us to conclude that in the context of dynamic geopolitical developments and intense competition, serious shifts in the South Caucasus began with the 5-day Russian-Georgian war and continued with events related to the Nagorno-Karabakh conflict. Their final resolution will be determined by the process and outcome of normalization of Armenian-Turkish and Armenian-Azerbaijani relations.

DOI: 10.19266/1829-4286-2023-02-79-96

## Ռուս-թուրքական հարաբերությունները գազային հոսքերի ձևավորման համատեքստում

ՖԼՈՐԱ ՄԻԲԶԱԽԱՆՅԱՆ

Բրյուսելի անվան պետական համալսարան

*ԽՍՀՄ փլուզումը բազմաթիվ հնարավորություններ ստեղծեց ռուս-թուրքական երկկողմ հարաբերությունների զարգացման համար, որոնցում առանձնահատուկ տեղ զբաղեցրեց էներգետիկ ոլորտը: Ավանդաբար, այս ոլորտում երկու երկրների հարաբերությունները նույնպես դինամիկ բնույթ են կրում՝ ժամանակ առ ժամանակ շեշտադրելով մեկ մրցակցային մեկ համագործակցային բնույթը: 2022թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմը և դրա հետևանքով ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրողությունները հնարավորություն ստեղծեցին ռուս-թուրքական հարաբերությունների սերտացման համար: Հոդվածի խնդիրներն են պարզել ռուս-թուրքական հարաբերությունների էությունը գազային հոսքերի ձևավորման համատեքստում և ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը ռուս-թուրքական էներգետիկ հարաբերությունների վրա:*

### Բանալի բառեր

Ռուս-թուրքական էներգետիկ հարաբերություններ, գազային հոսքեր, Կասպյան ավազան, ռուս-ուկրաինական պատերազմ, Հարավային գազային միջանցք համագործակցություն/մրցակցություն

### Նախաբան

Ռուս-թուրքական հարաբերություններն ավանդաբար դինամիկ բնույթ են կրել՝ ժամանակ առ ժամանակ շեշտադրելով մեկ մրցակցային, մեկ համագործակցային բնույթը<sup>1</sup>:

<sup>1</sup> Թորոսյան Տ., Արշակյան Գ., Ռուս-թուրքական մրցակցություն, թե՞ համագործակցություն, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(5), 2016, էջ 5-34.

Cheterian V., Friend and Foe: Russia–Turkey relations before and after the war in Ukraine, *Small Wars and Insurgencies*, 2023, **34**, 7, 2023, 1-24.

1991թ. նոր սկիզբ ազդարարեց թուրք-ռուսական հարաբերություններում. «Մառը պատերազմի» ավարտով և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան հայտնվեցին նոր աշխարհաքաղաքական իրավիճակում և սկսեցին արտաքին քաղաքական նոր ինքնություն մշակելու գործընթացները, որոնք դեռևս շարունակվում են իրադարձություններից ավելի քան 30 տարի անց<sup>2</sup>:

Ռուսաստանին ու Թուրքիային միավորում են ինչպես ընդհանուր հետաքրքրությունները Եվրոպայի և Ասիայի հանգույցներում, այնպես էլ զարգացման բարդ փուլերը: Միաժամանակ, աշխարհաքաղաքական բաղադրիչը, մասնավորապես, տարածաշրջանային մրցակցությունը եղել է ռուս-թուրքական փոխգործակցության բաղկացուցիչ մասը երկկողմ հարաբերությունների զարգացման բոլոր փուլերում: Այդ առումով երկկողմ հարաբերությունների էվոլյուցիան առավել ակնհայտ է այն տարածաշրջաններում, որտեղ և Ռուսաստանը, և Թուրքիան ունեն պատմականորեն ձևավորված շահեր<sup>3</sup>:

Թեպետ ԽՍՀՄ փլուզումից հետո ծավալվեց ակտիվ ռուս-թուրքական մրցակցություն հատկապես Հարավային Կովկասում և Միջին Ասիայում, հետագայում բազմաթիվ առիթներ ստեղծվեցին երկկողմ համագործակցության համար: Այնուամենայնիվ, երկու երկրների՝ նույն տարածաշրջանները որպես իրենց ազդեցության գոտի դիտարկելը ազդում են հարաբերությունների դինամիկայի վրա: Մերձավոր Արևելքում, Սև ծովի ավազանում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում Ռուսաստանն ու Թուրքիան ավելի հաճախ միմյանց ընկալում են որպես մրցակիցներ, քան գործընկերներ<sup>4</sup>:

<sup>2</sup> **Шерстюков С., Бодиштяну Н.**, Российско-турецкие отношения после 2015 г.: новые тренды, старые дилеммы, *Мировая экономика и международные отношения*, 2021, 11, 88-96.

<sup>3</sup> **Արշակյան Գ.**, Ռուս-թուրքական հարաբերությունները ԱՄՆ-Թուրքիա աննախադեպ լարվածություն համատեքստում, *Հայկական Քաղաքագիտական հանդես*, 2019, 2(12), 05-36:

<sup>4</sup> **Шерстюков С., Бодиштяну Н.**, նշվ. աշխ.



## Ռուս-Թուրքական տնտեսական համագործակցությունը և աշխարհաքաղաքական մրցակցությունը

Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունները պատմականորեն խնդրահարույց են եղել՝ ազդեցության գոտիներում այդ երկու դերակատարների մրցակցության պատճառով: Սառը պատերազմը այս դարավոր մրցակցության ընդլայնումն էր, սակայն դրա ավարտը հնարավորություն տվեց կենտրոնանալ համագործակցության ոլորտների վրա: Եթե սկզբում ռուսական զազը սկսեց հոսել Թուրքիա-Ռուսաստան-Արևմուտք երթուղով, ապա հետագայում հաջողվեց ձևավորել ավելի համապարփակ համագործակցություն<sup>5</sup>:

Թեպետ երկու երկրների միջև տարաձայնություններից ոչ բոլորն են լուծում ստացել, անուամենայնիվ տարբեր ոլորտներում սկսվել է համագործակցության շրջան: Մոսկվային և Անկարային հաջողվել է «դարավոր աշխարհաքաղաքական վեճերը վերածել աշխարհատնտեսական գործընկերության»<sup>6</sup>: Երկու երկրների միջև հարաբերությունների այս շրջանի հիմքում ընկած է երկու հիմնական դինամիկա. աշխարհաքաղաքական մրցակցություն և տնտեսական եզակի համագործակցություն<sup>7</sup>:

Ռուս-թուրքական շահերը հաճախ բախվում են Եվրասիայում: Այս տարածաշրջանը Բժեզինսկին համեմատում է «շախմատային մեծ տախտակի» հետ, որի վրա հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի գլոբալ դերակատարները պայքարում են գերակայության համար<sup>8</sup>:

<sup>5</sup> **Kaynak B.**, From Blue Stream to Turkish Stream, an Assesment of Turkey's Energy Dependence on Russia, *Journal of Social Sciences*, 2018, 3 (1), 79-90.

<sup>6</sup> **Shlykov P.**, Russian-Turkish Relations in the Wider Black Sea Region: Cooperation and Competition, *Perceptions*, 2018, 23(2), 93-116.

<sup>7</sup> **Coskun B.**, Turkey's relations with Russia after the failed coup..., pp. 36-52.

<sup>8</sup> **Brzezinski Z.**, The Grand Chessboard, American Primacy and its Geostrategic Imperatives, Basic Books, New York, 2016, 229 P.

Ռուսաստանը և Թուրքիան այստեղ նույնպես բախվում են նմանատիպ մարտահրավերների, որոնցից մեկը Եվրասիայի այլ ուժային կենտրոնների և առաջին հերթին դրանցից ամենամեծի՝ Չինաստանի հետ հարաբերությունների ընդունելի մոդելի կառուցման անհրաժեշտությունն է:

Ռուսաստանը կարևորում է Չինաստանին որպես ազդեցիկ էներգետիկ գործընկեր<sup>9</sup>: 2014թ. մայիսին Գազպրոմի և Չինաստանի ազգային նավթային կորպորացիայի միջև կնքվել է պայմանագիր՝ ռուսական գազը Չինաստան արտահանելու համար<sup>10</sup>: 2019թ. շահագործման հանձնված «Միբիրի ուժը» գազատարը փոխշահավետ գործարք էր երկու պետությունների համար էլ: Նախատեսվում է, որ գազատարի թողունակությունը մինչև 2025թ. պետք է հասնի 38 միլիարդ խորանարդ մետրի. 2023թ. մոտ 22 միլիարդ խորանարդ մետր գազ է արտահանվել Չինաստան<sup>11</sup>:

Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո ութ ամիսների ընթացքում ՌԴ-ն կրճատել է ԵՄ գազի մատակարարումների 80%-ը<sup>12</sup>: Սրան զուգահեռ ակտիվ բանակցություններ են վարվում նաև «Միբիրի ուժը 2» գազատարի կառուցման հարցում<sup>13</sup>, որի առավելագույն թողունակությունը 50 միլիարդ խորանարդ

<sup>9</sup> Энергетическая Стратегия Российской Федерации на период до 2035 года, Правительство Российской Федерации, 2020г. № 1523-р Москва, <http://static.government.ru/media/files/w4sigFOiDjGVDYT4IgsApssm6mZRb7wx.pdf>, (12.01.2024)

<sup>10</sup> **Sharples J. D.**, The Shifting Geopolitics of Russia's Natural Gas Exports and Their նշվ. աշխ.

<sup>11</sup> Алексей Миллер провел совещание, посвященное подведению предварительных итогов года,

<https://www.gazprom.ru/press/news/2023/december/article570870/> (12.01.2024).

<sup>12</sup> Insight: Moscow's decades-old gas ties with Europe lie in ruins, [https://www.reuters.com/business/energy/moscows-decades-old-gas-ties-with-europe-lie-ruins-2023-02-](https://www.reuters.com/business/energy/moscows-decades-old-gas-ties-with-europe-lie-ruins-2023-02-14/#:~:text=European%20Commission%20President%20Ursula%20von,with%20around%2040%25%20in%202021.)

14/#:~:text=European%20Commission%20President%20Ursula%20von,with%20around%2040%25%20in%202021. , (12.01.2024)

<sup>13</sup> «Газпром» и китайская CNPC подписали документ о дополнительных поставках российского газа по «восточному» маршруту до конца 2023 года, <https://www.gazprom.ru/press/news/2023/october/article568514/> , (15.01.2024).

մետր գազ է<sup>14</sup>: «Միբիբի ուժը 2» գազատարի թողունակությունը միայն 5 միլիարդ խորանարդ մետր գազով է պակաս «Հյուսիսային հոսք» գազատարի թողունակությունից: Գազատարի կառուցման նախնական արժեքը 13.6 միլիարդ ԱՄՆ դոլար կարժենա<sup>15</sup>, իսկ շինանարությունը տարիներ կտևի: «Միբիբի ուժը» գազատարը չի փոխարինում «Հյուսիսային հոսք» և «Հյուսիսային հոսք 2» գազատարներին ռուսական ավելցուկային գազը վաճառելու համատեքստում: Եթե նույնիսկ տարիներ անց գործարկվի «Միբիբի ուժը 2» գազատարը, երկու գազատարները միասին (տարեկան 88 միլիարդ խորանարդ մետր գազ) իրենց թողունակությամբ զիջելու են «Հյուսիսային» հոսք գազատարներին (տարեկան 110 միլարդ խոնարանդ մետր գազ):

2024թ. նախատեսվում է Եվրոպա արտահանվող գազի գինը 1000 խորանարդ մետրի դիմաց պահպանել 480 դոլարի սահմաններում, որը 2020թ. -ին մինչ գազի գների թանկացումը և ապա ռուս-թուրքական պատերազմը կազմել է 140 դոլար 1000 խորանարդ մետրի դիմաց<sup>16</sup>: Չինաստանի համար այն կազմում է մոտ 297 դոլար 1000 խորանարդ մետրի դիմաց 2023 և 2024 թվականներին<sup>17</sup>: Այսպիսով թեպետ «Միբիբի ուժը» գազատարները իրենց թողունակությամբ զիջում են «Հյուսիսային հոսք» գազատարներին, համեմատելով գազի գները, պարզ է դառնում, որ այդ տարբերությունը

---

<sup>14</sup> «Газпром» и CNPC обсудили планы совместной работы в 2024 году, <https://www.gazprom.ru/press/news/2023/december/article570434/> (14.01.2024).

<sup>15</sup> Russia's weaker hand undermines case for Power of Siberia 2 gas link to China, <https://www.reuters.com/business/energy/russias-weaker-hand-undermines-case-power-siberia-2-gas-link-china-2023-10-30/#:~:text=Moscow%20has%20not%20said%20how,at%20up%20to%20%2413.6%20billion> (14.01.2024)

<sup>16</sup> Цена газа «Газпрома» для стран Европы в декабре поднялась в 4–5 раз, <https://www.vedomosti.ru/business/articles/2022/02/13/909092-tsena-gazproma> (14.01.2024).

<sup>17</sup> Russia gas price seen much lower for China than for Europe, <https://www.reuters.com/business/energy/russia-gas-price-seen-much-lower-china-than-europe-document-2023-09-08/> (15.01.2023).

որոշ չափով փոխհատուցվում է Չինաստան արտահանվող ավելի բարձր գներով:

Ավելորդ չէ նշել նաև, որ «Միբիրի ուժը» գազատարների շահագործմամբ Չինաստանը ուղիղ կապ է հաստատում ռուսական գազի պաշարների հետ, որը նրան հնարավորություն է տալիս որպես ռուսական գազի ներկրող այն վաճառել նաև երրորդ կողմի<sup>18</sup>, թեև այդ հնարավորության մասին առարկայական քննարկումներ երկու կողմերի միջև դեռևս չկան:

### **Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցություն/համագործակցությունը**

Էներգետիկ ոլորտում ռուս-թուրքական համագործակցության մեկնարկը տրվեց 1984թ., երբ խորհրդային և թուրքական կառավարությունները ստորագրեցին «Բնական գազի համաձայնագիրը», որը շրջադարձային եղավ երկկողմ հարաբերություններում: Թուրքիան Խորհրդային Ռուսաստանից բնական գազի մատակարարման պայմանագիրը համարեց կարևոր քաղաքական զարգացում, որը Թուրքիային հնարավորություն է տալիս բազմազանեցնել իր էներգետիկ աղբյուրները: «Երկնագույն հոսք» գազատարի նախագծի իրականացումը նոր էջ բացեց ռուս-թուրքական համագործակցության էներգետիկ ոլորտում<sup>19</sup>:

Չնայած համագործակցությանն ուղղված քայլերին, ռուս-թուրքական հարաբերությունները միանշանակ չեն նաև էներգետիկ ոլորտում. Կասպից ծովից (այս պահին միայն Ադրբեջանից) դեպի Եվրոպա գնացող գազատարների կառուցման հարցում ռուս-թուրքական հարաբերությունները մրցակցային են, իսկ Սևծովյան տարածաշրջանում՝ («Երկնագույն հոսք» և «Թուրքական հոսք»)՝ համագործակցային:

<sup>18</sup> **Boute A.**, Shaping the Eurasian Gas Market: The Geopolitics of Energy Market Regulation, *Geopolitics*, **28**, 5, 2042-2073.

<sup>19</sup> **Shlykov P.**, Op cit., 93-116.

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի մենաշնորհային ազդեցության նվազման հետ մեկտեղ կասսայան տարածաշրջանում աճում էր միջազգային դերակատարների ազդեցությունը: Արևմուտքի՝ մասնավորապես Եվրոպայի, Կասսայան ածխաջրածնային պաշաներով հետաքրքրվելը մեկ հիմնական նպատակ ուներ՝ բազմազանեցնել գազի մատակարարումը և, որպես հետևանք, ազատվել ռուսական գազի կախվածությունից: Այս նպատակի իրականացման համար Եվրոպայի Թուրքիային դիտարկում է որպես կարևոր տարանցիկ պետություն:

1990-ականների կեսերին կնքված պայմանագրերի հիման վրա կառուցվեց և 2005թ. շահագործման հանձնվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը, իսկ 2006թ.՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղը: Դրանց կառուցումը համարվեց ԱՄՆ-ի ամենամեծ աշխարհաքաղաքական հաղթանակը հետստորպատերազմյան Եվրասիայում՝ վերջ դնելով Ռուսաստանի մենաշնորհին կասսայան ավազանի ածխաջրածինների արտահանման գործընթացներում<sup>20</sup>: Սակայն ակնհայտ է, որ այդ խողովակաշարերը խորհրդանշական բնույթ ունեցան:

Թուրքիան հույս ուներ այդ ծրագրերի միջոցով մեծացնել իր աշխարհաքաղաքական ազդեցությունը Եվրասիական կենտրոնում, սակայն 2000-ականների սկզբին տեղի ունեցած զարգացումներն այլ ընթացք ունեցան: Լարվածությունը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում շարունակեց խորանալ, ՌԴ-ին հաջողվեց հաղթահարել ներքաղաքական լարվածությունը, ԱՄՆ շարունակում էր գործունեություն ծավալել միաբնեռ աշխարհակարգը պահպանելու համար, իսկ ԵՄ-ն շարունակում էր այլընտրանքային ուղիներ և աղբյուրներ փնտրել բազմազանեցման ծրագրիը հաջող իրականացնելու նպատակով: Այս ամենի արդյունքն այն էր, որ կասսայան ավազանի և միջինասիական էներգակիրների տեղա-

<sup>20</sup> **Թորոսյան Տ., Արշակյան Գ.**, Աշխարհաքաղաքական մրցակցությունը Հարավային Կովկասում Ռուս-թուրքական մրցակցություն, թե՛ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2016, 1(5), 5-34:

փոխման խնդիրը մի կողմից դառնում էր «աշխարհաքաղաքական մրցակցության գործիք, մյուս կողմից՝ աշխարհաքաղաքական շահերի բախման պատանդ»<sup>21</sup>:

Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը հրահրած հաջորդ նախագիծը 2008թ. Ադրբեջանի կողմից առաջարկած և ԵՄ-ի աջակցությունը ստացած «Հարավային գազային միջանցք» ռազմավարական ծրագիրն էր, որի շրջանակներում առաջարկված նախագծերը շրջանցում էին Ռուսաստանը<sup>22</sup>: Սկզբնական շրջանում այնպիսի տպավորություն էր ստեղծվել, որ այս ծրագիրը Ռուսաստանի հերթական էներգետիկ և աշխարհաքաղաքական պարտությունն է, սակայն հետագայում պարզ դարձավ, միջանցքի թողունակությունը տարեկան ընդամենը 16 միլիարդ խորանարդ մետր գազ է, որից միայն 10 միլիարդ խորանարդ մետր գազը Եվրոպայի համար, իսկ մնացածը 6 միլիարդ խորանարդ մետրը՝ Թուրքիայի:

«Հարավային գազային միջանցքը» բանակցային սեղանին հայտնվեց որպես «Նաբուկկոյին» փոխարինող ավելի քիչ հավակնոտ ծրագիր: Ակնկալվում էր, որ «Նաբուկկո» գազատարի թողունակությունը կկազմի տարեկան մինչև 31 մլրդ խորանարդ մետր և այն գազ կմատակարարի Ադրբեջանից, Իրաքից և Իրանից այն հասցնելով Ավստրիա<sup>23</sup>: Գազատարը դուրս մնաց բանակցային գործընթացներից 2013թ., սակայն արդեն 2006թ. «Նաբուկկոն» կորցրել էր իր տնտեսական կշռի մեծ մասը, երբ ՄԱԿ անվտանգության խորհուրդը պատժամիջոցներ սահմանեց Իրանի դեմ<sup>24</sup>: Այսպիսով, չնայած էներգետիկների հասանելիության բացակայու-

<sup>21</sup> **Թորոսյան Տ., Արշակյան Գ.**, Աշխարհաքաղաքական. . . .նշվ. աշխ.:

<sup>22</sup> **Siddi M.**, The Southern Gas Corridor: Prospects and Challenges for EU Foreign Policy, *Caucasus Analytical Digest*, 2019, 112, 7-11.

<sup>23</sup> **Hale W.**, Turkey's energy dilemmas: changes and challenges, *Middle Eastern Studies*, 2022, **58**, 3, 452-466.

<sup>24</sup> **Siddi M.**, The EU's Botched Geopolitical Approach to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, *Geopolitics*, 2017, **24**, 1, 124-144.

թյանը, այն շարունակում էր մնալ բանակցային սեղանին որպես ՌԴ շրջանցող գազատար<sup>25</sup>:

1990-ականներին առաջարկվել է մեկ այլ կարևոր՝ Թուրքմենստան-Ադրբեջան 32 միլիարդ խորանարդ մետր մետր գազ թողունակությամբ «Անդրկասպյան գազամուղը», որը, շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը, պետք է թուրքմենական գազը հասցնէր Եվրոպա<sup>26</sup>: Անդրկասպյան գազամուղի կառուցումը անհնարին դարձրեց 2018թ. կնքված «Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին» կոնվենցիայով, որը չի թույլատրում Կասպից ծովի հատակով խողովակաշարերի անցկացումը<sup>27</sup>: Ակնհայտ է, որ տարեկան 16 միլիարդ խորանարդ մետր գազ թողունակությամբ «Հարավային գազային միջանցքը» չի կարող իրական այլընտրանք լինել ռուսական գազին, այն միայն խորհրդանշական հաջողություն է ԵՄ-ի համար:

Ռուս-թուրքական համագործակցությունը ստացված է Սևծովյան տարածաշրջանում, թեպետ ոչ զուրկ աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունից, որոնք երբեմն դանդաղեցնում կամ խաթարում են համագործակցությունը երկու երկրների միջև:

Սևծովյան տարածաշրջանում պատմականորեն առանցքային են Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները: ԽՍՀՄ փլուզումից հետո, ներքաղաքական լուրջ մարտահրավերների դիմակայող Ռուսաստանը զբաղված էր դրանք հաղթահարելով, իսկ միջազգային ասպարեզում ազդեցության գոտիների ձեռքբերումը ժամանակավորապես մղվել էր երկրորդ պլան: Մակայն 2008թ. Մոսկվան կարողացավ իրավիճակը փոխել. ռուս-վրացական պատերազմը և դրա արդյունքները ստիպեցին այլ երկրներին վերանայել Ռուսաստանի դերը համաշխարհային քաղաքակա-

<sup>25</sup> Նույն տեղում

<sup>26</sup> **Чумаков Д.** Перспективы Транскаспийского газопровода, *Мировая Экономика и Международные Отношения*, 2019, **63**, 8, 47-54.

<sup>27</sup> Convention on the Legal Status of the Caspian Sea, <http://www.en.kremlin.ru/supplement/5328>, (14.01.2024)

նության մեջ<sup>28</sup>, իսկ Ղրիմի վերադարձով ՌԴ-ն ուժեղացրեց տարածաշրջանում իր ռազմածովային ուժերի գերակայությունը: 2016թ. սեպտեմբերին Ռուսաստանի Սևծովյան նավատորմի ռազմածովային զորավարժությունների շարքը դիտելուց հետո Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետ, գեներալ Վալերի Գերասիմովը հայտարարեց, որ «Մի քանի տարի առաջ ռուսական սևծովյան նավատորմի մարտական հնարավորությունները և թուրքական նավատորմի հնարավորությունները այլ հարաբերակցության մեջ էին. ումանք նույնիսկ ասում էին, որ Թուրքիան լիովին վերահսկում է Սև ծովը: Այժմ իրավիճակն այլ է»<sup>29</sup>:

Սևծովյան տարածաշրջանում ռուս-թուրքական համագործակցության առանցքը «Երկնագույն հոսք» և «Թուրքական հոսք» գազամուղներն են: 1997թ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր՝ Սև ծովի հատակով 1213 կմ երկարությամբ «Երկնագույն հոսք» գազատարը կառուցելու համար: Նախատեսվում էր այդ գազատարով տարեկան 16 միլարդ խորանարդ մետր գազ մատակարարել Թուրքիային՝ շրջանցելով երրորդ երկրները: Խողովակաշարը շահագործման է հանձնվել 2003թ.<sup>30</sup>: «Երկնագույն հոսք» գազատարը շահագործման հանձնելուց մեկ տարի առաջ բանակցային սեղանին հայտնվեց «Երկնագույն հոսք 2» գազատարի կառուցման ծրագիրը, որը Թուրքիայի և Ռուսաստանի նախահագները սկսեցին քննարկել ավելի ուշ՝ 2005թ.: Վերջինս «Երկնագույն հոսքի» ընդլայնումն էր լինելու՝ Սամսուն-Ջեյհանով դեպի հարավարևելյան Եվրոպա<sup>31</sup>:

<sup>28</sup> **Torosyan T.**, The Return of Turkey, *Russia in Global Affairs*, 2009, 3, July-September, 120-129.

<sup>29</sup> The naval power shift in the Black Sea, <https://warontherocks.com/2019/01/the-naval-power-shift-in-the-black-sea/>, (26.02.2023)

<sup>30</sup> **Kozma T.**, Diversification dilemmas in Turkey's natural gas imports..., pp. 89-106.

<sup>31</sup> **Գևորգյան Ա.**, Գլոբալ և տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը միջազգային էներգետիկ գործընթացներում Թուրքիայի



Խողովակաշարի երկրորդ գծի կառուցումը և այն Բուլղարիայի, Մերքիայի և Խորվաթիայի տարածքով դեպի արևմտյան Հունգարիա հասցնելու որոշումը կայացվեց «Նաբուկկո» գազատարի կառուցման որոշումն ընդունելուց հետո: Հետագայում «Երկնագույն հոսք 2»-ի կառուցումը փոխարինվեց «Հարավային հոսք» նախագծով, որը ենթադրում էր գազատարի ստորջրյա անցկացում Ռուսաստանից Բուլղարիա,<sup>32</sup>: Այդ գազատարի շինարարությունն արդեն սկսվել էր, երբ 2014թ. ՌԴ նախագահ Վ. Պուտինը հայտարարեց, որ Բուլղարիայից թույլտվություն չստանալու հանգամանքն հաշվի առնելով ՌԴ-ն չի կարող շարունակել նախագծի իրականացումը, իսկ կարճ ժամանակ անց «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերը հաստատեց, որ խողովակաշարի նախագիծը փակված է<sup>33</sup>: Բայց իրականում դա նախագծի վերափոխումն էր, այլ ոչ թե դադարեցումը:

Շատ չանցած Ռուսաստանի և Թուրքիայի նախագահները քննարկեցին «Հարավային հոսք» նախագծի վերափոխումը մեկ այլ նախագծի, որը ստացավ «Թուրքական հոսք» անվանումը: Այն միացնում է Ռուսաստանի գազի ամենամեծ պաշարները թուրքական գազատրանսպորտային ցանցին՝ ապահովելով էներգիայի հուսալի մատակարարում Թուրքիային, Հարավային և Հարավանեյան Եվրոպային: Մոտ 1100 կիլոմետր երկարությամբ խողովակաշարը բաղկացած է երկու գծից: Տարեկան մատակարարում է 31,5 միլիարդ խորանարդ մետր գազ ընդհանուր ծավալով: Առաջին գիծը նախատեսված է թուրք սպառողներին գազ մատակարարելու համար, երկրորդը՝ Հարավային և Հարավարևելյան Եվրոպայի երկրներին<sup>34</sup>:

---

ներգրավվածության վրա, *Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն*, 9, 2016, 91-137:

<sup>32</sup> **Köstem S.**, The Political Economy of Turkish-Russian Relations: Dynamics of Asymmetric Interdependence, *Perceptions*, 23 (2), 2018, pp. 10-32.

<sup>33</sup> Russia drops South Stream gas pipeline plan, <https://www.bbc.com/news/world-europe-30283571>, (20.01.2022).

<sup>34</sup> **Köstem S.**, Op. cit.

Քաղաքական դրդապատճառներով ռուսական «Հարավային հոսքից» հրաժարումը հանգեցրեց «Թուրքական հոսքի»՝ որպես այլընտրանք հայտնվելուն, որը կարճ ժամանակահատվածում իրականություն դարձավ: Թուրքիան այսօր էներգետիկ առումով Ռուսաստանի համար ռազմավարական կարևոր երկրներից է, քանի որ նա՝ էներգատեսուրսների սպառող է, և՛ տարանցիկ երկիր<sup>35</sup>:

Ռուս-թուրքական հարաբերությունները թեպետ համագործակցային են սևծովյան տարածաշրջանում, այնուամենայնիվ գուրկ չեն աշխահաքաղաքական գործընթացների ազդեցությունից: Ռուս-թուրքական հարաբերությունների վրա բացասաբար ազդեց Ռուսաստանի մասնակցությունը Սիրիական հակամարտության կարգավորմանը: Երկու երկրների միջև հարաբերությունները լարվեցին՝ գազաթնակետին հասնելով 2015թ. նոյեմբերի 24-ին՝ թուրքական զինուժի կողմից ռուսական ռազմական ինքնաթիռի խոցմամբ<sup>36</sup>: Միջադեպը զգալի ազդեցություն ունեցավ նաև էներգետիկ ոլորտում ռուս-թուրքական հարաբերությունների վրա: «Թուրքական հոսք» նախագիծը սառեցվեց, մինչև այն պահը, երբ Թուրքիայի նախագահը 2016թ. հուլիսին ներողություն խնդրեց Ռուսաստանից<sup>37</sup>:

### Ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը

Ռուս-ուկրաինական պատերազմից որոշ ժամանակ անց դադարեցվեցին «Հյուսիսային Հոսք» գազատարի գործարկումը և «Հյուսիսային Հոսք 2»-ի հավաստագրումը, որի հետևանքով Եվրոպական միությունը՝ մասնավորապես Գերմանիան, կորցրեց տարեկան 110 միլիարդ խորանարդ մետր գազ, որը բավական մեծ քանակություն է էներգետիկ մի շարք առանցքային խնդիրների

<sup>35</sup>Նույն տեղում

<sup>36</sup> **Balta E.**, From geopolitical competition to strategic partnership: Turkey and Russia after The Cold War, *Uluslararası İlişkiler*, 16 (63), 2019, pp. 69-86.

<sup>37</sup> Turkey 'sorry for downing Russian jet', <https://www.bbc.com/news/world-europe-36643435>, (26.02.2022).

լուծմանը խոչընդոտելու տեսակետից<sup>38</sup>: ՌԴ-ն սկսեց փնտրել այլընտրանքային տարբերակներ՝ ավելցուկային գազը տարբեր շուկաներ արտահանելու համար: Այդ տարբերակներից մեկը Թուրքիայի մասնակցությամբ էներգետիկ հանգույցի ստեղծումն է:

2022թ. ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված Սև ծովը կրկին կարևորություն է ստացել: Ոչ տարածաշրջանային դերակատարների հետաքրքրությունը սևծովյան տարածաշրջանի նկատմամբ կարող է փոխել տարածաշրջանի անվտանգության և կայունության ընկալումը: Սակայն պատերազմից բխող հետևանքները միայն Ռուսաստանի համար չեն խնդիրներ ստեղծել: Ռուսական գազից Եվրոպայի հրաժարումը բարդ խնդիրներ առաջադրեց նաև ԵՄ-ին: Որևէ նկատելի ձեռքբերում չտված «գազային» պատժամիջոցի «գոհ» դարձան իրենք՝ Եվրոպացիները, քանզի չունեն ռուսականին փոխարինող որևէ քիչ թե շատ իրական աղբյուր կամ ուղի, իսկ ներքին սպառումը կրճատելուն ուղղված կոչերը, բնականաբար, շոշափելի արդյունք չեն կարող ապահովել<sup>39</sup>:

2022թ. ՌԴ նախագահ Վ. Պուտինը՝ հայտարարեց, որ ՌԴ-ն կարող է իր գազն ուղղել «Հյուսիսային հոսք» գազատարների միջոցով դեպի դեպի Բալթիկ ծով, ապա Սև ծովի տարածաշրջան: Առաջարկվում էր բնական գազը Եվրոպա մատակարարել Թուրքիայի միջոցով<sup>40</sup>, որի հետևանքով Թուրքիան կամրապնդեր

դիրքերը որպես գազային հանգույց: Հոկտեմբերի կեսերին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մևլութ Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան կարող է դառնալ դեպի Եվրոպա

<sup>38</sup>Միրզախանյան Ֆ., Ադրբեջանի տեղը Եվրամիության գազային ճգնաժամի հաղթահարման գործընթացներում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2022, 1(17), 125-142:

<sup>39</sup> Celikpala M., Tatlioglu E., Türkiye's Black Sea Policy for Energy Security, *Vestnik RUDN. International Relations*, 2023, 23, 4, 748—761.

<sup>40</sup> Россия хочет создать газовый хаб в Турции: возможно ли это, Россия хочет создать газовый хаб в Турции: возможно ли это | Forbes.ru (26.02.2023).

հասնող բնական գազի էներգետիկ հանգույց<sup>41</sup>: Այդպիսի ռազմավարության մասին դեռ խոսվում էր տասնամյակներ առաջ<sup>42</sup>: Օրինակ, 2005թ. Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ այն ժամանակվա վարչապետը, հայտարարեց, որ Թուրքիայի էներգետիկ ռազմավարության հիմնական գործոններից մեկը նրա աշխարհագրության և աշխարհառազմավարական դիրքի օգտագործումն է՝ միջանցք ստեղծելով հարուստ էներգետիկ ռեսուրսներով և էներգիա սպառող երկրների միջև<sup>43</sup>: Թուրքիայի աճող բնական գազի պահանջարկը, աշխարհագրական դիրքը և Եվրոպայի համար տարածաշրջանային էներգետիկ հանգույց դառնալու ցանկությունը երկրի աշխարհաստեղծական ռազմավարության առաջնագծում են:

Էներգետիկ հանգույց է համարվում այն երկիրը, որը գնում է էներգետիկ ռեսուրսներ այնուհետև դրանք վերավաճառում այլ գնորդների: Պետությունն ինքն է սահմանում վաճառքի պայմանները անկախ սկզբնական արտադրողներից և վերջնական գնորդներից<sup>44</sup>: Ըստ Թուրքիայի նախագահ Էրդողանի, Թուրքիան ավելի լայն նպատակներ ունի. ստեղծել հանգույց, որը ոչ միայն բնական գազ կտեղափոխի Եվրոպա, այլ նաև այլ էներգակիրներ, ինչպես նաև զարկ կտա հանքարդյունաբերությանը<sup>45</sup>:

<sup>41</sup> Turkey can become an energy hub—but not by going all-in on Russian gas, Turkey can become an energy hub—but not by going all-in on Russian gas - Atlantic Council (26.03.2023).

<sup>42</sup> **Novikau A., Muhasilović J.**, Turkey's quest to become a regional energy hub: Challenges and opportunities, Department of Political Science and International Relations, International University of Sarajevo, Bosnia and Herzegovina, Heliyon 9, 2023, pp. 1-11.

<sup>43</sup> **Kozma T.**, Diversification dilemmas in Turkey's natural gas imports..., pp. 89-106.

<sup>44</sup> **Krauer-Pacheco K.**, Turkey as a transit country and energy hub: the link to its foreign policy aims, Forschungsstelle Osteuropa an der Universität Bremen, No 118, 2011, 66p.

<sup>45</sup> Cumhurbaşkanı Erdoğan: Ülkemizi enerji üssü haline getiriyoruz, <https://www.trthaber.com/haber/gundem/cumhurbaskani-erdogan-ulkemizi-enerji-ussu-haline-getiriyoruz-793436.html> (16.01.2024).

Թուրքիայի էներգետիկ հանգույց դառնալու գաղափարն արտացոլված է նաև «Թուրքիայի միջազգային էներգետիկ ռազմավարության» մեջ: Այդ փաստաթղթում Թուրքիայի էներգետիկ առևտրի կենտրոն դառնալու նախագծեր են համարվում «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը», «Հարավային Կովկաս գազի խողովակաշարը», «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազատարը, «Թուրքիա-Հունաստան» գազի փոխկապակցիչը, «Անդրանատոլիական» խողովակաշարը, և «Թուրքական հոսքը»: Ռազմավարության մեջ նախատեսվում է նաև Անդրանատոլիական խողովակաշարի թողունակությունը մինչև 2026թ. հարսցնել 31 միլիարդ խորանարդ մետրի<sup>46</sup>:

Վ. Պուտինի առաջարկը փոխշահավետ է երկու երկրների համար էլ, Թուրքիան կամրապնդիր իր դիրքը որպես էներգետիկ հանգույց՝ գազ ներմուծելով Եվրոպական շուկաներ, իսկ Ռուսաստանը կկարողանա արտահանել իր գազը Եվրոպա՝ պահպանելով էներգետիկ գերակայությունը տարածաշրջանում:

Կարելի է կարծել, թե նոր իրողություններով պայմանավորված, Թուրքիան իրական հնարավորություններ է ձեռք բերել իր դիրքներն ամրապնդելու համար՝ որպես էներգետիկ հանգույց: Իհարկե, Թուրքիայի աշխարհագրական դիրքը նպաստում է հանգույց դառնալու նպատակին՝ որպես այլընտրանք ռուսական գազը Ուկրաինայով դեպի Եվրոպա տեղափոխելուն: Թեպետ երկու կողմերը համաձայնություն տվել են գազային հանգույցի ստեղծման, գազի գների, փոխանցման սխեմաների և այլ հարցերի շուրջ քննարկումները դեռ շարունակվում են<sup>47</sup>: Հետևաբար մոտ ապագայում այս ծրագիրը դժվար թե իրականանա:

<sup>46</sup> Türkiye's International Energy Strategy, <https://www.mfa.gov.tr/turkeys-energy-strategy.en.mfa>, (14.01.2024).

<sup>47</sup> Exclusive: Disagreements delay Russian gas hub plans in Turkey, <https://www.reuters.com/business/energy/disagreements-delay-russian-gas-hub-plans-turkey-sources-2023-09-14/> (16.01.2024).

## Եզրակացություն

Ռուս-թուրքական էներգետիկ հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. այդ հարաբերությունների հիմքում ընկած է երկու հիմնական դինամիկա. աշխարհաքաղաքական մրցակցություն և տնտեսական եզակի համագործակցություն, որոնք երբեմն ընթանում են զուգահեռաբար: Երկու երկրների միջև հարաբերությունների տուրբուլենտային բնույթը բնորոշ է նաև էներգետիկ ոլորտում:

2. Թեև կասսյան պաշարների համար տարածաշրջանում ընթացող բարդ մրցակցության մեջ ԲԹՁ նավթամուղի և ԲԹԷ գազամուղի կառուցումը ռազմավարական նշանակություն չունեցավ, սակայն հնարավորություն տվեց Թուրքիան ու Ադրբեջանին ներգրավվել այդ գործընթացի մեջ՝ սպեկուլյատիվ նախագծերով շահելով զգալի դիվիդենդներ ու ֆինանսական միջոցներ: Այս սիմվոլիկ հաղթանակները նպաստեցին, որ Թուրքիան ներկայան որպես էներգետիկ հանգույց, իսկ Ադրբեջանը՝ որպես էներգակիրների հուսալի արտահանող Եվրասիայի համար:

3. Աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը վերածվեց համագործակցության: Երբ թվում էր թե «Հարավային հոսք» գազատարի չեղարկումը ՌԴ-ի էներգետիկ ձախումն էր, երկու կողմերը հայտարարեցին «Թուրքական հոսք» գազատարի գործարկման մասին, որը ավելի բարձր մակարդակի հասցրեց ռուս-թուրքական հարաբերությունները: Ոչ միայն առանց որևէ կորստի օգտագործվեց դադարեցված նախագծի արդեն կառուցված հատվածը, այլև «Երկնագույն հոսքի» հետ ապահովեց ռուսական գազի անվտանգ տեղափոխումը Եվրոպա՝ Թուրքիայի տարածքով: Այս երկու գազատարները իրենց թողունակությամբ (տարեկան 47.5 միլիարդ խորանարդ մետր գազ) երեք անգամ գերազանցում են Հարավային գազային միջանցքի նախագծային (տարեկան 16 միլիարդ խորանարդ մետր գազ) թողունակությունը, իրական հիմքեր են

ստեղծել թուրքական էներգետիկ հանգույցի կայացման գործում և գործնականում ի չիք են դարձնում Ռուսաստանի նկատմամբ կիրառվող եվրոպական պատժամիջոցները էներգետիկական ոլորտում:

4. Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում դեպի ԵՄ ռուսական գազի գրեթե 80% կրճատումից հետո Ռուսաստանի համար Թուրքիան դարձավ այլընտրանքային անվտանգ տարանցման հնարավորություն՝ ավելցուկային գազն արտահանելու համար: ՌԴ-ն այդ պաշարների մնացած մասն արտահանելու տեսակետից շոշափելի արդյունքներ ունի նաև դեպի Չինաստան ուղղությամբ: «Սիբիրի ուժը» գազատարների թողունակությունը տարեցտարի ավելանում է, սրան զուգահեռ ակտիվ քայլեր են արվում «Սիբիրի ուժը 2» գազատարի կառուցման ուղղությամբ: Թեպետ երկու գազատարները միասին զիջելու են «Հյուսիսային հոսք» գազատարների թողունակությանը, սակայն գազատարների կառուցմամբ Ռուսաստանը ձեռք կբերի ավելի կայուն շուկա իր գազը վաճառելու համար:

5. Այս զարգացումները Ռուսաստանի համար մեծացնում են Թուրքիայի նշանակությունը և դառնում են մրցակցության առաջացրած բարդությունները մեղմելու կարևոր գործոններ: Հետևաբար, ռուս-թուրքական մրցակցության/ համագործակցության յուրահատուկ հարաբերությունները տեսանելի ապագայում պահպանելու են իրենց կենսունակությունը, թեև Թուրքիայի համար ավելի ու ավելի բարդ է դառնում «Ռուսաստան» և «Արևմուտք» բևեռների միջև հավասարակշռության պահպանումը: Ամենայն հավանականությամբ կրկնվելու է պատմությունը՝ Թուրքիան, ինչպես 100 տարի առաջ, ընտրելու է այդ պահին իր համար ավելի շահավետ բևեռը՝ առանց հաշվի առնելու թե անցած ավելի քան երեք տասնամյակի ընթացքում որ կողմից ստացածն է եղել ավելի ծանրակշիռ:

**Russian-Turkish relations in the context of the formation of gas flows**

FLORA MIRZAKHANYAN

*Brusov State University*

The collapse of the USSR created many opportunities for the development of bilateral Russian-Turkish relations, in which the energy sector occupied a special place. Traditionally, In this area, relations between the two countries are also dynamic, from time to time emphasizing their competitive and cooperative nature. The Russian-Ukrainian war that began in 2022 and the new geopolitical realities that arose as a result created opportunities to strengthen Russian-Turkish relations. The purpose of the article was to clarify the essence of Russian-Turkish relations in the context of the formation of gas flows and the impact of the Russian-Ukrainian war on Russian-Turkish energy relations.



**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**

**DOI: 10.19266/1829-4286-2023-01-97-138**

**Ինքնորոշման հակամարտությունների ընթացքում  
պատերազմական գործողությունների վերսկսման  
հետևանքները կարգավորման գործընթացների վրա**

**ՄԱՐԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*Վ. Բրյուտովի անվան պետական համալսարան*

*Ինքնորոշման հակամարտությունների կարգավորման գործընթացներում հատկապես առանցքային նշանակություն է ստացել ռազմական գործողությունների վերսկսման հանգամանքը: Դա տեղի է ունենում մետրոպոլիայի նախաձեռնությամբ ու վկայում է, որ վերջինը պատրաստ է անգամ պատերազմական հանցագործությունների՝ ինքնորոշվող ժողովրդին իր կազմում պահելու կամ դուրս մղելու համար: Այդ պատճառով այդ շրջանը ամենաբարենպաստն է անկախության ճանաչման համար, քանի որ առարկայական հիմքեր են առաջանում պնդելու, որ ինքնորոշման այլընտրանքը ինքնորոշվող ժողովրդի ցեղասպանությունն է: Այդուհանդերձ, ճանաչման գործընթացի արագացումը ռազմական գործողությունների վերսկսման անվերապահ հետևանքը չէ: Պարզելու համար, թե վերսկսված ռազմական գործողությունների դադարեցումից հետո լրացուցիչ ինչ գործոններ են ազդում ճանաչման գործընթացի արագացման վրա, հողվածում դիտարկվում են 5 հակամարտությունների դեպքեր, երբ տեղի է ունեցել ռազմական գործողությունների վերսկսում, ապա այն դադարեցվել է: Հետագա զարգացումների պատճառները բացահայտելու նպատակով դիտարկված են տարբեր էլքեր ունեցած կարգավորման գործընթացներ՝ 10 գործոնների հիման վրա:*

**Բանալի բառեր**

Ինքնորոշման հակամարտություններ, պատերազմական գործողությունների վերսկսում, Լեռնային Ղարաբաղ, կարգավորման հնարավորություններ

**Նախաբան**

Ինքնորոշման հակամարտությունների վերսկսումից հետո կարգավորման գործընթացներն ունենում են կտրուկ շրջադարձեր:

որոշ դեպքերում դա հանգեցնում է ինքնորոշվող ժողովրդի ցեղասպանության կամ էթնիկ գտումների, կամ միջազգային հանրությունը կտրուկ քայլեր է ձեռնարկում ինքնորոշման իրավունքի արագ իրացման համար: Այդ պատճառով հատուկ ուշադրության է արժանի այն հարցի պատասխանի բացահայտումը, թե ինչով է պայմանավորված այդ շրջադարձի ընթացքն այս կամ այն ուղղությամբ: Այդ խնդրի վերլուծության արդյունքները թույլ կտան կանխել նման հակամարտությունների կարգավորման գործընթացների անցանկալի զարգացումները կամ հիմնավորված մարտավարությամբ ու ռազմավարությամբ վերականգնել կորուստները:

Վերլուծության մեթոդաբանությունը հետևյալն է: Ընտրված են ինքնորոշման հակամարտությունների հինգ դեպքեր՝ Արևմտյան Սահարա, Արևմտյան Պապուա, Արևելյան Թիմոր, Կոսովո և Լեռնային Ղարաբաղ, որոնց կարգավորման ընթացքում վերսկսվել են ռազմական գործողություններ, իսկ դրանց դադարեցումից հետո զարգացումներն ունեցել են տարբեր ուղղություններ: Արևմտյան Սահարայի և Կոսովոյի դեպքերում պատերազմական գործողությունների վերսկսումից հետո հաջողվել է դրանք դադարեցնել և վերականգնել բանակցային գործընթացը: Արևմտյան Պապուայի և Արևելյան Թիմորի դեպքերն ընտրված են ոչ միայն այն պատճառով, որ առաջին դեպքում գրեթե հաջողություն չի արձանագրվել, մինչդեռ երկրորդ դեպքում հաջողությունը լիարժեք է՝ Արևելյան Թիմորը անդամակցել է ՄԱԿ-ին որպես անկախ պետություն, այլև ցույց տալու համար, որ մետրոպոլիայի (այդ երկուսի դեպքում էլ մետրոպոլիան Ինդոնեզիան է) ազդեցությունը վճռորոշ չէ կարգավորման գործընթացի հետագա զարգացումների ուղղության առումով, քանի որ այդ դեպքերն ունեցել են միանգամայն տարբեր զարգացումներ: Լեռնային Ղարաբաղի դեպքում քննարկումն ունի առանցքային նշանակություն՝ պարզելու համար, թե ինչու Ադրբեջանը կարողացավ էթնիկ գտումներով ու ռազմական ագրեսիայով, պատերազմական հանցագործություններով Արցախի ժողովրդին դուրս մղել հազարամյակների իր

հայրենի տարածքներից ու դրանից հետո էլ փորձում է այնտեղ վերացնել հայկականության դարավոր և անհերքելի փաստերը:

Մերոդարանության տեսակետից կարևոր է նաև առանձնացնել այն գործոնները, որոնց հիման վրա պետք է կատարվի համեմատական վերլուծությունը: Դրանք 10-ն են և բնորոշում են գործընթացները՝ ինդրի հիմնական բաղադրիչների տեսակետից:

### **Արևմտյան Սահարայի հակամարտությունը**

Արևմտյան Սահարայի հակամարտությունը սկիզբ է առել 1975 թվականին, երբ Իսպանիան, Մարոկկոն և Մավրիտանիան ստորագրեցին Մադրիդյան եռակողմ համաձայնագիրը, որի համաձայն Իսպանիան Արևմտյան Սահարայի տարածքի հյուսիսային հատվածի՝ ամբողջ տարածքի երկու երրորդի կառավարումը վերապահեց Մարոկկոյին, իսկ տարածքի հարավային հատվածի՝ ամբողջ տարածքի մեկ երրորդի կառավարումը՝ Մավրիտանիային: Հաջորդ տարի Իսպանիան ամբողջությամբ դուրս եկավ Արևմտյան Սահարայից, իսկ Մարոկկոն և Մավրիտանիան փորձեցին վերահսկողություն սահմանել իրենց կառավարմանը հանձնված տարածքներում: Ազգային ազատագրական Պոլիսարիո ճակատը Ալժիրի, Կուբայի և Լիբիայի ռազմական աջակցությամբ պարտիզանական պատերազմ սկսեց Մարոկկոյի և Մավրիտանիայի զինված ուժերի դեմ և, մերժելով կնքված համաձայնագիրը, հռչակեց Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետության անկախությունը:<sup>1</sup> Մարոկկոն և Մավրիտանիան չճանաչեցին Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետության օրինականությունը, անգամ չցանկացան բանակցություններ վարել վերջինիս հետ:

---

<sup>1</sup> **Geoffrey Jensen**, *War and Insurgency in the Western Sahara* (Carlisle, PA: Strategic Studies Institute and US War College Press, 2013) p. 16 <https://press.armywarcollege.edu/monographs/526/> (accessed January 5, 2014)

Պատերազմական գործողությունների արդյունքում 1975-1976 թվականներին Արևմտյան Սահարայի 383.000 բնակչության<sup>2</sup> շուրջ 50 տոկոսը տեղահանվեց իր բնակավայրերից: 26.000 էթնիկ սահարա-ցիներ<sup>3</sup> բնակություն հաստատեցին Մավրիտանիայում, իսկ ըստ Ալժիրի կառավարության հաշվարկների՝ մոտ 165.000<sup>4</sup> փախստականներ հաստատվեցին Ալժիրի փախստականների ճամբարներում և Թինդուֆ նահանգում: Ըստ ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի՝ 2007 թվականին Արևմտյան Սահարայի փախստականների թիվը մոտ 155.000 էր<sup>5</sup>: Փախստականների հարցի լուծման համար ՄԱԿ-ն առաջարկում էր երեք տարբերակ՝ կամավոր հայրենադարձություն, տեղական ինտեգրում և երրորդ կողմի երկրում վերաբնակեցում, որոնք նպատակ ունեին վերացնել փախստականի կարգավիճակի օբյեկտիվ անհրաժեշտությունը և թույլ տալ փախստականներին ձեռք բերել պետության ամբողջական պաշտպանություն:<sup>6</sup> Սակայն և՛ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թվականի կոնվենցիան,<sup>7</sup> և՛ 1969 թվականի Աֆրիկյան հռչակագիրը

<sup>2</sup> "Western Sahara (Report on Human Rights Practices). USSD 2007. Retrieved 2017-06-25. <https://2001-2009.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/102555.htm>

<sup>3</sup> UNHCR Global Report 2009 - Mauritania <https://www.unhcr.org/media/unhcr-global-report-2009-mauritania>; Refugees, United Nations High Commissioner for. Refworld - U.S. Committee for Refugees World Refugee Survey 2004 - Mauritania

<https://www.refworld.org/reference/annualreport/uscrr/2004/en/28391>

<sup>4</sup> UNHCR Algeria Fact Sheet (August 2010) 01.08.2010

<https://web.archive.org/web/20110111014240/http://www.unhcr.org/4c9085bf9.html>; **Eric Goldstein; Bill Van Esveld, eds.** (2008). Human Rights in Western Sahara and in the Tindouf Refugee Camps. Human Rights Watch, 19 December 2008 <https://www.hrw.org/report/2008/12/19/human-rights-western-sahara-and-tindouf-refugee-camps>

<sup>5</sup> Western Sahara (Report on Human Rights Practices) USSD, 2007 <https://2001-2009.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/102555.htm>

<sup>6</sup> UNHCR, Informe: Tendencias globales, Oficina del Alto Comisionado de las Naciones Unidas para los Refugiado, 2012a, p. 12

<sup>7</sup>The Convention Relating to the Status of Refugees, <https://www.unhcr.org/media/convention-and-protocol-relating-status-refugees>

արձանագրում են, որ կամավոր հայրենադարձությունը պահանջում է փախուստի սկզբնական պատճառների վերացում, այսինքն՝ հարկա-դիր տեղահանման պատճառ դարձած հակամարտության լուծում:<sup>8</sup> Մինչդեռ Արևմտյան Սահարայում փախուստի պատճառները չվերացան և հազարավոր բռնի տեղահանվածներ դեռևս շարունակում են ապրել փախստականների ճամբարներում:<sup>9</sup>

Պոլիսարիոյի և Մավրիտանիայի եռամյա կատաղի զինված բախումների հետևանքով վերջինս, կորցնելով հսկայական ռեսուրսներ, որոշեց հրաժարվել Արևմտյան Սահարայի հարավային մասի նկատմամբ իր հավակնությունից և 1979 թվականի օգոստոսի 5-ին խաղաղության պայմանագիր կնքեց Պոլիսարիոյի ճակատի հետ՝ համաձայնելով վերջ տալ Արևմտյան Սահարայի նկատմամբ իր բոլոր տարածքային հավակնություններին, իսկ 1984 թվականին պաշտոնապես ճանաչեց Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը: Դրանից հետո Մարոկկոն 1979 թվականի սեպտեմբերին գրավեց այն՝ խախտելով 1976 թվականի ապրիլին համաձայնեցված տարածքային բաշխման համաձայնությունը, իսկ Պոլիսարիոյի ճակատը Ալժիրի, Լիբիայի, Կուբայի և Հյուսիսային Կորեայի ռազմական աջակցությամբ սկսեց դիմադրել Մարոկկոյի զինված ուժերին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1979 թվականի նոյեմբերի 21-ին ընդունեց «Արևմտյան Սահարայի հարցը» վերտառությամբ 34/37 բանաձևը,<sup>10</sup> որով հաստատվում էր Արևմտյան Սահարայի

<sup>8</sup> UNHCR, Informe: La situación de los refugiados en el mundo. En busca de la solidaridad, Oficina del Alto Comisionado de las Naciones Unidas para los Refugiados, 2012

<sup>9</sup> Why Are Sahrawi Refugees Denied the Right of Return? *Morocco world news*, July 02, 2018 <https://www.morocoworldnews.com/2018/07/249830/western-sahara-sahrawi-refugees-return-morocco>; Western Sahara's stranded refugees consider renewal of Morocco conflict // *The Guardian*, 6 Jan 2015 <https://www.theguardian.com/world/2015/jan/06/morocco-western-sahara-referendum-delay>

<sup>10</sup> United Nations General Assembly Resolution A/RES/34/37, Question of Western Sahara, 21 November 1979

ժողովրդի ինքնորոշման և անկախության անօտարելի իրավունքը՝ համաձայն ՄԱԿ և Աֆրիկյան միասնության կազմակերպության կանոնադրությունների, ավստսանք էր հայտնվում Մարոկկոյի կողմից Արևմտյան Սահարայի շարունակական օկուպացիայի և դրա հետևանքով ստեղծված իրավիճակի սրման համար և կոչ արվում Մարոկկոյին «միանալ խաղաղ գործընթացին՝ դադարեցնելով Արևմտյան Սահարայի տարածքի օկուպացիան»: Ավելի ուշ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան կրկին խստորեն դատապարտեց «Մավրիտանիայի կողմից տարհանված տարածքի Մարոկկոյի ռազմական օկուպացիան»:<sup>11</sup>

1981 թվականին Մարոկկոն 2700 կիլոմետրանոց պաշտպանական արգելապատնեշ կառուցելու միջոցով Պոլիսարիոյի նկատմամբ ձեռք բերեց ռազմական գերակայություն և մինչև 1991 թվականը գրավեց վիճելի տարածքի մոտ 80 տոկոսը: Պոլիսարիոն և Ալժիրը, հասկանալով, որ իրադարձություններն այդպես զարգանալու դեպքում պատերազմի էլքը Մարոկկոյի օգտին կվճռվի, իրենց ջանքերը մեծամասամբ կենտրոնացրեցին դիվանագիտական ճակատում՝ Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետության ճանաչման և միջազգային հանրության ավելի մեծ ճնշման հասնելու համար: Արդյունքում, մինչև 1982 թվականին ավելի քան հիսուն երկիր ճանաչեց Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը,<sup>12</sup>

[https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/A\\_RES\\_34\\_37.pdf](https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/A_RES_34_37.pdf)

<sup>11</sup> United Nations General Assembly Resolution A/RES/35/19, Question of Western Sahara, 11 November 1980

[https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/a\\_res\\_35\\_19.pdf](https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/a_res_35_19.pdf)

<sup>12</sup> **Pazzanita Anthony**, Morocco versus Polisario: a Political Interpretation // *The Journal of Modern African Studies*, 32, no. 2 (1994), <http://journals.cambridge.org/action/displayAbstract?fromPage=online&aid=2512728>

իսկ 1984 թվականին այն պաշտոնապես ճանաչեց նաև Աֆրիկյան միասնության կազմակերպությունը:<sup>13</sup>

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի դեկտեմբերի 2-ի 40/50 բանաձևով<sup>14</sup> ամրագրված հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերը կյանքի կոչվեցին 1986 թվականին և ենթադրում էին կողմերի միջև անուղղակի բանակցություններ: Մարոկկոն կտրականապես մերժեց դրանք, սակայն 1988 թվականի օգոստոսի 30-ին ՄԱԿ գլխավոր քարտուղարին հաջողվեց հասնել հակամարտողների կողմից խաղաղության պլանի՝ սկզբունքորեն ընդունմանը, ինչը կարող էր հանգեցնել Արևմտյան Սահարայում ինքնորոշման հանրաքվե անցկացնելուն: Գործադրված ջանքերն, այնուամենայնիվ, հետագա ընթացք չունեցան, քանի որ Մարոկկոն մշտապես խուսափում էր մասնակցությունից և Արևմտյան Սահարայի ուժերը 1989 թվականի հոկտեմբերին զինված բախումներ սկսեցին Մարոկկոյի հետ:<sup>15</sup>

ՄԱԿ գլխավոր քարտուղար Պերես դե Կուելարը 1990 թվականին Մարոկկոյի և Պոլիսարիոյի հակամարտության կարգավորման համար խաղաղության ծրագիր ներկայացրեց ՄԱԿ Անվտանգության խորհրդին: Այն կողմերին կոչ էր անում նվազեցնել իրենց ռազմական ներկայությունը Արևմտյան Սահարայում և հանրաքվեի միջոցով սահարացիներին հնարավորություն տալ ընտրություն կատարել՝ Մարոկկոյի հետ ինտեգրվելու կամ լիարժեք անկախություն ունենալու միջև: 1991 թվականի սեպտեմբերի 6-ին ռազմական պայքարն ավարտվեց Մարոկկոյի և Պոլիսարիոյի միջև հրադադարի և խաղաղության համաձայնագրի կնքմամբ, իսկ հրադադարի հաջորդ օրը

<sup>13</sup> **Rockower Paul**, Possibilities of Peace in The Western Sahara (Independent Study Project, School for International Training, Rabat, Morocco, 2002) p. 17 <http://mysite.verizon.net/SJRockower/PSR/Sahara2009.pdf>

<sup>14</sup> United Nations General Assembly Resolution A/RES/40/50, Question of Western Sahara, 2 December 1985 <http://www.worldlii.org/int/other/UNGA/1985/44.pdf>

<sup>15</sup> **Boukhari Ahmed**, The international dimension of the conflict over the Western Sahara and its repercussions for a Moroccan alternative, Mediterranean & Arab World – WP N° 16/2004 (Trans. Spanish), 5/4/2004, p. 1-17, <https://media.realinstitutoelcano.org/wp-content/uploads/2021/11/016-2004-wp.pdf>

կազմակերպվեց ՄԱԿ-ի առաքելությունը Արևմտյան Սահարայում (MINURSO)՝ նրան վերապահելով հրադադարի վերահսկման, հանրա-քվեի կազմակերպման և ընտրողների նույնականացման գործընթացի իրականացման իրավագործություններ: ՄԱԿ-ի առաքելությունը մինչև 1998 թվականը ճամբարներում ճանաչեց 42.378 ընտրելու տարիքի չափահասների՝ հաշվարկելով միայն նրանց, ովքեր դիմել էին առաքելության գրանցման գրասենյակներին և հետագայում կարողացան ապացուցել իրենց ծագումը Արևմտյան Սահարայից:

Անարդյունավետ «խաղաղ» գործընթացը, քվեարկելու իրավունքի և ընտրացուցակների մշակմանն ուղղված աշխատանքներում անհամաձայնություններն այնքան ձգձգեցին հանրաքվեի անցկացումը, որ այն այդպես էլ չանցկացվեց: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, փորձելով հասնել այս հակամարտության վերջնական կարգավորմանը, կողմերին և տարածաշրջանի պետություններին պարբերաբար կոչ էր անում շարունակել ՄԱԿ-ի հետ համագործակցությունը՝ ներկա փակուղուն վերջ դնելու և քաղաքական լուծման ուղղությամբ առաջընթացի հասնելու նպատակով:<sup>16</sup> Ավելին, տասնամյակների ընթացքում օկուպացված տարածքներում իրավիճակը չափազանց բարդացել էր՝ Մարոկկոյի իրավասության տակ գտնվող տարածքի և բնակչության կազմի խորը վերափոխման պատճառով: Վերջինս սահարացիներին վերածել էր փոքրամասնության իրենց սեփական երկրում (Արևմտյան Սահարայում ապրող բնակչության 20 տոկոսը) և մեծապես խոչընդոտում էր փախստականների ճամբարներից նրանց հայրենադարձության գործընթացին:<sup>17</sup>

2007 թվականի ապրիլի 10-ին Պոլիսարիոն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին ներկայացրեց նախագիծ, որը կոչվում

<sup>16</sup> The Moroccan Initiative in the Western Sahara, Moroccan-American Center for Policy,

<http://moroccanamericanpolicy.com/MoroccanCompromiseSolution041107.pdf>

(accessed February 9, 2013)

<sup>17</sup> **Sobero Yolanda**, Sahara: Memoria y Olvido (Barcelona: Ediciones Planeta, 2010)



էր «Ֆրենստե Պոլիսարիոյի առաջարկը փոխընդունելի քաղաքական լուծման համար, որը երաշխավորում է Արևմտյան Սահարայի ժողովրդի ինքնորոշումը»:<sup>18</sup> Մեկ օր անց Մարոկկոն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ներկայացրեց իր առաջարկը, որը կոչվում էր «Մարոկկոյի ինքնիշխանության շրջանակներում Սահարայի ինքնավարության կարգավիճակի շուրջ բանակցություններ վարելու համար Մարոկկոյի նախաձեռնություն»:<sup>19</sup> Արդյունքում, 2007 թվականի ապրիլի 30-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց S/RES/1754(2007) բանաձևը, որը երկու կողմերին կոչ էր անում սկսել ուղիղ բանակցություններ՝ «բարեխղճորեն և առանց նախապայմանների»:<sup>20</sup> Արձագանքելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կոչին՝ Մարոկկոն և Պոլիսարիոն Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո 2007-2008 թվականներին Նյու Յորքում սկսեցին ուղիղ բանակցություններ, սակայն այս հանդիպում-ները միայն հաստատեցին Պոլիսարիոյի ճակատի և Մարոկկոյի կառավարության միջև հաշտեցման ակնհայտ անհնարիությունը, քանի որ Մարոկկոն պնդում էր, որ քննարկվի միայն Մարոկկոյի ինքնիշխանության շրջանակներում Սահարայի ինքնավարության իր առաջարկը, մինչդեռ Պոլիսարիոն պնդում էր Արևմտյան Սահարայի ինքնորոշման իրավունքը՝ որպես հակամարտության միակ լուծում: Ավելին, կողմերը տարաձայնություններ ունեին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի

<sup>18</sup> UN Security Council, S/2007/210, Proposal of the Frente Polisario for a mutually acceptable political solution that provides for the self-determination of the people of Western Sahara, April 16, 2007, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-F6E4FF96FF9%7D/MINURSO%20S2007%20210.pdf>

<sup>19</sup> Royal Consultative Council for Saharan Affairs (CORCAS), Moroccan Initiative for Negotiating an Autonomy Statute for The Sahara, [www.corcas.com/eng/Home/tabid/486/ctl/Details/mid/1636/ItemID/1210/Default.aspx](http://www.corcas.com/eng/Home/tabid/486/ctl/Details/mid/1636/ItemID/1210/Default.aspx) (accessed December 15, 2013)

<sup>20</sup> United Nations Security Council Resolution S/RES/1754(2007), Adopted by the Security Council at its 5669th meeting, on 30 April 2007 <https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/MINURSO%20S%20RES%201754.pdf>  
<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/325/21/PDF/N0732521.pdf?OpenElement>

S/RES/1754(2007) բանաձևում նախատեսված ինքնորոշման հասկացության մեկնաբանման հարցում:

2017 թվականի հունվարին ՄԱԿ-ի ղեկավար Անտոնիո Գուտերեշի նոր նշանակումով փորձ արվեց կյանքի կոչել այս հակամարտության կարգավորման տեսլականը և 2018 թվականի սեպտեմբերին Արևմտյան Սահարայում ՄԱԿ-ի նոր բանագնաց Հորսթ Թուերը հրավիրեց Մարոկկոյին, Ալժիրին, Մավրիտանիային և Պոլիսարիոյի ճակատին 2018 թվականի դեկտեմբերի 4-ին և 5-ին վերսկսելու բանակցությունները ժնևում,<sup>21</sup> կրկին առանց էական արդյունքների:

2020 թվականի հոկտեմբերի կեսերին Մարոկկոյի և Պոլիսարիոյի ճակատի միջև լարվածությունը կրկին խորացավ, երբ Թինդուֆում բնակվող 100.000 սահարացի փախստականներ, անցնելով Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետության վերահսկվող տարածքներով, փակեցին ճանապարհը՝ արգելափակելով երթևեկությունը և ստեղծելով տրանսպորտային միջոցների մեծ քարավան:<sup>22</sup> Մարոկկոն, մեղադրեց Պոլիսարիոյի ճակատին ապառազականացված գոտի ներթափանցելու և ավազակային գործողություններ իրականացնելու մեջ:<sup>23</sup> Արդյունքում, 2020 թվականի նոյեմբերի 13-ին Մարոկկոյի և Պոլիսարիոյի ճակատի միջև վերսկսվեցին բախումները և տարածվեցին Մարոկկոյի Արևմտյան Սահարայի պատի երկայնքով: Մարոկկոն պնդում էր, որ տեղի ունեցածը ինքնապաշտպանության նպատակ

<sup>21</sup> **Yasmine Hasnaoui**, The United Nations leadership role in solving the Western Sahara conflict: progress or delays for peace? *Journal of Liberty and International Affairs*, 2018, 4(3), 106-121. <https://nbn-resolving.org/urn:nbn:de:0168-ssoar-61753-3>

<sup>22</sup> Activistas saharauis bloquean el paso del Guerguerat, principal carretera de conexión con Mauritania. *Público* (in Spanish). 25 October 2020. Retrieved 14 November 2020.

<sup>23</sup> Rabat deploys army in WSahara border zone after Polisario warnings. *Radio France Internationale*, 13 November 2020 <https://www.rfi.fr/en/wires/20201113-rabat-deploys-army-wsahara-border-zone-after-polisario-warnings>

էր հետապնդում,<sup>24</sup> մինչդեռ Պոլիսարիոյի ճակատը մեղադրեց Մարոկկոյին՝ հրադադարը խախտելու և ապառազմականացված գոտի մտնելու մեջ<sup>25</sup>, ինդրեց, որ Արևմտյան Սահարայում կազմակերպվի ինքնավարության կարգավիճակի որոշման թափանցիկ հանրաքվե՝ ՄԱԿ-ի հսկողության ներքո և կոչ արեց ՄԱԿ-ին միջամտել ստեղծված իրավիճակին՝ վերջ դնելով անգործությանը<sup>26</sup>, ինչի պայմաններում Մարոկկոյի նկրտումներն ու ոտնձգությունները Արևմտյան Սահարայի տարածքի նկատմամբ «օրինականացվում» էին:

Մինչ այժմ MINURSO-ի մանդատն արդեն 50 անգամ երկարացվել է<sup>27</sup>, սակայն այն դեռևս չի կատարել հանրաքվե կազմակերպելու առաքելությունը Արևմտյան Սահարայում: Որոշ պետություններ սատարում են Արևմտյան Սահարայի ժողովրդի ինքնորոշման իրավունքը<sup>28</sup>, որոշ երկրներ ճանաչել են Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը, որոշ երկրներ փոխել են իրենց դիրքորոշումը<sup>29</sup> հակամարտության վերաբերյալ,

<sup>24</sup> **Souhail Karam**, Military Clashes Erupt in Western Sahara After 30-Year Truce. *Bloomberg* 13 November 2020 <https://www.bloomberg.com/news/articles/2020-11-13/morocco-moves-army-to-end-western-sahara-blockade-le360-reports>

<sup>25</sup> Morocco PM says Western Sahara wall at centre of dispute completed./ *Reuters* 2020-11-18 <https://www.reuters.com/article/uk-morocco-westernsahara-idUKKBN27X2LR/>

<sup>26</sup> General Assembly Fourth Committee “Decades-long Dispute over Western Sahara Draws Appeals from Petitioners in Fourth Committee, with Some Saying Impasse No Excuse for Inaction”, Meetings Coverage, SIXTY-NINTH SESSION, 4TH MEETING (PM), GA/SPD/556, 9 October 2014 <https://press.un.org/en/2014/gaspd556.doc.htm>

<sup>27</sup> UN Documents for Western Sahara: Security Council Resolutions, [https://www.securitycouncilreport.org/un\\_documents\\_type/security-council-resolutions/?ctype=Western%20Sahara&cbtype=western-sahara](https://www.securitycouncilreport.org/un_documents_type/security-council-resolutions/?ctype=Western%20Sahara&cbtype=western-sahara)

<sup>28</sup> "Western Sahara 'Last Decolonization Process in Africa', Fourth Committee Told, As Unresolved Territorial Disputes, Including Gibraltar, Dominate Agenda. UN. <https://press.un.org/en/2010/gaspd452.doc.htm>

<sup>29</sup> **Anna Khakee**, The Western Saharan autonomy proposal and political reform in Morocco. *Cite journal requires* <https://www.academia.edu/772805>; Egypt denies plans to join states opening Western Sahara consulates. *Al-Monitor*. 29 December 2020 <https://www.al-monitor.com/originals/2020/12/egypt-open-consulate-western-sahara-morocco-polisario.html>; Italy Welcomes Morocco's Serious, Credible Efforts On Moroccan Sahara. *The News Agency* (TNA).

սակայն երկրների ճնշող մեծամասնությունը դեռևս դիքորոշում չի հայտնել:

### **Կոսովոյի հակամարտությունը**

Որպես հակամարտության լուծման վերջնափուլում գտնվող օրինակ՝ հողվածում քննարկվում է Կոսովոյի հակամարտությունը, որի ընթացքում պարբերական զինված բախումներն ու պատերազմական գործողությունները դադարեցվել են միջազգային խաղաղարար առաքելության միջամտության արդյունքում: Հարավսլավիայի փլուզումը հանգեցրեց վեց հանրապետությունների՝ անկախության ձեռքբերման իրավունքի իրացմանը, իսկ սահմանադրությամբ Սերբիայի կազմում որպես ինքնավար մարզ ընդգրկված Կոսովոյի կարգավիճակի հարցը մնաց չլուծված: 1991 թվականի սեպտեմբերի 22-ին հռչակվեց Կոսովոյի անկախ Հանրապետության ստեղծումը, այնուհետև անցկացվեց անկախության չարտոնված հանրաքվե, որին մասնակցեց բնակչության 87 տոկոսը՝ 99 տոկոսով քվեարկելով անկախության օգտին: Սկսվեց զինված կազմավորումների ձևավորումը, որոնք միավորվեցին Կոսոցոյի ազատագրական բանակի կազմում՝ որպես կանոնավոր բանակ:

1998 թվականի սկզբին սկսվեցին բռնություններն և անհնազանդությունները, ինչն աստիճանաբար վերածվեց պատերազմի: Այն ուղեկցվեց զանգվածային բռնաճնշումներով, խաղաղ բնակչության սպանություններով և էթնիկ զտումներով: Բռնությունների և բախումների հետևանքով 1998 թվականի գարնանից

---

<https://www.thenewsagency.in/world/italy-welcomes-moroccos-serious-credible-efforts-on-moroccan-sahara>; Russia condemns US recognition of Morocco's claim to Western Sahara. *AL ARABIYA*. 11 December 2020. <https://english.alarabiya.net/News/north-africa/2020/12/11/Russia-condemns-US-recognition-of-Morocco-s-claim-to-Western-Sahara>; Rwanda, Morocco Agree to Expedite Bilateral Agreements. *AllAfrica*. Retrieved 15 January 2020. <https://allafrica.com/stories/202001160118.html>

Կոսովոյի 2,1 միլիոն բնակչությունից<sup>30</sup> փախստականների և տեղահանվածների թիվը հասավ 290.000-600.000 մարդ:<sup>31</sup> Ստեղծված իրավիճակում, Կոսովոյի հակամարտության կարգավորման վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1998 թվականի մարտի 31-ի S/RES/1160(1998) բանաձևով<sup>32</sup> արձանագրվում էր, որ Կոսովոյում իրականացվող բռնություններն ու սահաբեկչությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է Բելգրադի իշխանություններն ու Կոսովոյի ալբանական համայնքի ղեկավարությունը Կոսովոյի քաղաքական կարգավիճակի հարցերի շուրջ անհապաղ, առանց նախապայմանների երկխոսություն սկսեն, որը կներառի ինքնավարության և իրական ինքնակառավարման զգալիորեն ավելի բարձր աստիճան: Կոսովոյի հակամարտության լուծման վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մեկ այլ՝ S/RES/1199(1998) բանաձևով<sup>33</sup> ընդգծվում էր ինտենսիվ մարտերի հետևանքով Հարավսլավիայի բանակի կողմից չափից դուրս և անխտիր ուժի կիրառումը, որը հանգեցրել է բազմաթիվ զոհերի քաղաքացիական անձանց շրջանում և ավելի քան 230 հազար մարդկանց տեղահանման: Այդ բանաձևով, ընդգծելով Կոսովոյի բնակիչների իրավունքների հարգումն ապահովելու անհրաժեշտությունը, Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության իշխանություններին կոչ էր արվում անհապաղ քայլեր ձեռնարկել իրավիճակը բարելավելու և մոտալուս հումանիտար աղետը կանխելու համար:

<sup>30</sup> **Brunborg Helge**, Report on the size and ethnic composition of the population of Kosovo, 14 August, 2002 [https://www.icty.org/x/file/About/OTP/War\\_Demographics/en/milosevic\\_kosovo\\_020814.pdf](https://www.icty.org/x/file/About/OTP/War_Demographics/en/milosevic_kosovo_020814.pdf)

<sup>31</sup> Committee on Migration, Refugees and Demography, Report, 22 September 1998, <https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=8642&lang=EN>

<sup>32</sup> United Nations Security Council Resolution S/RES/1160 (1998) (31 March 1998), <http://unscr.com/en/resolutions/doc/1160>

<sup>33</sup> United Nations Security Council Resolution S/RES/1199 (1998) (23 September 1998), <http://unscr.com/en/resolutions/doc/1199>

1999 թվականին Կոսովոյի հակամարտությունը կտրուկ սրվեց, ինչի արդյունքում «Խաղաղության կոնֆերանս» գումարվեց Ֆրանսիայի Ռամբույե քաղաքում, որտեղ կողմերը պետք է բանակցեին Կոսովոյում մարտերը դադարեցնելու ծրագրի շուրջ, ինչն էական արդյունավետություն չունեցավ, քանի որ Հարավսլավիայի կառավարությունն անընդունելի համարեց համաձայնագրի կից արձանագրությունը, որը թույլ էր տալիս ՆԱՏՕ-ի ուժերին ազատ մուտք գործել տարածաշրջան:<sup>34</sup>

Սերբական ուժերի և Կոսովոյի ազատագրական բանակի միջև աճող արյունալի հակամարտությանը վերջ դնելու նպատակով ՆԱՏՕ-ն, հանուն «մարդասիրական պատերազմի»<sup>35</sup>, 1999 թվականի մարտի 23-ից, 78 օր շարունակ ուժակոծեց Սերբիան՝ կապիտուլյացիայի ենթարկելով վերջինիս: Արդյունքում, Սլոբոդան Միլոշևիչը սերբական ուժերը դուրս բերեց Կոսովոյից, որն անցավ ՄԱԿ-ի անժամկետ կառավարման ներքո: Կոսովոյում 1999 թվականի մարտին ստեղծված իրավիճակը հանգեցրեց նրան, որ 1999 թվականի մարտից հունիս ընկած ժամանակահատվածում 435.000 ալբանացիներ<sup>36</sup> ստիպված եղան լքել Կոսովոն և հաստատվել հարևան երկրներում<sup>37</sup>՝ հիմնականում Ալբանիայում: Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով զերագույն հանձնակատարը հայտարարեց, որ Կոսովոյի բնակչության մոտ 25 տոկոսը տեղահանվել է իր բնակության վայրից:<sup>38</sup>

<sup>34</sup> **Judah Tim**, Kosovo: War and Revenge, New Haven: Yale University Press, 2002, p. 220

<sup>35</sup> **Adam Roberts**, NATO's 'Humanitarian War' over Kosovo. *Survival*, 1999, **41** (3): 102–123 doi:10.1080/00396339912331342943

<sup>36</sup> UNHCR (1999), Global Report, p.321, <http://www.unhcr.org/3e2d4d50d.html>

<sup>37</sup> UNHCR, Evaluation and Policy Analysis Unit (2000), The Kosovo refugee crisis, An Independent evaluation of UNHCR's emergency preparedness and response retrieved 3. March 2018

<sup>38</sup> Refugees flee Kosovo horror. *BBC News*. March 30, 1999.

1999 թվականի հունիսի 10-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց S/RES/1244(1999) բանաձևը<sup>39</sup>, որով Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությանը կոչ էր արվում անհապաղ վերջ դնել Կոսովոյում իրականացվող բռնություններին և Կոսովոյից ամբողջությամբ դուրս բերել բոլոր ռազմական, ոստիկանական ուժերն ու ռազմականացված մամինները: Բացի այդ, Կոսովոյում հաստատվում էր ռազմական և քաղաքացիական միջազգային ներկայություն, իսկ տարածքի կառավարման պատասխանատու հանդիսացող ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին Կոսովոյում ժամանակավոր կառավարում հաստատելու լիազորություն էր վերապահվում, ինչը պետք է նպաստեր Կոսովոյի ժողովրդի՝ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության կազմում էական ինքնավարություն ունենալուն և անցումային կառավարում իրականացնելուն՝ միաժամանակ ձևավորելով ու վերահսկելով ինքնակառավարման նախնական ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը՝ Կոսովոյի ամբողջ բնակչության խաղաղ և բնականոն կյանքն ապահովելու համար: Բանաձևով նախատեսվում էր նաև նպաստել Կոսովոյի էական ինքնավարությանն ու ինքնակառավարմանը, իրականացնել հիմնական քաղաքացիական, վարչական գործառույթներ այնքան ժամանակ, որքան կպահանջվեր, աջակցել ժողովրդավարական և ինքնավար ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների զարգացմանը և վերահսկել դրանց գործունեությունը, խթանել Կոսովոյի ապագա կարգավիճակը որոշելու համար նախատեսված քաղաքական գործընթացը, վերահսկողություն իրականացնել Կոսովոյի ժամանակավոր հաստատություններից քաղաքական կարգավորման ներքո ստեղծված հաստատություններին լիազորությունների փոխանցման նկատմամբ և այլն, որոնք իրականացնելիս պետք է հարգվեին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության և տարածաշրջանի մյուս պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը՝ Կոսովոյի ինքնավարության

<sup>39</sup> United Nations Security Council Resolution S/RES/1244 (1999) (10 June 1999) <http://unscr.com/en/resolutions/doc/1244>

ավելի բարձր մակարդակի և իրական ինքնակառավարման ապահովմամբ:<sup>40</sup>

ՄԱԿ ԱԽ 1244 բանաձևի հիման վրա Կոսովոյում հաստատվեց ՄԱԿ-ի ժամանակավոր առաքելություն (UNMIK), ինչը շրջադարձային նշանակություն ունեցավ հակամարտության կարգավորման գործընթացում: 2003թ.ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ընդունեց «Նախ ստանդարտներ, ապա կարգավիճակ» փաստաթուղթը, որը նախատեսում էր կարգավիճակի հարցին անդրադառնալ միայն Կոսովոյում ժողովրդավարական ստանդարտներ ներդնելուց հետո: Սակայն Կոսովոյի ալբանացիները անհնազանդության ակցիաներով անհամաձայնություն արտահայտեցին այդ մոտեցման դեմ: 2004 թվականի մարտին Կոսովոյում անհնազանդության և անկարգությունների արդյունքում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄԿ) 2004 թվականի ապրիլի 29-ին ընդունեց 1375(2004) բանաձևը<sup>41</sup>, որով դատապարտում էր բազմաթիվ մարդկանց մահվան, գույքի, կարևոր մշակութային հուշարձանների վնասվման հանգեցրած իրադարձությունները: Բանաձևը, արձանագրելով, որ տեղի է ունեցել ալբանական բնակչության էթնիկ զտում, որպես Կոսովոյի հակամարտության լուծման միակ իրավական հիմք էր նախատեսում ՄԱԿ Անվտանգության խորհրդի S/RES/1244(1999) բանաձևը, որի առանցքային հարցերից մեկը ինքնակառավարմանն անցում կատարելն էր:

Կոսովոյի իրավիճակի վերաբերյալ համապարփակ զեկույց պատրաստելու համար նշանակված Կայ Էյդեն 2005 թվականին զեկույցեց, որ Կոսովոյում ՄԱԿ-ի ազդեցությունը նվազում է՝ առաջարկելով ԵՄ-ին մեծացնել իր ազդեցությունն ու գործունեությունը տարածաշրջանում և սկսել Կոսովոյի կարգա-

<sup>40</sup> United Nations Security Council Resolution, 1244 (10 June 1999)

[https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/990610\\_SCR1244%281999%29.pdf](https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/990610_SCR1244%281999%29.pdf)

<sup>41</sup> Situation in Kosovo. PACE Resolution 1375 (2004) 29 April 2004, <https://pace.coe.int/en/files/17217/html>



վիճակի վերաբերյալ բանակցություններ:<sup>42</sup> Արդյունքում, 2005 թվականի հոկտեմբերին ՄԱԿ Անվտանգության խորհուրդը հավանություն տվեց վերջնական կարգավիճակի գործընթացի մեկնարկի առաջարկին<sup>43</sup> և Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի ներկայացուցիչներից կազմված Կոնտակտային խումբը, հրապարակեց առաջնորդող սկզբունքների փաթեթ, որով բացառվում էր ցանկացած վերադարձ մինչև 1999 թվականը եղած ստատուս քվոյին, Կոսովոյի բաժանումը կամ Կոսովոյի և որևէ այլ պետության միջև միությունը:<sup>44</sup> Մարտի Անթիսաարին 2006 թվականի փետրվարին նախաձեռնեց կողմերի միջև ուղիղ բանակցություններ, որի արդյունքները ներկայացվեցին 2007 թվականի մարտին՝ լրացուցիչ զեկույցով: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները կողմ էին անկախացմանը, իսկ Ռուսաստանը մերժեց Անթիսաարիի առաջարկները՝ չընդունելով որևէ պարտադրված լուծում, որը ճնշում է գործադրում Բելգրադի և Պրիշտինայի միջև երկխոսության և փոխզիջման գործընթացի վրա:<sup>45</sup>

2007 թվականի օգոստոսի 1-ին ՄԱԿ-ը պաշտոնապես հայտարարեց Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և ԵՄ-ի ներկայացուցիչներից կազմված «Եռյակի» ձևավորման մասին,<sup>46</sup> որը պետք է ուսումնասիրեր Կոսովոյի հակամարտության լուծման համար մի շարք տարբերակներ, սակայն չորս ամիս անց

<sup>42</sup> United Nations Security Council 'Letter dated 7 October 2005 from the Secretary-General addressed to the President of the Security Council', UN Security Council Document, S/2005/635, 7 October 2005. <https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/Kos%20S2005%20635.pdf>

<sup>43</sup> 5289th Meeting of the Security Council, UN Security Council Document, S/PV5289, 24 October 2005. 5290th Meeting of the Security Council, UN Security Council Document, S/PV5290, 24 October 2005

<sup>44</sup> Guiding principles of the Contact Group for a settlement of the status of Kosovo, 2 November 2005

<sup>45</sup> Russian foreign minister criticizes U.N. plan for Kosovo // Associated Press, 21 March 2007

<sup>46</sup> EU considers key role to break Kosovo deadlock, Reuters, 23 July 2007

Եռյակը հայտարարեց, որ չի կարողացել կողմերի միջև համաձայնություն գտնել:

2008 թվականի փետրվարի 17-ին Կոսովոն վերահռչակեց անկախ պետության ստեղծումը: ԵՄ-ն հայտարարություն տարածեց՝ նշելով, որ անդամ երկրները կորոշեն «ազգային պրակտիկայի և միջազգային իրավունքի համաձայն՝ Կոսովոյի հետ իրենց հարաբերությունների վերաբերյալ»:<sup>47</sup> Բազմաթիվ փախստականներ, որոնց թիվը կազմում էր ավելի քան 900.000 մարդ,<sup>48</sup> կարողացան վերադառնալ իրենց բնակության վայրերը: Կոսովոյի անկախությունը Սերբիան հայտարարեց անօրինական, իսկ նախագահը պնդեց, որ Բելգրադը երբեք չի ճանաչի անջատումը, մինչդեռ Եվրոպայի խոշոր տերությունները և Միացյալ Նահանգները ճանաչեցին այն:<sup>49</sup>

2008 թվականի դեկտեմբերին Եվրոպական միության առաքելությունը (Eulex) ստանձնեց ոստիկանության, արդարադատության և մաքսային ծառայությունների կառավարումը, ինչը մինչ այդ իրականացնում էին ՄԱԿ-ի ներկայացուցիչները: 2011 թվականի փետրվարին Կոսովոյում ընտրվեց նախագահ և նշանակվեց վարչապետ, ինչից հետո, 2012 թվականի սեպտեմբերին Եվրոպական միության 23 երկրների, Միացյալ Նահանգների և Թուրքիայի պատվիրակներից բաղկացած խումբը պետք է դադարեցներ 2008 թվականից իրականացվող վերահսկողությունը Կոսովոյի կառավարության վրա, թեև ՆԱՏՕ-ի 4500 խաղաղա-

<sup>47</sup> Council of the European Union, ‘Council conclusions on Kosovo’, EU News, 30/2008, 18 February 2008

<sup>48</sup> Committee on Migration, Refugees and Demography, Humanitarian situation of returnees to Kosovo, 23 April 2001 <https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=9230&lang=EN#:~:text=Enormous%20progress%20has%20been%20achieved%20in%20assisting%20hundreds%20of%20thousands,in%20the%20year%202000%20alone.>

<sup>49</sup> Kosovo independence move not illegal, says UN court // *BBC News*, 22 July 2010 <https://www.bbc.com/news/world-europe-10730573>; U.S., European powers recognize Kosovo // *NBC NEWS*, Feb. 18, 2008 <https://www.nbcnews.com/id/wbna23219277>

պահներ դեռևս շարունակում են իրենց առաքելությունը Կոսովոյում:<sup>50</sup>

2013 թվականի ապրիլին Կոսովոն և Սերբիան համաձայնության եկան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, ինչի արդյունքում բարձր աստիճանի ինքնավարություն էր շնորհվում հյուսիսում գտնվող սերբական մեծամասնություն ունեցող շրջաններին, իսկ երկու կողմերը չէին խոչընդոտելու միմյանց՝ ԵՄ-ին անդամակցելուն ուղղված ջանքերին:<sup>51</sup>

ՄԱԿ անդամ 193 երկրներից 99-ն ճանաչել են Կոսովոյի անկախությունը երկկողմ հարաբերությունների մակարդակով: Սակայն անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանի Դաշնությունն ու Չինաստանը դեռևս չեն ճանաչել Կոսովոյի անկախությունը՝ արգելք հանդիսանալով ՄԱԿ-ին Կոսովոյի անդամակցության համար: Մյուս կողմից ո՛չ Կոսովոն, ո՛չ Սերբիան չեն անդամակել Եվրամիությանը, թեև համարվում էր, որ այդ անդամակցությունը կարող է դառնալ առանցքային գաղափար հակամարտության կարգավորման համար: Սերբիան դեռևս 2012 թվականից ԵՄ-ի թեկնածու երկիր է, իսկ Կոսովոն պաշտոնապես ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ հայտ է ներկայացրել 2022 թվականի դեկտեմբերին:

### **Ինդոնեզիան ընդդեմ Արևմտյան Պապուայի և Արևելյան Թիմորի**

Այս խորագրի ներքո դիտարկվում են ինքնորոշման հակամարտությունների կարգավորման երկու գործընթացներ, որոնց դեպքում մետրոպոլիսն նույնն է՝ Ինդոնեզիան: Քանի որ այդ հակամարտությունների կարգավորման գործընթացները սկզբունքորեն տարբեր էլքեր են ունեցել, հետազոտությունը ցույց է տալիս, որ արդյունքներն առաջին հերթին կախված են ոչ թե

<sup>50</sup> **Tamara Kovacevic** Kosovo: Why is violence flaring between ethnic Serbs and Albanians? // *BBC News*, 2 October 2023 <https://www.bbc.com/news/62382069>

<sup>51</sup> Belgrade-Pristina Dialogue: Agreement on the path to normalisation between Kosovo and Serbia, 27.02.2023, Brussels [https://www.eeas.europa.eu/eeas/belgrade-pristina-dialogue-agreement-path-normalisation-between-kosovo-and-serbia\\_en](https://www.eeas.europa.eu/eeas/belgrade-pristina-dialogue-agreement-path-normalisation-between-kosovo-and-serbia_en)

մետրոպոլիայի, այլ ինքնորոշվող կողմի գործողություններից: Այդ հակամարտությունները հետևանք եղան ապագադուրացման գործընթացի, երբ եվրոպական երկրները հեռանում էին իրենց գաղութներից, իսկ դրանց հարևան պետությունների զինված ուժերը ներխուժում էին այդտեղ ու փորձում էին այդ տարածքները միացնել իրենց պետություններին: Ասիայում հատկապես աչքի ընկավ Ինդոնեզիան, որը երկու հարևան ապագադուրացված տարածքներ, որտեղ դեռ լիարժեքորեն չէին ձևավորվել պետություններ, ուղղեց զինված ուժեր՝ փորձելով բռնազավթել դրանք: Արևմտյան Պապուայում և Արևելյան Թիմորում սկիզբ առած հակամարտությունները թեև ունեին մի շարք ընդհանուր հատկանիշներ՝ բնույթ, ժամանակահատված, ընդհանուր մետրոպոլիա (վերագաղութացման ձգտող Ինդոնեզիան), սակայն միանգամայն տարբեր եղան դրանց կարգավորման գործընթացների ելքերը:

**Արևմտյան Պապուայի հակամարտությունը:** ԱՄՆ-ի ազդեցությամբ 1962 թվականի օգոստոսի 15-ին Նյու Յորքում Նիդեռլանդների և Ինդոնեզիայի միջև կնքվեց համաձայնագիր<sup>52</sup>, որով Նիդեռլանդները Արևմտյան Պապուայի<sup>53</sup> կառավարումը պետք է փոխանցեր ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ստեղծած Ժամանակավոր գործադիր մարմնին (UNTEA), իսկ 1963 թվականի մայիսի 1-ից կառավարումն անցնելու էր Ինդոնեզիային: Գլխավոր քարտուղարի ներկայացուցիչը Ջակարտայի հետ նախապատրաստելու էր ազատ ընտրության իրականացումը՝ ըստ նախնական պայմանավորվածությունների: Համաձայնագրի 18-րդ հոդվածի համաձայն՝ Ինդոնեզիան, ՄԱԿ-ի ներկայացուցիչ և նրա աշխատակազմի աջակցությամբ, տարածքի բնակիչներին

<sup>52</sup> Agreement concerning West New Guinea (West Irian), signed by the Netherlands and Indonesia at the Headquarters of the United Nations, New York, on 15 August 1962

[https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/ID%20NL\\_620815\\_AgreementConcerningWestNewGuinea.pdf](https://peacemaker.un.org/sites/peacemaker.un.org/files/ID%20NL_620815_AgreementConcerningWestNewGuinea.pdf)

<sup>53</sup> **MacLeod Jason.** Merdeka and the Morning Star: Civil Resistance in West Papua. Queensland, Australia: University of Queensland Press, 2015, p. 27

ընտրության ազատության հնարավորությունն ընձեռելու համար պետք է ձեռնարկեր

1. խորհրդակցություններ ներկայացուցչական խորհուրդների հետ՝ պարզելու բնակչության կամքի ազատ արտահայտման ընթացակարգերի և մեթոդների համապատասխանությունը,

2. ազատ ընտրության իրականացման փաստացի ամսաթվի որոշումը,

3. հարցերի ձևակերպումն այնպես, որ դրանք թույլ տան բնակիչներին որոշել՝ ա) արդյոք նրանք ցանկանում են մնալ Ինդոնեզիայում, կամ՝ բ) արդյոք նրանք ցանկանում են խզել իրենց կապերը Ինդոնեզիայի հետ,

4. իրականացվելիք Ինքնորոշման ակտին մասնակցելու բոլոր չափահասների իրավասության ապահովումը՝ միջազգային պրակտիկայի համապատասխան, որոնք ռեզիդենտ էին համաձայնագրի ստորագրման և ինքնորոշման ակտի պահին՝ ներառյալ այն բնակիչները, ովքեր հեռացել էին 1945 թվականից հետո և Նիդեռլանդների վարչակազմի դադարեցումից հետո վերադարձել էին՝ վերաբնակեցվելով տվյալ տարածքում:

Ինքնորոշման ակտով նախատեսված ծրագիրը պետք է ավարտվեր մինչև 1969 թվականը, իսկ ինքնորոշման իրավունքի իրացումից հետո Ինդոնեզիան և ՄԱԿ ներկայացուցիչը պետք է վերջնական զեկույցներ ներկայացնեին Գլխավոր քարտուղարին, որը պետք է Գլխավոր ասամբլեային զեկույցեր Ինքնորոշման ակտի կատարման և դրա արդյունքների մասին: Այնուամենայնիվ, կնքված համաձայնագրով նախատեսված «միջազգային պրակտիկայի համաձայն ինքնորոշում» տեղի չունեցավ, իսկ 1969 թվականին Ինդոնեզիայի կազմակերպած «Ազատ ընտրության ակտը» տապալվեց՝ 700.000 բնակչությունից քվեարկելու իրավունք վերապահելով միայն 1.025 ընտրված պապուացիների, որոնք զենքի սպառնալիքի ներքո քվեարկեցին Ինդոնեզիայի կազմում մնալու օգտին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հարցը այդքանով համարեց լուծված և այն հանեց օրակարգից, այնինչ Արևմտյան Պապուան չիրաժարվեց ինքնորոշման համար պայքարից: Արդյունքում,

Ինդոնեզիայի զինված ուժերի ու աշխարհագրայինների կողմից այդ տարածքի բնակչության նկատմամբ թույլ տրվեցին մարդու իրավունքների կոպտագույն խախտումներ, մասնավորապես, 1963 թվականից ի վեր բռնության գոհերի թիվը տատանվում էր 100.000-ից մինչև 300.000-ի շրջանակներում<sup>54</sup>, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ գոհերի թիվը հասնում էր 500.000-ի<sup>55</sup> ԱՄՆ-ի Յեյի<sup>56</sup> և Ավստրալիայի Սիդնեյի<sup>57</sup> համալսարանները Պապուայում իրականացված բռնությունները որակում էին որպես ցեղասպանություն: 1965 թվականից մինչև 1998 թվականը Պապուայի ազատ շարժման զինված պայքարի դադարեցման պատրվակով այնտեղ տեղակայված Ինդոնեզիայի ռազմական ստորաբաժանումների բռնության զոհ դարձան տեղի քաղաքացիական անձինք<sup>58</sup> 1969 թվականի դրությամբ Արևմտյան Պապուայի բնակչության մոտավորապես 50 տոկոսը դարձավ փախստական<sup>59</sup>

1984 թվականի փետրվարին վերսկսվեցին ռազմական գործո-դությունները և Արևմտյան Պապուայում բռնությունները

<sup>54</sup> **Croccombe R. G.** *Asia in the Pacific Islands: Replacing the West*. Suva, Fiji: IPS Publications, University of the South Pacific. p. 287. ISBN 9789820203884. Archived from the original on 5 February 2023. Retrieved 11 March 2021 [https://books.google.am/books?id=iDg9oAkwsXAC&pg=PA287&redir\\_esc=y#v=onepage&q&f=false](https://books.google.am/books?id=iDg9oAkwsXAC&pg=PA287&redir_esc=y#v=onepage&q&f=false)

<sup>55</sup> **Widjojo Muridan S.**, Non-State Actors and the ‘Cycle’ of Violence in Papua. Unpublished paper presented to the Workshop, *Conflict, Violence and Displacement in Papua*, Refugee Studies Centre (RSC), St Anthony College, Oxford, 26 October 2006

<sup>56</sup> **Brundige Elizabeth**, Indonesian Human Rights Abuses in West Papua: Application of the Law of Genocide to the History of Indonesian Control. A paper prepared for the Indonesian Human Rights Network by the Allard K. Lowenstein International Human Rights Clinic, Yale Law School, April 2004

<sup>57</sup> **Wing John and King Peter**, Genocide in West Papua? The Role of the Indonesian state apparatus and a current needs assessment of the Papuan people, the Centre for Peace and Conflict Studies, the University of Sydney and ELSHAM Jayapura, Papua, August 2005

<sup>58</sup> **Budiardjo Carmel**, *State Terror in Indonesia, Past and Present*. A paper presented at the Centre for the Study of Terrorism and Political Violence, St Andrews University, Scotland, 20 November 2001

<sup>59</sup> **Celerier, Philippe Pataud**. Autonomy isn't independence; Indonesian democracy stops in Papua. *Le Monde Diplomatique*, 7 December 2011. <https://mondediplo.com/2010/06/14/indonesia>

հանգեցրեցին փախստականների նոր ալիքի, ինչի արդյունքում շուրջ 16.500 Արևմտյան Պապուացի փախստականներ հաստատվեցին Պապուա Նոր Գվինեայում:<sup>60</sup> Մի քանի տասնյակ փախստականների մահից հետո Պապուա Նոր Գվինեայի կառավարությունը ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարին ճամբարներ լիարժեք մուտք գործելու հնարավորություն տվեց: 1987 թվականի վերջին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը հայտնեց, որ միայն 1.500 փախստական է վերադարձել Արևմտյան Պապուա: Սակայն նրանց թույլ չի տրվել վերադառնալ իրենց գյուղերը՝ իշխանությունները տեղափոխել են հատուկ վայրեր, հաճախ ռազմական հսկողության տակ գտնվող տարածքներ՝ շարունակաբար ենթարկելով անվտանգության ստուգումների և ոտնձգությունների:<sup>61</sup>

2001 թվականին մշակվեց Պապուա նահանգի «Հատուկ ինքնավարության մասին» 21-րդ օրենքը, որը ներառում էր դրույթներ ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության և հարգանքի, հակամարտության լուծման և Արևմտյան Պապուայի անկախության ճանաչման վերաբերյալ, սակայն այդ օրենքն որևէ էական ազդեցություն չունեցավ Պապուայի քաղաքականության և անվտանգության վիճակի վրա՝ դրա կիրառումն ապահովող տեխնիկական կանոնակարգերի և հստակ նորմերի բացակայության պատճառով, և ձախողվեց: Դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ նախատեսվում էր հատուկ ինքնավարության քաղաքականություն

<sup>60</sup> **Budiardjo Carmel, Liong Liem Soel**, West Papua: The obliteration of a people 5 (3d ed. 1988) (1973). p. 93; West Papua: Plunder in paradise 77 (Anti-Slavery Society Indigenous Peoples and Development Series ed., 1990), p. 56.

<sup>61</sup> **Brundige Elizabeth, King Winter, Vahali Priyneha, Vladeck Stephen, and Yuan Xiang**, Indonesian Human Rights Abuses in West Papua: Application of the Law of Genocide to the History of Indonesian Control, April 2004 p. 36-38, [https://law.yale.edu/sites/default/files/documents/pdf/Intellectual\\_Life/West\\_Papua\\_final\\_report.pdf](https://law.yale.edu/sites/default/files/documents/pdf/Intellectual_Life/West_Papua_final_report.pdf)

միակողմանի քաղաքական զիջումների, այլ ոչ թե քաղաքական բանակցությունների միջոցով:

Ինդոնեզիայի գիտությունների ինստիտուտը (LIPI) շուրջ երեք տարի հետազոտելով Պապուայի հակամարտությունը, 2004-2006 թվականներին մշակեց «Պապուայի ճանապարհային քարտեզ» անվան-ված փաստաթուղթ<sup>62</sup>, որպես հակամարտության համապարփակ և հիմնարար լուծման հասնելու ճանապարհ: Այն ձևակերպում էր առնվազն չորս բարդ խնդիր՝ 1. Պապուայի կարգավիճակը և քաղաքական պատմությունը Ինդոնեզիայում, 2. ազգային զարգացման ձախողումը հանրային կրթության, առողջապահության և տնտեսության ոլորտներում, 3. պետության կողմից իրականացվող բռնությունը, խտրականությունն ու մարզինալացումը պապուական ժողովրդի նկատմամբ, 4. մարդու իրավունքների դիտավորյալ խախտումները:

Այդ փաստաթղթով սահմանված խնդիրների լուծման ուղիների ընտրությունն արդյունավետ չէր և անգամ 2019 թվականին այդ չորս հիմնական խնդիրները դեռևս առկա էին Պապուայում, ինչը օգոստոսին հանգեցրեց իրավիճակի սրման:

2019 թվականի օգոստոսի վերջին Արևմտյան Պապուայում անկախության հանրաքվե անցկացնելու կոչով ավելի քան 1,8 միլիոն մարդկանց ստորագրած խնդրագիր հանձնվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Միշել Բաչելետին:<sup>63</sup> Անհանգստացած բռնության աճով՝ նա կոչ արեց իշխանություններին երկխոսության մեջ մտնել Արևմտյան Պապուայի ժողովրդի՝ հետ իրենց ձգտումների և մտահոգությունների շուրջ՝ ձեռնպահ մնալով ուժի չափից ավելի կիրառումից:<sup>64</sup> Բացի այդ, Արևմտյան Պապուայի Միացյալ

<sup>62</sup> Papua road map: Negotiating the Past, Improving the Present and Securing the Future, LIPI Team Members: **Widjojo Muridan S., Adriana Elisabeth, Amiruddin, Cahyo Pamungkas, Dewi Rosita**, The Indonesian Institute of Sciences (LIPI) Jakarta, 2008

<sup>63</sup> **Wibawa Tasha**, Why Nearly 2 Million People are demanding ... նույն տեղում

<sup>64</sup> Outcry as Indonesia seeks to arrest renowned West Papua rights lawyer // *The Guardian*, 5 September 2019



ազատագրական շարժման նախագահ Բենի Վենդան 2019 թվականի սեպտեմբերի 23-ին և 24-ին Պապուայում կազմակերպեց անկարգություններ՝ հույս ունենալով, որ հարցը կարող է բարձրացվել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի ֆորումում և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Զինված բախումներով և հարյուրավոր զինվորականների առկայությամբ պայմանավորված Պապուայի որոշ շրջաններում բարձրացավ փախստականների ալիք, որոնց ընդհանուր թիվը կազմեց 45.532 մարդ:<sup>65</sup> Վամենայում հարյուրավոր փախստականներ տարհանման վայրերում մահացան, ինչը պատճառ դարձավ ցույցերի և անհնազանդության ակցիաների: Արդյունքում, 2019 թվականի օգոստոսի վերջին Արևմտյան Պապուան կրկին հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Անկարգությունները շարունակվեցին նաև 2020 թվականին՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին գոհեր ու վիրավորներ գրանցելով ինչպես զինծառայողների, այնպես էլ խաղաղ բնակչության շրջանում:<sup>66</sup> Արդյունքում, 2020 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի մարդու իրավունքների գրասենյակը հայտարարեց, որ իրենք անհանգստացած են Արևմտյան Պապուա նահանգում բռնության աճով՝ նաև այն պատճառով, որ զինվորականները, անվտանգության ուժերը և ազգայնական աշխարհագրայինները ներգրավված են ցուցարարների և իրավապաշտպանների նկատմամբ բռնությունների, արտադատական սպանությունների և խոշտանգումների մեջ, իսկ Գերագույն հանձնակատարի գրասենյակի խոսնակն արձանագրեց, որ Ինդոնեզիայի իշխանությունները պետք է

<https://www.theguardian.com/world/2019/sep/05/outcry-as-indonesia-seeks-to-arrest-renowned-west-papua-rights-lawyer>

<sup>65</sup> **Wangge, Y.R., Hipolitus.** (2019). Siklus Kekerasan Tak Berkesudahan di Papua. KOMPAS, 6 September 2019

<sup>66</sup> "Papua: Dosen UGM anggota tim penyidik kematian pendeta Papua tertembak dan dievakuasi, TPNPB klaim bertanggung jawab". BBC Indonesia. 9 October 2020 <https://www.bbc.com/indonesia/indonesia-54481909>; Benny Mawel (2020-11-26). "Four Papuan civilians shot dead by unidentified group". The Jakarta Post. Retrieved 2024-03-10 <https://www.thejakartapost.com/news/2020/11/26/four-papuan-civilians-shot-dead-by-unidentified-group.html>

շարունակեն մանրակրկիտ, անկախ և անկողմնակալ հետաքննություններ բռնության բոլոր գործողությունների, մասնավորապես սպանությունների վերաբերյալ, և ապահովեն, որ բոլոր մեղավորները պատասխանատվության ենթարկվեն՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից:<sup>67</sup>

Իրավիճակն ավելի սրվեց 2021-2022 թվականների ընթացքում իրականացված քաղաքացիական ուղղաթիռ այրելու,<sup>68</sup> գնդակահարությունների<sup>69</sup>, սպանությունների<sup>70</sup>, խոշտանգումների<sup>71</sup>, հրկիզումների<sup>72</sup>, գյուղերի, տրանսպորտային միջոցների, ենթակա-

<sup>67</sup> UN human rights office worried by killings in Indonesian provinces of Papua and West Papua. UN News. 30 November 2020 <https://news.un.org/en/story/2020/11/1078832>

<sup>68</sup> TPNPB Akui Penembakan hingga Pembakaran Helikopter dan Pesawat Sipil. suara.com (in Indonesian). 7 January 2021. Retrieved 2021-02-16 <https://www.suara.com/news/2021/01/07/205158/tpnpb-akui-penembakan-hingga-pembakaran-helikopter-dan-pesawat-sipil>

<sup>69</sup> **Harahap, Lia** (10 January 2021). Prajurit TNI Gugur Saat Kontak Senjata dengan KKB di Titigi Intan Jaya. merdeka.com <https://www.merdeka.com/peristiwa/prajurit-tni-gugur-saat-kontak-senjata-dengan-kkb-di-titigi-intan-jaya.html>; Polisi Selidiki Pelaku Penembakan Warga Sipil di Intan Jaya | Republika Online Mobile. republika.co.id. 10 February 2021 <https://republika.co.id/amp/qoa7vx377>; Prajurit TNI yang Ditembak KKB di Intan Jaya Segera Dievakuasi ke Jayapura". kumparan <https://kumparan.com/kumparannews/prajurit-tni-yang-ditembak-kkb-di-intan-jaya-segera-dievakuasi-ke-jayapura-1vAOx9JtJ9>

<sup>70</sup> KKB Bakar Fasilitas Palapa Ring di Kabupaten Puncak,. kompas.id. 11 January 2021 <https://www.kompas.id/baca/nusantara/2021/01/11/kkb-bakar-fasilitas-palapa-ring-di-kabupaten-puncak/>; **Februana, Ngarto** (11 February 2021). Tukang Ojek Ditikam di Puncak Papua hingga Tewas, Diduga Aksi KKB. Tempo <https://video.tempo.co/read/23382/tukang-ojek-ditikam-di-puncak-papua-hingga-tewas-diduga-aksi-kkb>; Soldiers accused of killing and mutilating Papuans. BBC News. 2022-08-30 <https://www.bbc.com/news/world-asia-62727954>

<sup>71</sup> **Allard, Tom**, Insight: Three brothers killed by Indonesian soldiers at Papuan health clinic: army and witness accounts differ. Reuters, 5 April 2021 <https://www.reuters.com/world/asia-pacific/three-brothers-killed-by-indonesian-soldiers-papuan-health-clinic-army-witness-2021-04-06/>; **Andriansyah, Anugrah**. Coba Rampas Senjata TNI, Tiga Anggota KSB Ditembak Mati. Voice of America Indonesia, 17 April 2021, <https://www.voaindonesia.com/amp/coba-rampas-senjata-tni-tiga-anggota-ksb-ditembak-mati/5780365.html>

<sup>72</sup> **Evarukdjati, Fardah**. Armed criminals torch homes of Papua tribal chief and teachers". Antara News, 17 April 2021,

ռուցվածքների վրա հարձակումների<sup>73</sup> պատճառով: Արդյունքում, 2023 թվականի հունվարին կողմերի միջև սկսվեցին նոր բախումներ՝ դառնալով նոր զոհերերի և ավերածությունների պատճառ:<sup>74</sup> Կրկին սրվեց իրավիճակը,<sup>75</sup> ինչը շարունակվում է մինչ օրս:<sup>76</sup>

**Արևելյան Թիմորի հակամարտությունը:** Որպես ՄԱԿ-ի խաղաղարար առաքելության կիրառման հաջող օրինակ

<https://en.antaranews.com/news/172714/armed-criminals-torch-homes-of-papua-tribal-chief-and-teachers>

<sup>73</sup> Separatists in Indonesia's Papua Kill 8 Workers at Telecom Tower. *US News*. March 4, 2022, <https://www.usnews.com/news/world/articles/2022-03-04/separatists-in-indonesias-papua-kill-8-workers-at-telecom-tower>; Gunmen kill 10 traders, hurt 2, in Indonesia's restive Papua. *AP NEWS*. 2022-07-16 <https://apnews.com/article/indonesia-8557eab22bda1e03bd3004d2703f31b9>

<sup>74</sup> Kontak Tembak dengan KKB di Pegunungan Bintang, Satu Polisi Terluka. *wartaplus.com*. 2023-01-07 <https://m.wartaplus.com/read/16134/Kontak-Tembak-dengan-KKB-di-Pegunungan-Bintang-Satu-Polisi-Terluka>; Pasukan TNI pembebas pilot Susi Air dan TPNPB-OPM kontak tembak di Nduga, '9 prajurit TNI tewas. *BBC News Indonesia*. 16 April 2023 <https://www.bbc.com/indonesia/articles/cxe795108x7o>; KKB Bakar Kantor Dukcapil Pegunungan Bintang Papua. *beritasatu.com*. 2023-01-11 <https://www.beritasatu.com/news/1016863/kkb-bakar-kantor-dukcapil-pegunungan-bintang-papua>

<sup>75</sup> **Tambunan, Paul Manahara**. Jenazah Michelle Kurisi Ndoga Dievakuasi ke RSUD Wamena, KKB Tuduh Aktivist Papua Intelijen. *Tribun-papua.com*, (2023-08-31) <https://papua.tribunnews.com/amp/2023/08/31/jenazah-michelle-kurisi-ndoga-dievakuasi-ke-rsud-wamena-kkb-tuduh-aktivis-papua-intelijen>; **Nasir, Juhra**. Akhir pelarian 11 buron pembunuhan kepala distrik Fakfak - 4 ditembak mati. *detik sulse*, (2023-09-12) (in Indonesian) <https://www.detik.com/sulse/hukum-dan-kriminal/d-6925982/akhir-pelarian-11-buron-pembunuhan-kepala-distrik-fakfak-4-ditembak-mati/1>; **Rohmat, Rohmat** (2023-10-02). "Breaking News: TNI Tembak Mati Lima Kombatant TPNPB, Tertinggi Berpangkat Letnan Kolonel". *GATRA* <https://www.gatra.com/news-581661-nasional-breaking-news-tni-tembak-mati-lima-kombatant-tpnpb-tertinggi-berpangkat-letnan-kolonel-.html>; **Noroyono, Bambang** (18 October 2023). "Tujuh Petambang Dibunuh Kelompok Separatis Papua | Republika ID" [Seven Miners Killed by Papuan Separatist Group]. *republika.id* (in Indonesian) <https://republika.id/posts/46732/tujuh-petambang-dibunuh-kelompok-separatis-papua>

<sup>76</sup> **Latimahuna, Raymond**. Identitas 7 Anggota KKB Tertembak di Intan Jaya: 5 Tewas-2 Terluka. *Detiksulse*, 2024-01-28. <https://www.detik.com/sulse/hukum-dan-kriminal/d-7164087/identitas-7-anggota-kkb-tertembak-di-intan-jaya-5-tewas-2-terluka?single=1>; **Sari, Brigitta Belia Permata** TNI Jelaskan Motif Oknum Prajurit Aniaya Definus Kogoya Anggota KKB. *Detiknews*, 2024-03-25. <https://news.detik.com/berita/d-7260875/tni-jelaskan-motif-oknum-prajurit-aniaya-definus-kogoya-anggota-kkb>

կքննարկվի նաև Արևելյան Թիմորի հակամարտությունը, որի ընթացքում ՄԱԿ-ի խաղաղարար առաքելության միջամտությամբ դադարեցվել են պատերազմական գործողությունները և դրանց արդյունքում տեղի բնակչության նկատմամբ իրականացվող ցեղասպանությունը, էթնիկ գտումները, բռնությունները, սպանությունները, պատերազմական և մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները, իսկ միջազգային կառավարման վարչակազմի օգնությամբ հակամարտության կարգավորումը հասցվել է իր վերջնակետին՝ Արևելյան Թիմորի անկախությանը:

Ինդոնեզիայի ներխուժումը Արևելյան Թիմոր տեղի է ունեցել 1975 թվականի դեկտեմբերի 7-ին, երբ ինդոնեզական զինվորականները հակազդողութափրությունն ու հակակոմունիզմը տապալելու պատրվակով ներխուժեցին Արևելյան Թիմոր: Ինդոնեզիայի բանակը տեղահանեց տասնյակ հազարավոր արևելյան թիմորցիների՝ նպատակ ունենալով բնակչությանը հեռու պահել՝ զինված դիմադրության շարժումից: Ներխուժումից չորս տարի անց՝ 1979 թվականին արդեն իսկ 268.644-318.921 արևելյան թիմորցիներ,<sup>77</sup> բնակչության շուրջ 50 տոկոսը (1970 թվականի Պորտուգալիայի անցկացրած մարդահամարի ժամանակ հաշվառվել է 609.477 մարդ),<sup>78</sup> գտնվում էին տեղահան-վաճների ճամբարներում՝ զինվորականների հսկողության ներքո:

Փաստորեն, 1974 թվականին հաստատված կառավարման ռեժիմի տապալումը հրահրեց Արևելյան Թիմորի հակամարտությունը, որը տևեց քառորդ դար և ընդհանուր առմամբ իլեց մոտավորապես 100.000–180.000 զինվորի և խաղաղ բնակիչների կյանք՝ ռազմական գործողությունների, բռնությունների, սովամա-

<sup>77</sup> **Arnold Kohen, John Taylor** 1979. An act of genocide: Indonesia's invasion of East Timor. London: TAPOL. 1979. p. 58.

<sup>78</sup> **Silva Romesh, Ball Patrick**, The profile of human rights violations in Timor-Leste, 1974-1999, A Report by the Benetech Human Rights Data Analysis Group to the Commission on Reception, Truth and Reconciliation of Timor-Leste. 9 February 2006 <https://hrdag.org/content/timorleste/Benetech-Report-to-CAVR.pdf>

հույժան, հիվանդությունների կամ այլ պատճառներով:<sup>79</sup> Ընդունելության, ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը 1974-1999 թվականների ընթացքում Արևելյան Թիմորում արձանագրել է 102.000 մահվան դեպք:<sup>80</sup>

1999 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսներին Արևելյան Թիմորում Միավորված ազգերի կազմակերպության քաղաքական առաքելությանը (UNAMET) հանձնարարված էր կազմակերպել և անցկացնել համաժողովրդական խորհրդակցություն՝ պարզելու արդյո՞ք Արևելյան Թիմորի ժողովուրդն ընդունել է հատուկ ինքնավարություն Ինդոնեզիայի կազմում, թե մերժում է առաջարկվող հատուկ ինքնավարությունը, որը կհանգեցնի Արևելյան Թիմորի առանձնացմանը Ինդոնեզիայից: 1999 թվականի սեպտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի հանձնաժողովը Գլխավոր քարտուղար Քոֆի Անանին կոչ արեց ստեղծել միջազգային հետաքննող հանձնաժողով, որը, համագործակցելով Ինդոնեզիայի մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի հետ, պետք է հավաքեր Արևելյան Թիմորում 1999 թվականի հունվարին մարդու իրավունքների հնարավոր ռոտահարումների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Ստեղծված հանձնաժողովը 2000 թվականի հունվարի 31-ին զեկույց հանձնեց Միավորված ազգերի կազմակերպությանը՝ առաջարկելով տեղահանվածների արագ վերադարձ, աշխարհագրայինների զինաթափում ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան

<sup>79</sup> „Chega!“-Report of Commission for Reception, Truth and Reconciliation in East Timor (CAVR) <http://www.cavr-timorleste.org/en/cheгаReport.htm>

<sup>80</sup> Conflict-Related Deaths in Timor-Leste 1974–1999: The Findings of the CAVR Report Chega!" (PDF). Final Report of the Commission for Reception, Truth and Reconciliation in East Timor (CAVR). Retrieved 20 March 2016. <http://www.cavr-timorleste.org/updateFiles/english/CONFLICT-RELATED%20DEATHS.pdf>

"Unlawful Killings and Enforced Disappearances" (PDF). Final Report of the Commission for Reception, Truth and Reconciliation in East Timor (CAVR). p. 6. Retrieved 20 March 2016. [https://www.etan.org/etanpdf/2006/CAVR/07.2\\_Unlawful\\_Killings\\_and\\_Enforced\\_Disappearances.pdf](https://www.etan.org/etanpdf/2006/CAVR/07.2_Unlawful_Killings_and_Enforced_Disappearances.pdf)

Թիմորում, ինչպես նաև մարդկության դեմ հանցագործությունների համար հետաքննություն, հետապնդում և փոխհատուցում:<sup>81</sup> Հանձնաժողովը, արձանագրելով մարդու հիմնարար և մարդասիրական իրավունքների լուրջ խախտումներ, կոչ արեց ՄԱԿ-ին ստեղծել անկախ և միջազգային մարմին՝ հետագա հետաքննություններն անցկացնելու, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց բացահայտելու, այդ հանցագործություններից տուժածներին փոխհատուցման տրամադրում ապահովելու, ինչպես նաև մարդու իրավունքների լուրջ խախտումների համար մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար՝ անկախ անձի ազգությունից կամ խախտումների կատարման վայրից:<sup>82</sup>

Արևելյան Թիմորում 1999 թվականի օգոստոսի 30-ին անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում գրանցված 98 տոկոս մասնակցության արդյունքում 344.580 արևելյան թիմորցիներ՝ բնակչության 78.5 տոկոսը, քվեարկեց անկախացման օգտին<sup>83</sup>, ինչը Ինդոնեզիայի համար զանգվածային սպանությունների և բռնությունների իրականացման նոր առիթ դարձավ: ՄԱԿ-ը նախազգուշացրեց Ինդոնեզիայի իշխանություններին, որ 1999 թվականի սեպտեմբերին իրականացված զանգվածային սպանությունները<sup>84</sup> կորակի որպես ցեղասպանություն և վերջիննե-

<sup>81</sup> United Nations General Assembly Security Council A/54/726, S/2000/59 Document «Identical letters dated 31 January 2000 from the secretary-general addressed to the President of the General Assembly, the President of the Security Council and the Chairperson of the Commission on human rights» (31 January 2000) <https://www.legal-tools.org/doc/f7e999/pdf/>

<sup>82</sup> **James Rae**, War Crimes Accountability: Justice and Reconciliation in Cambodia and East Timor? *Global Change, Peace & Security: formerly Pacifica Review: Peace, Security & Global Change*, 2003, 15:2, pp. 157-178. DOI:0.1080/14781150303907

<sup>83</sup> **James Rae**, նշվ. աշխ., **Derek McDougall**, The Security-Development Nexus: Comparing External Interventions and Development Strategies in East Timor and Solomon Islands, *Asian Security*, **Volume 6, 2010, 6, 2**, <https://doi.org/10.1080/14799851003756659>

<sup>84</sup> **Saul Ben**, Was the conflict in East Timor "Genocide" and Why does it Matter? *Melbourne Journal of International Law*, 2, 2, 2001, p. 1-46 [https://law.unimelb.edu.au/\\_\\_data/assets/pdf\\_file/0003/1680222/Saul.pdf](https://law.unimelb.edu.au/__data/assets/pdf_file/0003/1680222/Saul.pdf)

րիս կենթարկի պատասխանատվության, որից հետո միայն Ինդոնեզիայի իշխանությունները համաձայնեցին Արևելյան Թիմորում հանրաքվեի անցկացմանը և անկախացման օգտին քվեարկելու դեպքում ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը:<sup>85</sup> Այնուհետև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1999 թվականի հոկտեմբերին ընդունեց S/RES/1272 (1999) բանաձևը<sup>86</sup>, որով Արևելյան Թիմորում տիրող իրավիճակը գնահատելով որպես սպառնալիք միջազգային խաղաղության և անվտանգության համար՝ պետք է ստեղծվեր անցումային վարչակազմ՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին վերապահելով տարածքի կառավարման լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ: Հաշվի առնելով Արևելյան Թիմորի տարածքի՝ շուրջ քառորդ դար Պորտուգալիայի գաղութը լինելու հանգամանքը՝ ՄԱԿ-ը պետք է ստեղծեր նոր պետություն՝ պետական կառավարման նոր ինստիտուտներով: Ուստի Արևելյան Թիմորի կառավարման մանդատը զգալիորեն մեծացնում էր առաքելության հաջող ավարտի հնարավորությունը, քանի որ այն հետապնդում էր անկախ պետակա-նության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակ:<sup>87</sup> 1999 թվականի հոկտեմբերից մինչև 2002 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Արևելյան Թիմորում սկսեց խաղաղապահ գործողություն իրականացնել ՄԱԿ-ի անցումային վարչությունը (UNTAET), որը պետք է նպաստեր խաղաղարարությանը, իրականացներ պետական վարչարարություն և կառավարում:

<sup>85</sup> **Թորոսյան Տ.** Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008, էջեր 126-127

<sup>86</sup> United Nations Security Council Resolution S/RES/1272(1999) (25 October 1999) <http://unscr.com/en/resolutions/doc/1272>

<sup>87</sup> **Կիրակոսյան Մ.**, Հակամարտությունների կարգավորման գործընթացում միջազգային կառավարման արդյունավետությունն ու հնարավորությունները, Երևան, *Հեղ. հրատ.*, 2020, էջ 119

2001 թվականի օգոստոսի 30-ին Արևելյան Թիմորի առաջին ներկայացուցչական մարմնի՝ Սահմանադիր ժողովի ընտրություններով հիմք դրվեց անկախացման գործընթացին, ինչի արդյունքում 2002 թվականի մարտի 22-ին ընդունվեց ահմանադրություն, իսկ նույն թվականի տարեվերջին Արևելյան Թիմորում արդեն գործում էին ընտրված խորհրդարանն ու նախագահը: 2002 թվականի մայիսի 20-ին հռչակվեց Արևելյան Թիմորի անկախությունը և այն դարձավ ՄԱԿ-ի անդամ:<sup>88</sup> 2002 թվականի դրությամբ ավելի քան 207.000 փախստական<sup>89</sup> վերադարձավ Արևելյան Թիմոր՝ մեծամասամբ ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի և այլ մարդասիրական գործակալությունների օժանդակությամբ:

### Լեոնային Ղարաբաղի հակամարտություն

Թեև Լեոնային Ղարաբաղի հակամարտություն սկիզբ է առել դեռևս անցած դարի երկրորդ տասնամյակում, սակայն ներկայիս գործընթացների սկիզբը համարվում է 1988 թվականը, երբ փետրվարի 20-ին Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշմանը՝ դիմելու Հայկական ԽՍՀ-ի, Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ Լեոնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին, Ադրբեջանը հակադրեց հայ բնակիչների կոտորածներ Սումգայիթում, ապա՝ Կիրովաբադում, Բաքվում և այլ բնակավայրերում: 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեոնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որի ընթացքում ընդունվեց «Հռչակագիր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության

<sup>88</sup> Կիրակոսյան Մ., նշվ. աշխ., էջ 126

<sup>89</sup> East Timorese to lose refugee status by year's end, says UNHCR // *The UN Refugee Agency*, 18 May 2002, <https://www.unhcr.org/news/east-timorese-lose-refugee-status-years-end-says-unhcr>



հռչակման մասին»: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որին մասնակցեց մարզի բնակչության ընտրելու իրավունք ունեցողների 80 տոկոսը, իսկ քվեարկողների 99 տոկոսից ավելին ձայն տվեց անկախության օգտին: Արդյունքում, 1992 թվականի հունվարի 6-ին կայացավ առաջին գումարման Գերագույն խորհրդի նստաշրջանը: Այդ ամենին Ադրբեջանը պատասխանեց լայնածավալ ռազմական ագրեսիայով: Պատերազմը դադարեցվեց Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև ստորագրված և 1994 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ մտած «Կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին» եռակողմ համաձայնագրի ստորագրմամբ:

Հակամարտության կարգավորման նպատակով 1992 թվականին Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) կազմավորեց Մինսկի խումբը<sup>90</sup>, որի անդամներից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներից 1997 թվականին ձևավորվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը: Այս միջնորդական առաքելության գործունեությունը կարելի է բաժանել մի քանի փուլերի: Նախ, հակամարտության կողմերին առաջարկվեցին բանակցային փաստաթղթի մի քանի տարբերակներ, որոնցից ոչ մեկը չարժանացավ հավանության: Երբ 1997 թվականի աշնանը Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրապարակավ հայտարարեց, որ իր կարծիքով պետք է համաձայնել միջնորդների հերթական առաջարկին, Հայաստանում առաջացավ քաղաքական ճգնաժամ, քանի որ կառավարության մի քանի առանցքային անդամներ ընդդիմացան նման մոտեցմանը:<sup>91</sup> Արդյունքում հրաժա-

<sup>90</sup> **Klever Emma**, The Nagorno-Karabakh conflict between Armenia and Azerbaijan: An overview of the current situation. *European Movement International*, Brussels, 24.09.2013

<sup>91</sup> **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը... նշվ. աշխ.; **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղի

րական ներկայացրեց նախագահ Տեր-Պետրոսյանը, խորհրդարանում հրաժարականներ ներկայացրեցին նախագահը, տեղակալներն ու հանձնաժողովների նախագահները, տեղի ունեցան խմբակցությունների կազմերի վերադասավորումներ: 1998 թվականին տեղի ունեցած արտահերթ նախագահական և 1999 թվականի հերթական խորհրդարանական ընտրություններից հետո արմատապես փոխվեց Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը հակամարտության կարգավորման վերաբերյալ: 2001 թվականին հերթական փորձն արվեց հակամարտության կարգավորման բանակցային փաստաթղթի ձևավորման ուղղությամբ: Քի Ուեսթում ամերիկյան նախաձեռնությամբ հանդիպեցին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն ու Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը: Թեև հանդիպման ավարտին ձեռք էր բերվել նախնական համաձայնություն կարգավորման սխեմայի վերաբերյալ, սակայն Հ. Ալիևի վերադարձից հետո Բաքվում մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ հրաժարականներ ներկայացրեցին և այդ նախագիծը ևս համարվեց մերժված: Կարճ ժամանակ անց բանակցությունները դադարեցին Հ. Ալիևի մահվան և Ադրբեջանի նոր ղեկավարության ձևավորման կապակցությամբ և դրանք վերսկսվեցին Ի. Ալիևի նախագահ ընտրվելուց հետո:

2005 թվականին ԵԽԽՎ-ն ընդունեց 1416 (2005) բանաձևը՝ հակամարտության կարգավորման վերաբերյալ, որտեղ արձանագրվում էր, որ տարածաշրջանը կարող է խաղաղ, օրինական ճանապարհով անջատվել մետրոպոլիայից այդ տարածաշրջանի ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ,<sup>92</sup> ինչով արձանագրվում էր ինքնորոշման իրավունքի կիրառման օրինականությունը Լեռնային Ղարաբաղի դեպքում: Բանաձևից զատ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ուղղված ԵԽԽՎ 1690 (2005)

---

հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, 7 հուլիսի, 2020թ.,  
<https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=166>

<sup>92</sup> Council of Europe Parliamentary Assembly (PACE) Resolution 1416 (2005). The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference, <https://pace.coe.int/en/files/17289/html>

հանձնարարականին ի պատասխան նախարարների կոմիտեի ընդունած փաստաթղթում արձանագրվեց, որ հակամարտությունը պետք է կարգավորվի ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքների հիման վրա:<sup>93</sup> Դրանք առաջին պաշտոնական փաստաթղթերն էին, որոնք ազդարարում էին հակամարտության կարգավորման որակապես նոր փուլի սկիզբը, որը հիմնված էր ինքնորոշման իրավունքի կիրառման վրա:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները 2006 թվականի հունիսի 22-ին Վիեննայում ԵԱՀԿ Մշտական խորհրդում ներկայացրեցին հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքները, որոնք Հայաստանի և Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարներին պաշտոնապես հանձնեցին 2007 թվականի նոյեմբերի 29-ին Մադրիդում և հետագայում անվանվեցին «մադրիդյան սկզբունքներ»: 2009 թվականի հուլիսի 10-ին Իտալիայի Լ'Աքվիլա քաղաքում «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նախագահներն ընդունեցին համատեղ հայտարարություն, որտեղ բացահայտվում էին դարաբաղյան հակամարտության կարգավորման՝ միջնորդների առաջարկած հիմնարար սկզբունքների հիմնական դրույթները:<sup>94</sup> Դրանք կառուցված էին 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման (2-րդ հոդված), տարածքային ամբողջականության (4-րդ հոդված) սկզբունքների և ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի (8-րդ հոդված), ինչպես նաև բանակցությունների

<sup>93</sup> The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference Recommendation 1690 (2005), Doc. 10685, 26 September 2005, Reply from the Committee of Ministers adopted at the 938th meeting of the Ministers' Deputies (21 September 2005) <https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=11024&lang=EN>

<sup>94</sup> Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009 <https://obamawhitehouse.archives.gov/realitycheck/the-press-office/joint-statement-nagorno-karabakh-conflict>

առարկա վեց տարրերի վրա: 2009 թվականին հակամարտության երեք կողմերը՝ Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանը փաստաթուղթը ընդունեցին բանակցությունների հիմք և Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարները, ինչպես համանախագահ երկրների ներկայացուցիչները ստորագրեցին դա հավաստող փաստաթուղթ:

2016 թվականի ապրիլի 1-ին Ադրբեջանը լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ՝ շփման գծի ողջ երկայնքով: 4 օր անց ռազմական գործողությունները դադարեցվեցին և մայիսի 16-ին Վիեննայում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների արտգործնախարարների մասնակցությամբ, որի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման շուրջ:<sup>95</sup>

2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ձևավորված իշխանությունները հայտարարեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացն իրենց սեփական կետից սկսելու մասին<sup>96</sup>՝ ի չիք դարձնելով համանախագահների երկու տասնամյակների աշխատանքը: Երկու տարի անց, երբ պարզ դարձավ, որ համանախագահների ջանքերը՝ բանակցային գործընթացը ընդհատված կետից վերականգնելու ուղղությամբ, արդյունք չեն տալիս, պաշտոնական Բաքուն դա դարձրեց պատրվակ, հայտարարեց, որ Հայաստանն անցել է բոլոր կարմիր գծերը՝ տարածաշրջանը դնելով լուրջ ճգնաժամի եզրին,<sup>97</sup> և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին

<sup>95</sup> Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, VIENNA, 16 May 2016 <https://www.osce.org/mg/240316>

<sup>96</sup> «Ես բանակցությունները սկսել եմ ոչ թե Սերժ Սարգսյանի կետից, այլ իմ սեփական»։ Ն.Փաշինյան, *Ազատություն*, 08.04.2019

<https://www.youtube.com/watch?v=pj1ro9hGIBo>

<sup>97</sup> Hikmat Hajiyev: By making a provocative statement, Armenian side again puts region face to face with new threats and risks, *Azər Tac* 06.08.2019

սանձազերծվեց ադրբեջանա-թուրքական լայնածավալ ռազմական ագրեսիա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Ռազմական գործողությունները դադարեցվեցին նոյեմբերի 10-ին, երբ Ադրբեջանի վերահսկողության տակ էին անցել Շուշին, Հադրութը և մի շարք գյուղեր: Եռակողմ հայտարարության հիման վրա<sup>98</sup> Ադրբեջանին հանձնվեցին Ադդամի, Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները:

Ադրբեջանի՝ էթնիկ գտումների և ցեղասպանության քաղաքականության միջոցով Լեռնային Ղարաբաղը հայաթափելու վերջնականատակով «Էկոակտիվիստները» 2022 թվականի դեկտեմբերի 12-ին արգելափակեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ցամաքային ճանապարհը՝ Բերձորի (Լաչինի) միջանցքը: Դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ավելի քան ինն ամիս գտնվելով շրջափակման մեջ, հայտնվեց ծայրահեղ հումանիտար աղետի եզրին: Միջանցքի արգելափակման վերաբերյալ 2023 թվականի օգոստոսին ՄԱԿ-ի փորձագետների խումբը ստեղծված իրավիճակն անվանեց «մարդասիրական արտակարգ իրավիճակ» և արձանագրեց, որ դրա հետևանքով բնակչությունը «կանգնել է սննդամթերքի, դեղորայքի և հիգիենայի ապրանքների սուր պակասի առջև՝ վտանգելով մարդկանց, հատկապես երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, հղի կանանց և հիվանդների կյանքը»:<sup>99</sup>

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ենթարկվեց նոր լայնամասշտաբ ռազմական

---

[https://azertag.az/en/xeber/Hikmat\\_Hajiyev\\_By\\_making\\_a\\_provocative\\_statement\\_Armenian\\_side\\_again\\_puts\\_region\\_face\\_to\\_face\\_with\\_new\\_threats\\_and\\_risks-1315353](https://azertag.az/en/xeber/Hikmat_Hajiyev_By_making_a_provocative_statement_Armenian_side_again_puts_region_face_to_face_with_new_threats_and_risks-1315353)

<sup>98</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020 <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>

<sup>99</sup> UN experts urge Azerbaijan to lift Lachin corridor blockade and end humanitarian crisis in Nagorno-Karabakh // UN Office of the Human Rights Commissioner, Press release, 7 August 2023 <https://www.ohchr.org/en/press-releases/2023/08/un-experts-urge-azerbaijan-lift-lachin-corridor-blockade-and-end>

ագրեսիայի, որի արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանություններին 2023 թվականի սեպտեմբերի 20-ին պարտադրվեց հրադադարի համաձայնագիր, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչությունը՝ մոտ 120.000 արցախահայեր, բռնի տեղահանվեց Հայաստանի Հանրապետություն:<sup>100</sup>

**Դիտարկված 5 ինքնորոշման հակամարտությունների առանցքային իրադարձությունների համեմատական աղյուսակ**

Իրադարձություն	Արևմտյան Մահարա	Արևմտյան Պապուա	Կոսովո	Արևելյան Թիմոր	Լեռնային Ղարաբաղ
1. Հակամարտության սկիզբ	1975թ. Իսպանիայի, Մարոկկոյի և Մավրիտանիայի միջև համաձայնագրի կնքում	1962թ. օգոստ. Նիդեռլանդների և Ինդոնեզիայի միջև համաձայնագրի կնքում	1991թ. սեպտ. Կոսովոյի անկախության հռչակում	1975թ. դեկտ. Ինդոնեզիայի ներխուժում Արևելյան Թիմոր	1988թ. փետրվարի 20-ին ԼՂՀՄ մարզխորհրդի որոշում Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին
2. Բնակչության թիվը	1975-1976 թթ. Արևմտյան Մահարա՝ 383.000	1969թ. Արևմտյան Պապուա՝ 700.000	1998թ. Կոսովո2, 1 միլիոն	1970թ. մարդահամար՝ 609.477 մարդ	1989թ. ԼՂՀՄ՝ 157.200
3. Ինքնորոշվող ժողովուրդ	Պատերազմի հետևանք	Պատերազմների հետևանք	1998թ. փախստական և տեղա	1979թ. 268.644-318.921 տեղա	1988թ. սկսած ԼՂՀՄ հարակից

<sup>100</sup> **Tatikyan Sossi**, Can the International Community Reverse the Ethnic Cleansing of Armenians of Nagorno-Karabakh? Part 1 Scenarios Carried out by Azerbaijan and the Accountability of Russian Peacekeepers // 04 October, 2023, *EVN Report* <https://evnreport.com/politics/can-the-international-community-reverse-the-ethnic-cleansing-of-armenians-of-nagorno-karabakh-part-1/>

վրդի դուրս-մղում տարած-քից	26.000 Մավրի-տանիա, 165.000 փախստական Ալժիր	անքով 1969թ. 200.000 փախստական, 1984թ՝ 16.500, 2019թ.՝ 45.532	ղահան 290.000-600.000, 1999թ. 435.000	հանվեց	տարածք-ներից՝ 23.000, Լեռնային Ղարաբաղից՝ 40.000 փախստական, 2023թ.՝ 120.000
4. Անկախության հռչակում	1976թ. փետր.	1969թ.	1991թ. սեպ.	1975թ. դեկտ.	1991թ. սեպտ. 2
5. Հանրաքվե	-	-	1991թ. սեպտ. մասնակցեց 87%, 99%-ը՝ անկախության օգտին	1999թ. օգոստոս՝ մասնակցեց 98%, 78.5%-ը՝ անկախության օգտին	1991թ. դեկտ. 10, մասնակցեց 80%, 99%-ը՝ անկախության օգտին
6. Պատերազմի վերսկսում	1979թ. սեպտ., 1989թ. հոկտ., 2020թ. նոյեմբեր	1963թ. մայիս, 1984թ. փետր., 2019թ. սեպտ.	2004թ. մարտ	1976թ. ապրիլ	2016թ. ապրիլ, 2020թ. սեպտ., 2023թ. սեպտ.
7. Միջազգային ներկայություն	1991թ. սեպտ. MINURS Օ	-	1999թ. հունիս UNMIK	06-10, 1999 UNAMET 10.1999-05.2002 UNTAET	-
8. Պատերազմի	6.09.1991 Մարոկկոյի և	2023թ. հունվ. բախումն	2008թ. փետ. 17, Կոսովոն	ՄԱԿ-ի ԱԽ S/RES/127	2023թ. սեպտ. 20՝ պարտա-

ավարտ	Պոլիսարիոյի միջև համաձայնագիր	Եր	վերահոչակեցանկախություն	2 (1999) քանաձև	դրված հրադարի համաձայնագիր
9. Փախս. վերադարձ	Գրեթե չեն վերադարձել	1.500	900.000	192.000	-
10. Լուծում	-	-	-	անդամակց. ՄԱԿ-ին	-

**Եզրակացություն**

1. Հողվածում հինգ ինքնորոշման հակամարտությունների դեպքերի վերլուծությունը վկայում է, որ թեև կարգավորման գործընթացը տևում է տասնամյակներ՝ կողմերի համար փոխադարձ ընդունելի լուծում գտնելու նպատակով, սակայն չի արձանագրվել գոնե մեկ դեպք, երբ այդ նպատակն իրագործվի: Մինչդեռ այդ ընթացքում տեղի են ունենում բռնություններ, զինված բախումներ, որոնք հանգեցնում են տարախաշրջանի բնակչության նոր տառապանքների ու զոհերի, էթնիկ գտումների ու ցեղասպանության: Դրանք ավելի են խորանում, երբ հակամարտության էսկալացիան համընկնում է աշխարհաքաղաքական մրցակցության կոշտացման շրջանի հետ:

2. Հակամարտությունների լուծման ձգձգումները հանգեցնում են մետրոպոլիսյի լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման: Միշտ չէ, որ հաջողվում է դրանք արագ դադարեցնել: Ռազմական գործողությունների վերսկսումը դառնում է կարևոր փուլ հակամարտությունների կարգավորման գործընթացում, քանի որ այդ դեպքում մետրոպոլիսն դիմում է ծայրահեղ քայլերի՝ էթնիկ գտումներ, ցեղասպանություն, մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններ, քանի որ դրանից հետո վերջնականորեն ակնհայտ է դառնում, որ ինքնորոշվող ժողովրդի հետագա



գոյությունը մետրոպոլիայի կազմում անհնարին է: Հետևաբար հակամարտության լուծման տեսակետից այդ ժամանակահատվածը դառնում է վճռորոշ:

3. Արևմտյան Պապուայի և Արևելյան Թիմորի հակամարտությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նույն մետրոպոլիայի հետ գրեթե միաժամանակ տեղի ունեցած, սակայն ծայրահեղորեն տարբեր արդյունքների հանգեցրած այդ հակամարտությունների լուծումների տարամիտումը մեծապես պայմանավորված է եղել ինքնորոշվող ժողովրդի առաջնորդների քաղաքականությամբ՝ հատկապես ռազմական գործողությունների վերակսմանը անմիջապես նախորդած, ռազմական ագրեսիայի և դրան հաջորդած ժամանակահատվածներում:

4. Թեև ակնհայտ է, որ հակամարտությունների կարգավորման գործընթացների ձգձգումները հաճախ պայմանավորված են նաև ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերով, սակայն դժվար չէ նկատել, որ այդ ձգձգումները որևէ դրական ազդեցություն չունեն լուծման վրա և հատկապես ինքնորոշվող կողմը պետք է ամեն ջանք գործադրի հնարավորինս շուտ լուծման հասնելու համար: Առավել ևս, որ միջազգային իրավունքը հստակ և լիարժեքորեն սահմանել է ինքնորոշման հակամարտությունների կարգավորման ու լուծման մեխանիզմները:

**The consequences of the resumption of hostilities during the settlement processes of the self-determination conflicts**

MARIA PETROSYAN

*Brusov State University*

In the processes of conflict resolution based on self-determination, the resumption of hostilities has acquired a special key importance. This is happening on the initiative of Metropolia and indicates that the latter is ready even for war crimes in order to preserve or oust a self-determining nation from its composition. For this reason, this period is the most favorable for the recognition of independence, since there are substantive grounds to assert that the alternative to self-determination is the genocide of a self-determining people. Nevertheless, despite this, The acceleration of the recognition process is not an unconditional consequence of the resumption of hostilities. To find out what additional factors influence the acceleration of the recognition process after the cessation of resumed hostilities, the article examines 5 cases of self-determination conflict when there was a resumption of hostilities, and then they were stopped. In order to identify the causes of further development, regulatory processes with different outcomes are considered based on 10 factors.